






ՌՆԲ

Ժ. ՏԱՅՐԻ

Եւրպ

ԵՄԻԱՇԻՆ

ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՒՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱՇԻՆԻ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կառավարական հաղորդագրություն ՍՍՌՄ Մինիստրների Սովետի նախագահ և ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի Գաղտնիքի Ի. Վ. Ստալինի հիվանդության մասին	3
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ շրջաբերական հեռագիրը Սովետական Միության բեմական առաջնորդներին՝ ՍՍՌՄ Մինիստրների Սովետի նախագահ Ի. Վ. Ստալինի հիվանդության առթիվ	5
ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի, ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և ՍՍՌՄ Գերագույն Սովետի նախագահության կողմից՝ պարտիայի բոլոր անդամներին, Սովետական Միության բոլոր աշխատավորներին	6
ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի որոշումը Ի. Վ. Ստալինի առջևից ամփոփող սարկոֆագի տեղի մասին	9
ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի որոշումը Սովետական երկրի մեծ մարզկանց հավերժ փառքի հուշարձան՝ պանթեոն կառուցելու մասին	9
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ցավակցական հեռագիրը ՍՍՌՄ Մինիստրների Սովետին՝ ՍՍՌՄ Մինիստրների Սովետի նախագահ Ի. Վ. Ստալինի մահվան առթիվ	11
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ շրջաբերական հեռագիրը Սովետական Միության և Ափյոտի բեմական առաջնորդներին՝ ՍՍՌՄ Մինիստրների Սովետի նախագահ Ի. Վ. Ստալինի մահվան առթիվ	12
ԽՄԲԱԳՐՈՒԿԱՆ.— Հավերժ փառք Ի. Վ. Ստալինին	13
ՊՐՈՑ. Հ. ԱՅՆԱՅՆ.— Իմ էլ խոսքը	17
ԱՎ. ԽՍՀԱՎԱՅԱՆ.— Մեր սիրելի առաջնորդը մեզ հետ է	17
Գ. ՂԱՓԱՆՅԱՆ.— Մաքի տիտանը	18
ԱՂԱՎՆԻ ՄԵՍՐՈՊԱՆ.— Հավերժ փառք Ստալինի հիշատակին	19
ԴՈՒՍ. Լ. ԱԼԹՈՒՆՅԱՆ.— Ստալինը առհասարակ է	20
ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ.— Վշտի խոսք (բանաստեղծություն)	21
ՓԱՅԼԱԿ ՄԻՆՆԱՆ.— Հաճախող սիրտը (բանաստեղծություն)	22
ՔԱՋԻԿ ՍԱՐԿԱՎԱԳ ԳԵՈՐԳՅԱՆ.— Համաժողովրդական վիշտը	23
ՌՈՒԹԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ.— Մայր Աթոռը սգում է	27
Ս. ՄԵԼԻՔ-ԽԱՅԱՏՐՅԱՆ.— Հայ ժողովրդի սգո օրերը	31
ՄԱՅՐ Ա. ՌՈՒՆԻՍ.—	35
ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ.— Աշխատավորների դեպուտատների տեղական Սովետների բեմությունները	37
Հ. ԱՐԱՄՅԱՆ.— Մեր Հայրենիքի լավագույն ուղիների և դուստրերի շարքում	40
ՍՈՒՆ ԵՊԻՍԿՈՓՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ.— Ողջույնի խոսք	48
ՊՐՈՑ.-ԴՈՒՍ. Ա. ԱՐՍՈՂԱՄՅԱՆ.— Գավիթ Ալավկա որդու կանոնները	51

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԾԻ, ԷՋՄԻՍՄԻՆ

«ԷՋՄԻՍՄԻՆ» ՍՍՍՍՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Ереванская, Редакция журнала «Ечмиадзин»


Redaction of the magazine „Echmiadzin“, Echmiadzin, Armenia, USSR

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. ԳԵՈՐԳԱՅ Զ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐՔԱՋՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՂՈՐԴԵԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԵՎ ԱՄԿՊ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱՆԻՆԻ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և ԱՍՌ Միության Մինիստրների Սովետը հաղորդում են մեր պարտիային և մեր ժողովրդին պատահած դժբախտության՝ ընկեր Ի. Վ. Ստալինի ծանր հիվանդության մասին:

Մարտի լույս 2-ի գիշերը, երբ ընկեր Ստալինը գտնվում էր Մոսկվայում՝ իր քնադառնում, նրա հետ տեղի ունեցավ աղյուսագեղում ուղեգում, որը բնորոշեց ուղեղի՝ կյանքի համար կարևոր մասերը: Ընկեր Ստալինը կորցրեց գիտակցությունը: Առաջացավ աչքի և ռտֆի կաթված: Վրա հասավ խոսելու և ընթանակության կորուստ: Երևան եկան սրտի և շնչառության զործուհեության ծանր խանգարումներ:

Ընկեր Ստալինին բուժելու համար ներգրավված են բժշկական լավագույն ուժեր՝

Պրոֆեսոր-բերապետ Պ. Ե. Լուկոմսկին, ՍՍՌՄ Բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամներ՝ պրոֆեսոր-ենդոպարոլոգ Ն. Վ. Կոնովալովը, պրոֆեսոր-բերապետ Ա. Լ. Մյասնիկովը, պրոֆեսոր-բերապետ Ն. Մ. Տաբերը, պրոֆեսոր-ենդոպարոլոգ Ի. Ն. Ֆիլիմոնովը, պրոֆեսոր-ենդոպարոլոգ Ռ. Ա. Տկաչը, պրոֆեսոր-ենդոպարոլոգ Ի. Ս. Գլազունովը, զոցենո-բերապետ Վ. Ի. Իվանով-Նեզնամովը: Ընկեր Ստալինի բուժումը կատարվում է ԱՍՌՄ Առողջապահության մինիստր ընկ. Ա. Ֆ. Տրետյակովի և Կրեմլի Բուժ-Սանիտարական Վարչության պետ ընկ. Դ. Ի. Կուպերինի ղեկավարությամբ:

Ընկեր Ստալինի բուժումը կատարվում է ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի և Սովետական Կառավարության մշտական հսկողությամբ:

Նկատի ունենալով ընկեր Ստալինի առողջության ծանր վիճակը, ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեն և ԱՍՌ Միության Մինիստրների Սովետը անհրաժեշտ համարեցին այսօրվանից սահմանել Խոսքի Վիսսարիոնովիչ Ստալինի առողջության վիճակի վերաբերյալ բժշկական քյուլետենների հրապարակում:



Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և ՍՍՌ Միության Մինիստրների Սովետը, ինչպես և մեր ամբողջ պարտիան, մեր ամբողջ սովետական ժողովուրդը գիտակցում են այն փաստի ամբողջ նշանակությունը, որ ընկեր Ստալինի ծանր հիվանդության հետևանքով եա ֆիչ քե շատ երկար ժամանակ չի մասնակցի ղեկավար գործունեության:

Կենտրոնական Կոմիտեն և Մինիստրների Սովետը պարտիայի ու երկրի ղեկավարման գործում ավելայն լրջությամբ հաշվի են առնում այն բոլոր հանգամանքները, որ կապված են պետական ու պարտիական ղեկավար գործունեությունից ընկեր Ստալինի ժամանակավոր հեռանալու հետ:

Կենտրոնական Կոմիտեն և Մինիստրների Սովետը վստահություն են հայտնում, որ մեր պարտիան և ամբողջ սովետական ժողովուրդը այս դժվարին օրերին կցուցաբերեն մեծագույն միասնություն ու համախմբվածություն, ոգու ամրություն և զգոնություն, կկրկնապատկեն իրենց եռանդը մեր երկրում կոմունիզմի կառուցման գործում, է՛լ ավելի սերտորեն կհամախմբվեն Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի և Սովետական Միության Կառավարության շուրջը:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ
ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏ

3 Վարտի, 1953 թվականի





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ՝
ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻԶ ՍՏԱԼԻՆԻ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Ս. Էջմիածնի միաբանությունը, ճեզևոր դասը և հավատացյալ ժողովուրդը սրտի խորին վշտով լսեցին պաշտոնական հաղորդումը Սովետական Միության Միճխտոնների Խորհրդի Նախագահ՝ Գեներալխսսիմոս Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի անակնկալ լուրջ հիվանդության մասին:

Հրաճանգվում է Ջեզ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի՝ հայ ժողովրդի լավագույն բարեկամի, ազատարարի և հովանավորողի ապափինման համար մատուցանել սուրբ պատարագ և կառարել առողջության մաղթանք:

ԳԵՈՐԳ. Զ.

ԵԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ԵՎ ՍՍՌ ՔԵՐԸԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ՝

**ՊԱՐՏԻԱՅԻ ԲՈՂՈՐ ԱՆԿԱՄՆԵՐԻՆ, ՍՈՎԵՏԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՐ ԱՅԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ**

ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ ԵՎ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ:

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն, ՍՍՌ Մինիստրների Սովետը և ՍՍՌ Քերական Սովետի Նախագահությունը մեծ վշտի զգացմունքով պարտիային և Սովետական Միության բոլոր աշխատավորներին հայտնում են, որ մարտի 5-ին, երեկոյան ժամը 9-ից 50 րոպե անց, ծանր հիվանդությունից հետո վախճանվեց ՍՍՌ Միության Մինիստրների Սովետի Նախագահ և Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի Քարտուղար Իոսիֆ Վիսսարիոնովիչ ՍՍԱԼԻՆ:

Դադարեց բաբախելուց Լենինի գլխակից և նրա գործի հանճարեղ շարունակող, Կոմունիստական պարտիայի և սովետական ժողովրդի իմաստուն առաջնորդ և ուսուցիչ Իոսիֆ Վիսսարիոնովիչ ՍՍԱԼԻՆի սիրտը:

ՍՍԱԼԻՆի անունը անսահմանորեն բանկ է մեր պարտիայի համար, սովետական ժողովրդի համար, ամբողջ աշխարհի աշխատավորների համար: Լենինի հետ միասին ընկեր ՍՍԱԼԻՆը ստեղծեց Կոմունիստների հզոր պարտիան, դաստիարակեց և կոպեց նրան: Լենինի հետ միասին ընկեր ՍՍԱԼԻՆը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի ոգեշնչող և առաջնորդ էր, աշխարհում առաջին սոցիալիստական պետության հիմնադիրը: Շարունակելով Լենինի խնամք գործը, ընկեր ՍՍԱԼԻՆը սովետական ժողովրդին հասցրեց մեր երկրում սոցիալիզմի համաշխարհային-պատմական հաղթանակին: Ընկեր ՍՍԱԼԻՆը մեր երկիրը հաղթանակի հասցրեց ֆաշիզմի դեմ երկրորդ համաշխարհային պատերազմում, որ արմատապես փոխեց ամբողջ միջազգային իրադրությունը: Ընկեր ՍՍԱԼԻՆը պարտիային և ամբողջ ժողովրդին գիեց ՍՍՌ-ում կոմունիզմի կառուցման մեծ ու հստակ ծագրով:

Իր ամբողջ կյանքը կոմունիզմի մեծ գործին անձնվիրաբար ծառայելուն նվիրաբերած ընկեր ՍՍԱԼԻՆի մահը ամենամեծ կորուստ է պարտիայի, Սովետական երկրի և ամբողջ աշխարհի աշխատավորների համար:

Ընկեր ՍՍԱԼԻՆի մահվան լուր խոր կսկիծով կարճազանքի մեր Հայրենիքի բանվորների, կոլեկտիվիստների, ինտելիգենտների և բոլոր աշխատավորների սրտերում, մեր քաղաքի Բանակի և Ռազմա-Մովային Նավատորմի ռազմիկների սրտերում, աշխարհի բոլոր երկրների միլիոնավոր աշխատավորների սրտերում:



Այս վշտալի օրերին մեր երկրի բոլոր ժողովուրդները է՛լ ավելի սերտորեն են համախմբվում եղբայրական մեծ ընտանիքում՝ Լենինի և Ստալինի ստեղծած ու դաստիարակած Կոմունիստական պարտիայի փորձված ղեկավարությամբ:

Սովետական ժողովուրդը անբաժանելի վստահությամբ է տածում և թեմ ուրիշ է համակված իր նարագատ Կոմունիստական պարտիայի նկատմամբ, որովհետև նա գիտե, որ պարտիայի ամբողջ գործունեության բարձրագույն օրենքը ժողովրդի շահերին ծառայելն է:

Մեր երկրի բանվորները, կոլտեխնիկները, սովետական ինտելիգենտները, բոլոր աշխատավորները անշեղորեն հետևում են մեր պարտիայի մշտական բաղաձայնությանը, որը ճառագատախանում է աշխատավորների կենսական շահերին, ուղղված է մեր սոցիալիստական Հայրենիքի հզորության հետագա ուժեղացման նպատակին: Կոմունիստական պարտիայի այդ բաղաձայնության հշտությունը ստուգված է պայքարի տասնամյակներով, այն Սովետական երկրի աշխատավորներին հասցրել է սոցիալիզմի պատմական հաղթանակներին: Ոգեշնչված այդ բաղաձայնությամբ, Սովետական Միության ժողովուրդները պարտիայի ղեկավարությամբ վստահորեն առաջ են ընթանում դեպի մեր երկրում կոմունիստական շինարարության նոր հաջողություններ:

Մեր երկրի աշխատավորները գիտեն, որ բնակչության բոլոր խավերի՝ բանվորների, կոլտեխնիկների, ինտելիգենտների նշարական բարեկեցության հետագա բարելավումը, ամբողջ հասարակության նշարական և կոլտեխնիկական վշտալի անող պահանջմունքների առավելագույն բավարարումը միշտ հանդիսացել է և հանդիսանում է Կոմունիստական պարտիայի և Սովետական Լուսավարություն հատուկ հոգատարության առարկան:

Սովետական ժողովուրդը գիտե, որ Սովետական պետության պաշտպանության հոգությունը և հզորությունը աճում ու ամրապնդվում են, որ պարտիան ամեն կերպ ամրապնդում է Սովետական Ռեակը, Ռազմա-Մոկային Նավատորմը և հետախնդության օրգանները, որպեսզի շարունակ բարձրացնի մեր պատրաստականությունը՝ ամեն ագրեսորի խորտակիչ հորված տալու համար:

Կոմունիստական պարտիայի և Սովետական Միության Կառավարության արտաքին բաղաձայնությունը եղել է և հանդիսանում է խաղաղության պահպանման ու ամրապնդման համար, նոր պատերազմի ճախարպատաստման ու սանձազերծման դեմ մղվող պայքարի անհողողող բաղաձայնություն, միջազգային համագործակցության և բոլոր երկրների հետ գործառար կապերի զարգացման բաղաձայնություն:

Սովետական Միության ժողովուրդները, հավատարիմ պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրաշին, ամրապնդում և զարգացնում են եղբայրական բարեկամությունը չին մեծ ժողովրդի հետ, ժողովրդական դեմոկրատիայի բոլոր երկրների աշխատավորների հետ, բարեկամական կապեր կապիտալիստական ու գաղութային երկրների աշխատավորների հետ, որոնք պայքարում են խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի գործի համար:

Թանկագին բնկերներ և բարեկամներ:

Կոմունիզմի կառուցման համար մղվող պայքարում սովետական ժողովրդի ուղղություն տվող, ղեկավար մեծ ուժը մեր Կոմունիստական պարտիան է: Պարտիայի շարքերի պոլպատե միասնությունը և միանույն համախմբվածությունը մեր ուժի ու հզորության գլխավոր պայմանն են: Մեր խնդիրն է՝ աչի՛ լույսի պես պահպանել պարտիայի միասնությունը, կոմունիստներին դաստիարակել

որպես պարտիայի ֆաղափականության և որոշումների կենսագործման համար ակտիվ ֆաղափական մարտիկներ, է՛լ ավելի ամրապնդել պարտիայի կապերը բոլոր աշխատավորների հետ, բանվորների, կոլտնտեսականների, ինտելիգենցիայի հետ, ռուվհետև ժողովրդի հետ այդ անխզելի կապի մեջ է մեր պարտիայի ուժն ու անպարտելիությունը:

Պարտիան իր կարևորագույն խնդիրներից մեկը տեսնում է այն բանում, որպեսզի կոմունիստներին և բոլոր աշխատավորներին դաստիարակի ֆաղափական բարձր զգեստության ոգով, ներքին ու արտաքին թշնամիների դեմ մղվող պայքարում անհաշտության և հաստատակամության ոգով:

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն, ՍՍՌ Միության Միենիստրների Սովետը և ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը, այս վշտալի օրերին զիմելով պարտիային և ժողովրդին, հաստատ վստահություն են հայտնում, որ պարտիան և մեր Հայրենիքի բոլոր աշխատավորները է՛լ ավելի սերտորեն կհամախմբվեն Կենտրոնական Կոմիտեի և Սովետական Կառավարության շուրջը, կմոքիլիզացնեն իրենց բոլոր ուժերը և ստեղծագործական հռանդը մեր երկրում կոմունիզմի կառուցման մեծ գործի համար:

ՍՍԱՀԽՆԻ անմահ անունը ընդմիշտ կապրի «ովետական ժողովրդի և ամբողջ պրոգրեսիվ մարդկության սրտերում:

Կեցցե՝ Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի մեծ, ամենահաղթ մարտունակը:

Կեցցե՝ մեր հզոր սոցիալիստական Հայրենիքը:

Կեցցե՝ մեր հերոսական սովետական ժողովուրդը:

Կեցցե՝ Սովետական Միության մեծ Կոմունիստական պարտիան:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ,
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ
ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏ

ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

5 մարտի, 1953 թվականի





ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՋ ՍՏԱԼԻՆԻ ԱՃՅՈՒՆՆ
ԱՄՓՈՓՈՂ ՍԱՐԿՈՅԱԳԻ ՏԵՂԻ ՄԱՍԻՆ

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կո-
միտեն և ՍՍՌ Միության Մինիստրների Սովետը որոշում են՝

Ի. Վ. Ստալինի անյունն ամփոփող սարկոֆագը դնել Կառմիր ճրագա-
րանի դամբարանում, Վ. Ի. Լենինի սարկոֆագի կողքին:

ՍՄԿՊ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԿՈՄԻՏԵ

ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ

ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏ



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԵՐԿՐԻ ՄԵԾ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՎԵՐԺ ՓԱՌՔԻ
ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ ՊԱՆԹԵՈՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կո-
միտեն և ՍՍՌ Միության Մինիստրների Սովետը որոշում են՝

Մեծ առաջնորդներ Վլադիմիր Իլյիչ Լենինի և Իոսիֆ Վլասարիոնովիչ
Ստալինի, ինչպես նաև Կոմունիստական պարտիայի ու Սովետական պետու-
թյան՝ Կառմիր ճրագարանում Կրեմլի պարսպի մոտ բաղկած ականավոր
գործիչների հիշատակը հավերժացնելու նպատակով Մոսկվայում կառուցել


մոնոպոլիստալ շենք՝ պանթեոն — Սովետական երկրի մեծ մարդկանց հավերժ փառքի հուշարձան:

Պանթեոնի կառուցումն ավարտելուց հետո այնտեղ փոխադրել Վ. Ի. Լենինի սարկոֆագը և Ի. Վ. Ստալինի սարկոֆագը, ինչպես նաև Կոմունիստական պարտիայի ու Սովետական պետության՝ Կրեմլի պարսպի մոտ քաղված ախանավոր գործիչների անյուրնները և Պանթեոնի մուտքը բացել աշխատավորների լայն մասսաների համար:

**ՍՄԿՊ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵ**

**ՍՍՈՒ ՄԻՈՒԹՅԱՆ
ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏ**





ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ
ՍՍԹ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ՝
ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻ
ՄԱՀԱՆ ԱՌԹԻՎ

Առվետական Միության Մյնիստրների Խորհրդի նախագահ՝ Գեներալ-խոսիմուս Խոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի մահը անխղիւղորէն խորուստ է համայն մարդկության և Առվետական Միության ու նորա բազմաթիվ ազգայնութիւնների համար: Ի դեմս Հանգուցյալի՝ մարդկությունը կորցնում է մի ճշմարիտ մարգասեր անձն, որ, իր վարած խաղաղասէր քաղաքականությամբ և խաղաղության գաղափարի պաշտպանությամբ ու դեկլարությամբ, ձրգտում էր ստեղծել ազգայնութիւնների միջև եղբայրություն ու համերաշխություն, պետությունների միջև՝ համագործակցություն, նպատակ ունենալով մարդկությունը աղետներից և աշխարհը ավերից գերծ պահել և հաստատուլ այնտեղ երջանիկ կյանք:

Ի դեմս Հանգուցյալի՝ Առվետական Միությունը կորցնում է իր հանճարեղ առաջնորդին, որ, իր կյանքի գնով և նվիրված անգուլ աշխատանքի շնորհիվ, զարգացնելով երկրի կուլտուր-կրթական, տնտեսական և տեխնիկական կյանքն ու զորացնելով նորա զինական ույժը, բարձրացրեց Պետության ճեղինակությունն ու արժեքը և դարձրեց նորան աշխարհի ամենաառաջնակարգ Պետությունը: Առվետական Միության դաշնակից պետությունների ու ազգայնութիւնների միջև հաստատելով բարյացակամ ու եղբայրական հարաբերություն և համագործակցություն և աջակցելով նոցա տնտեսապես, զարգացրեց նոցա կուլտուրապես, զորացրեց տնտեսապես և երջանիկ դարձրեց:

Ի դեմս Հանգուցյալի՝ կորցրեց մանավանդ հայ ժողովուրդը իր ճշմարիտ բարեկամին ու պաշտպանին, որի շնորհիվ հայ ժողովուրդը ավերակներից հարություն առավ, իր պատմական իղծին հասավ՝ պետական ազգ դարձավ և իր կուլտուրական ու տնտեսական զարգացմամբ և արդյունաբերությամբ այսօր իր բարգաւաճման ու վերելքի բուռն շրջանն է ապրում 16 հազարաւոր դաշնակից առվետական պետությունների շարքում:

Հայ հեղափոխականությունն ու հայ հավատացյալ ժողովուրդը ամնոռանալի Հանգուցյալի դազադի առաջ հրապարակով հայտնում են իրենց խորին երախտագիտական զգացմունքը՝ ուխտելով նորա անունն ու հիշատակը ընդմիշտ անմոռաց պահել իրենց սրտերում:

ԳԵՌՐԳ Զ.

ԵԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԼՏՐԻԱՐԸ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՃՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՓՑՈՒԹՔԻ
ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԳԻՆԵՐԻՆ՝
ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻԶ ՍՏԱԼԻՆԻ
ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ**

Խորին վշտով համակված հաղորդում ենք Սովետական Միության Մի-
նիստրների Խորհրդի նախագահ՝ Գեներալիսսիմոն Իոսիֆ Վիսսարիանովիչ
Ստալինի անակնկալ մահը:

Ի դեմս Հանգուցյալի, հայ ժողովուրդը կորցրեց իր ճշմարիտ բարեկամին
ու պաշտպանին և իր պատմական իդիլի իրագործողին, իսկ համայն մարդ-
կայունը՝ մի մարդասեր անձն, որ իր պետական գործունեության շրջանում,
իր վառած խաղաղասեր քաղաքականությամբ և խաղաղության գաղափարի
պաշտպանությամբ ու դիվալարությամբ, չանք չսնայեց աշխարհը ավերից,
մարդկայունը աղետներից ու ժառանգանքից զերծ պահելու և մարդկային
կյանքը երջանիկ դարձնելու համար:

Առաջարկում ենք Հանգուցյալի ճիշատակին մատուցանել սուրբ պատա-
հազ և կառուրել հոգեհանգիստ:

Գ Ե Ո Ր Գ Զ.

**ՇԱՅՐԱԳՈՒԹՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**





Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՎԵՐԺ ՓԱՌԻՔ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻՆ

«Մանկանացու ծննալ՝ անմահ գիրն յիշատակ եքոզ»:

ԽՈՐԵՆԱՅԻ

1953 թվականի մարտի 5-ին, երեկոյան ժամը 9-ից 50 րոպե անց, Մոսկվայում, ծանր հիվանդությունից հետո վախճանվեց Սովետական Միության ժողովուրդների իմաստան առաջնորդ, աշխարհի առաջավոր մարդկության սիրելի ուսուցիչ Խոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինը:

Դադարեց բաքախելուց սիրտը մի մարդու, որն իր ո՛ղջ կյանքը, բոլո՛ր ուժերը, բոլո՛ր բնորոշությունները, իր ամբողջ աշխույժ կաթիլ առ կաթիլ նվիրաբերել է մարդկային հասարակությանը դեպի երջանկություն և բարություն առաջնորդելու վեճ գործին:

Ի. Վ. Ստալինը իր վաղ պատանեկան հասակից, նպատակ է դնում իր առև՝ պայքարել աշխարհի անարդարությունների դեմ, սրբել հարստահարվող մարդկության աչքի արցունքները և ստեղծել այնպիսի մի հասարակություն, ուր մարդը չլռահագործի մարդուն և ուր մարդիկ ապրեն երջանիկ և բարձր կյանքով: Կողքաճարելով ցարական ղեկավարության պայմաններում ստեղծված բոլոր տեսակի դժվարություններ՝ հետապնդում, բանտ, աքսոր, պողպատյա կամփ ռենցոյա մարդը, անվառան, աշխատավորներին առաջնորդում է գեպի ազատություն:

Ի. Վ. Ստալինը, անմահ Վ. Ի. Լենինի հետ, գլխավորում է աշխատավորության գրոհը ցարական կառավարության դեմ, տապալում այն՝ իրագործելով միլիոնավոր հարստահարվողների երազանք՝ ստեղծելու աշխատավորության առաջին պետությունը՝ Սովետական իշխանությունը:

Լենինի մահից հետո Ի. Վ. Ստալինը գլխավորեց Սովետական Միությունը՝ սովետական ժողովուրդներին առաջնորդելով անհախճեթաց հաջողությունների: Նրա անմիջական ղեկավարությամբ վերականգնվեց առաջին աշխարհավեր համաշխարհային պատերազմի և քաղաքացիական կռիվների ընթացքում բարոյաճող եղած երկիրը: Նրա ղեկավարությամբ ստեղծվեց ժամանակակից բարձր ինդուստրիայով և առաջավոր տեխնիկայով հագեցված գյու-

դատնետություն: Նրա ղեկավարությամբ միլիոնավոր աշխատավորներ և նրանց զավակները կրթվեցին և կրթվում են մեր դարացիներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում: Եվ, վերջապես, նրա ղեկավարությամբ Սովետական Միությունը դարձավ աշխարհի ամենահզոր և ամենաառաջադեմ երկրներից մեկը:

Մեծ է Ի. Վ. Ստալինի դերը նաև ազգային հարցում՝ թե՛ որպես տեսաբան և թե՛ որպես ժողովուրդների եղբայրությունը գործնականում կերտող: Ցարական Ռուսաստանում ճնշվող փոքր ազգությունները ո՛չ միայն ձեռք բերեցին իրենց կատարյալ ազատությունը նախկին ժողովուրդների բանտացից, այլև եղբայրական ռուս ժողովրդի գործունե օգնությամբ վերացրին իրենց տրեմտեսական և կոլտուրական հետամնացությունը: Ստալինի անունը բոլոր ճնշված ժողովուրդների ազգային ազատագրության, անկախության պայքարի մեծ դրոշակակրի պայծառ անունն է՝ իբրև մարդկային ամենանվիրական ձգտումների արտահայտիչն ու մարմնացումը: Ոչ միայն սովետական ժողովուրդը, այլև ամբողջ չլրագրեսիվ մարդկությունը, խորը և ամենավսեմ զգացմունքներով են կապվել Ի. Վ. Ստալինի հետ:

Հանդիսանալով խոշոր տեսաբան՝ պատմության զարգացման օրինաչափությունների իմացության գործում և միաժամանակ հանճարեղ կազմակերպիչ, Ի. Վ. Ստալինը կարողացավ տասնյակ տարիներ Սովետական Միության կառավարության ղեկը իմաստությամբ վարել՝ անվտանգ նրան առաջնորդելով բազմաթիվ և րազմապիսի դժվարությունների միջից: Հիշենք՝ թեկուզ ֆաշիզմի նենգագործ հարձակումը Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների և Սովետական Միության վրա: Սովետական ռազմական ուժերը, Ի. Վ. Ստալինի գլխավորությամբ, ո՛չ միայն կազմակերպեցին պատշաճ հակահարվածը ագրեսորի դեմ, այլև աջակցեցին թուրքափելու ֆաշիզմի լուծը Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների վրայից:

Հետպատերազմյան տարիներին, ինչպես և դրանից առաջ, Ի. Վ. Ստալինը հանդիսացել է խաղաղության դրոշակակիրը: Նա իր սխանչելի կյանքը նվիրել էր մարդկությանը բնաջնջող պատերազմից փրկելու վսեմ գործին. «Նրանի՞ խաղաղաբարաց, զի ճոխ առգի՜ր Աստուծոյ կոչեացին»: Այսօր աշխարհում խաղաղության պահպանման գործը ո՛չ միայն սովետական ժողովրդի նվիրական ձգտումն է, այլ ողջ առաջադեմ մարդկության, որը վճռականորեն պայքարում է պատերազմի հրձիգների դեմ: Խաղաղությունը պահպանելու և ամրապնդելու Ստալինյան կամքը այսօր, վշտի այս օրերին, ավանդ է մնում խաղաղասեր ժողովուրդներին, որոնք անշեղորեն կզնան դեպի խաղաղության վերջնական նվաճումը. «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԿՊԱՀՊԱՆՎԻ ԵՎ ԿԱՄՐԱՊԱՆՎԻ, ԵԹԵ ԺՈՂՈՎՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԸ ՎԵՐՅՆԵՐ ԻՐԵՆՑ ԶՆՈՒՐ ԵՎ ԱՅՆ ՊԱՀՏՊԱՆՆԵՆ ՄԻՆՁԵՎ ՎԵՐՋ»: Հարգելով մեծ Ստալինի պայծառ հիշատակը, աշխարհի խաղաղասեր ժողովուրդները, սովետական ժողովրդի հետ միասին կկատարեն նրա այս մեծ պատգամը, կպաշտպանեն խաղաղությունը ողջ աշխարհում:

Մեծ է եղել Խոսի՜ք Վիսսարիոնովիչ Ստալինի երախտիքը նաև հայ ժողովրդի նկատմամբ: Նա հանդիսացել է հայ ժողովրդի փրկիչը և հավանավորաբար՝ Մեր երախտագետ ժողովուրդը երբե՛ք չի մոռանա, որ իր պատմության ամենածանր ու ողբերգական շրջանում, սրանից մոտ 30 տարի առաջ, երբ ռախարգում ձգվել էր մեր բռնամիտների կողմից հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման արյունոտ ծրագիրը, երբ հայ աշխատավոր ժողովուրդը, դավա-

նանված ու վաճառված՝ իր գրառեկամներէից, «ազգային տխրահռչակ փրկիչներէից, հասել էր կործանման անդունդի եզրին, այդ տագնապալի և ծանր օրերին հնչեց Ի. Վ. Ստալինի բարեկամական և փրկարար ձայնը. «Ինչ Գնդկ Էլ Լինի՝ Պե՛ՏՔ է ՓՐԿՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԸ եւ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴՈՒՄ»:

Ու ո՛չ միայն փրկվեց հայ ժողովուրդը մեծագույն աղետից՝ ֆիզիկական բնաջնջումից, այլև ձեռք բերեց իր ազատ գոյութեան իրավունքը, պետականությունը՝ դառնալով Սովետական Միության մեծ բնութանիքի իրավահավասար անդամը: Ի. Վ. Ստալինի դառնակսկիծ մահով, գրում է Վենափառը իր ցավակցական հեռագրում, «Հայ ժողովուրդը կորցրեց իր ճշմարիտ բարեկամին ու պաշտպանին, որի շնորհիվ հայ ժողովուրդը ավերակներից հառաքյուն առավ, իր պատմական իղծին հասավ՝ պետական ազգ դարձավ և իր կուստուրական ու տնտեսական զարգացմամբ և արդյունաբերությամբ այսօր իր բարգավաճման ու վերելքի բոտն շրջանն է ապրում 16 հավասար դաշնակից սովետական պետությունների շարքում»:

Արդարև, «ՄԻՍՏՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՆԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԲԵՐԻՑ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱՄՆԵՆԻ ԶՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ» (ՍՍՍՏԻՆ):

Սովետական կենսաբեր արևի տակ անեց, բարգավաճեց երբեմնի խեղճ, երբեմնի հայաժական բազմաշաղաք հայ ժողովուրդը: Գաղթականների և որբերի նախկին փառամեղ երկիրը, իր գոյության 30 տարում, դարձավ Սովետական Միության ծաղկուն ռեսպուբլիկաներից մեկը: Հայ ժողովրդի պատմության վերջին երեսնամյակում ձեռք բերված բոլոր հաջողությունները՝ արվեստի, գրականության, արդյունաբերության, գյուղատնտեսության մեջ և այլ ասպարեզներում, սերտորեն կապված են մեծ Ստալինի անվան և նրա հայրական ամենօրյա հոգատարության հետ:

Ի. Վ. Ստալինին երախտապարտ է եսև մեր Սփյուռքի հայությունը: Դեռևս 1945 թվականին, երբ նոր էր երկիրը դուրս եկել Համաշխարհային երկրորդ պատերազմից, երբ պատերազմի թողած վերերը դեռ չէին ապաքինված, ստորագրվեց պատմական նշանակալից այն հրամանը, որով թույլ էր չտրվում Սփյուռքի հայերին տեղափոխել իրենց Հայրենիք՝ վերջ գնելով իրենց բափառական վիճակին:

Ի. Վ. Ստալինը բարյացակամ վերաբերմունք է ունեցել եսև Հայաստանյայց՝ նկեղեցու նկատմամբ: Այն փաստը, որ եւս բնդունեց նորին Ս. Օծոթյուն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսին, ուշադիր ունկնդրեց Հայոց նկեղեցու Հայրապետի (այն ժամանակ դեռևս Արքեպիսկոպոս, Կաթողիկոսական Տեղալի) առաջարկած հարցերին և արեց որոշ բնդատումներ, պերնախոս վկայում է նրա լայնախոհությունը, Հայրենիքի հանդեպ շիտակ դիրս ունեցող կազմակերպության նկատմամբ հովանավորություն ցույց տալու բարյացակամ վերաբերմունքը:

Այս վշտալի օրերին, Հայաստանյայց Առաքելական Սուրբ նկեղեցին, հայ երախտագետ ժողովրդի հետ միասին, ամենախոր հարգանքով խոնարհվում է իր մեծ բարեկամի, ազատարարի սուրբ հիշատակի առաջ: Հայաստանյայց Առաքելական Սուրբ նկեղեցին, հայ հավատացյալ ժողովրդի հետ, իր Դերագույն Պետի՝ Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի զլխավորությամբ, այսօր, խորը վշտով բաժանում է սովետական ժողովուրդների և ամբողջ աշխարհի աշխատավորության ամենածանր վիշտը, կորուստը, հաճեին Ի. Վ. Ստալինի մահվան:


Մենք է՛ն Սոսկեռական Միության և ողջ աշխարհի աշխատավորության վիշտը, անգարմանելի՛ կորուստը: Բայց վիշտը մարդկանց զգոնացնում է, համախմբում, ամրապնդում. վշտի ու տառապանքի մեջ մարդիկ նոր ուժ և փայլություն են գտնում՝ անավարտ մնացած գործը շարունակելու համար: Սոսկեռական ժողովուրդը իր մենք վիշտը այս օրերին վերածում է մենք ուժի:


Մանացածնեքի վրա անհուսոհեն լացը դառապարտում է և Հայաստանյայց Առաքելական եկեղեցին: Ի. Վ. Ստալինը ֆիզիկապես է բաժանվել իր ժողովրդից, բայց ոգով նրա հետ է, աշխարհի հետ է: Նրեկ նա իր ժողովրդի հետ էր, նրա աշխատանքի խաղաղ բապեններում, նրա մարտերում, նրա հավատքիցներում, նրա հանգստի ժամերին: Այսօր նա ժողովրդի սրտերումն է. նա ժողովրդի հետ է ամեն տեղ՝ ուր եռում է սոսկեռական փառափայլության ստեղծագործ աշխատանքը, ուր պայքար է գնում հանուն խաղաղության ողջ աշխարհում:

Ստալինը չի մեռել. կարելի՛ է միթե արևը բաղել, արգարությունը, իրավունքը, ճշմարտությունը, խիղճը գերեզմանել: Նա մարդկության խիղճն էր, պատիվը, նա անմահ է ինչպես ժողովուրդը:

Հարյուր միլիոնավոր մարդկանց սրտերում, այգ թվում և հայ ժողովրդի երախտազեա սրտում, միջոց պայծառ ու վառ կմնա խաղաղության մեծ դրոշակակիր, ճեշված և իրավագուրկ ժողովուրդների բարեկամ և ազատաճար անմահ Ի. Վ. Ստալինի պայծառ կերպարը:

Հավերժ փա՛ռք և բյո՛ւր օրհնություն նրա անմահ հիշատակին:





ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ Ի. Վ. ՄՏԱԼԻՆԻ ՄԱՅՎԱՆ ԱՌԹԻՎ

ՊՐՈՖ. Զ. ԱՃԱՌՏԱՆ

(Հայկական ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի իսկական անդամ)

ԻՄ ԷԼ ԽՈՍՔԸ

Շատերը խոսեցին, շատերը գրեցին, ես էլ ասում եմ իմ սրտի խոսքը Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի վշտալի մահվան առթիվ։

Մենք, լեզվաբանական գիտության համեստ հետևորդներս, ստեղծագործական լայն ուղու վրա կանգնեցինք այն օրից, երբ գիտության կորիֆեյ հանճարեղ Ստալինը ջախջախեց մահական սխալաստիկան և գիտական նոր լեզվատրամբյուրը գիտության դահի վրա դրավ։ Ամենքս էլ երախտապարտ ենք իրեն։

Ես իմ երախտագիտական պարտքս հատուցանելու գիտումով, իմ կյանքի յոթանասուն յոթ տարիների պտուղը՝ կիսկատար Քերականությունը ձոնեցի իրեն։ Անշուշտ այս համեստ ձոնս ոչ մի ճառագայթ չպիտի ավելացնեի իր անվան, քայց իր անվան հիշատակությունը դափնյա պսակ պիտի լինի իմ գրքի 12 հատորների ճակատին, իբրև անջրջելի հիշատակ իմ երախտագիտական զգացմունքների։

ԱՎ. ԻՍԱՀԱԿՑԱՆ

(Հայկական ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի իսկական անդամ)

ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ ՄԵՋ ՇԵՏ Է

Մեր մեծ և հանճարեղ ընկեր Ստալինի կուրուստը ամբողջ Սովետական Միությանը, ամբողջ աշխարհի աշխատավոր և պրոլետարիատային ժողովրդային ձգեց խոր վշտի մեջ։

Ոչ միայն լեզու կարող հաշտվել զարհուրելի փաստի հետ, այլ նույնիսկ լեզու կարող հասկանալ, ըմբռնել այն, որ մեզանից ընդմիշտ հեռանում է նա, ով տարիների ընթացքում ապրել է մեր մտքերի ու երազանքների մեջ։ Ստալինը ամենահեղինակավոր անձն է քովանդակ աշխարհում, ամենապանծալի և ներշնչող անունը, որ հնչում է երկրագնդի բոլոր մասերում, ուր շահագործում կա և ստրկացում, ուր պայքար կա ընդդեմ բռնության, շահագործման, ստրկացման։

Ստալինը համաշխարհային պատմության սակավաթիվ մեծություններից մեկն է՝ մարդկության հետ հարատևող, նա ինքը, մեծ լենինի հետ, ստեղծեց մի նոր պատմություն, մի նոր աշխարհ, մարդկային արդար փոհհարաբերությունների երազած աշխարհը։

Այսպիսի մեծություններից ենք մեզ լիա։ Մահը Ստալինի էության հետ երբեք համատեղելի չէ։ Ստալինը անմահ է լենինի պես, Ստալինը անմահ է լենինի հետ։

Նա լենինի հետ ստեղծեց Կոմունիստական պարտիան, դատարարակեց և կոփեց նրան։ Նա լենինի հետ ղեկավարեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, մի աննախընթաց ռևոլուցիա, որ ամբողջ աշխարհն

առավ իր փրկարար լույսերի մեջ և ազատեց ցարական դաժան ռեժիմին ենթարկված ժողովուրդներին: Նա փրկեց հայ ժողովուրդին վերջնական քնաջնջումից, որ թյուրք բարբարոս պետությունը իր անգլո-ամերիկյան տեղերի թեյադրանքով հրով ու սրով ի կատար էր ածում:

Ցարական դաժան կարգերից ազատագրված ժողովուրդները ստացան ազգային վերածննդի հնարավորություն, ծաղկեց և բարգավաճեց ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական նրանց կոլտուրան:

Սովետական ժողովուրդները մեծ ազի մեջ են: Հայ ժողովուրդը սզում է մահն իր աղատարարի, որին երախտապարտ է հավիտյան: Սակայն ժողովուրդները գիտեն, որ իրենք մենակ չեն, որ մեր իմաստուն առաջնորդը միշտ մեզ հետ է, նա ներկա է մեր վերելքին ամեն տեղ և մեզ ոգեշնչողն է:

Նա ներկա է կոմունիզմի հույակապ կառուցումներին և խրախուսիչ հայացքով նա-

լում է ամեն մի աշխուհին, որ դրվում է մի որևէ տեղ մեծ Միության մեջ:

Մենք մենակ չենք մեր ջանքերի ու պայքարի մեջ: Մենք առանց Ստալինի չենք. նրա ստեղծած Կոմունիստական հզոր պարտիան մեզ հետ է:

Ստալինի հիշատակը նվիրական է մեզ համար, և մենք խորապես հարգած կլինենք նրա հիշատակը, երբ անվրեպ կենսագործենք նրա պատգամները, նրա ավանդները, նրա ուսմունքը, երբ անձնվիրաբար գլուխ բերենք այն մեծ և պատմական ծրագրերը, որ գծել է նրա հանճարեղ միտքը:

Ստալինի դրոշմը նվիրական է. դա ազատության, ժողովուրդների եղբայրության և համաշխարհային խաղաղության դրոշն է: Բոլոր սովետական ժողովուրդներս, մի սիրտ և մի հոգի Կոմունիստական պարտիայի հետ, հավատարիմ մնանք այն անպարտելի դրոշին:

Գ. ՂԱՓԱՆՑՑԱՆ

(Հայկական ՍՍՀ Գիտությունների
ակադեմիայի ինկալան անգամ)

Մ Տ Ք Ի Տ Ի Տ Ա Ն Ը

Մեզանից հեռացավ մի մարդ, որի նման մարդիկ քիչ են ծնվում, որ զարբեր պատմություն են խտացնում իրենց մեջ և իրենց արդարացնում են այդ պատմության առջև: Լինելով իրենց դարի զավակները, այդպիսի հակառակը կարողանում են հեռուն տեսնել և ապացուցել այն բոլորը, որ շատերին թվացել է սոսկ փորձ կամ հնարավորություն: Անմահ Լենինի նման ընկեր Ստալինը ոչ միայն գիտական մարքսիզմի ստեղծարար կրողն էր, այլև զարգացնողն ու կյանքում գործադրողը՝ միանգամայն նոր պայմաններում: Լենինի հետ միասին ընկեր Ստալինը նշեց նոր ուղիներ, ստեղծեց նոր, պրոլետարական պետություն, ապացուցեց պատմության առջև, որ սոցիալիզմը ոչ թե տեսություն է և աշխատավորության բաղձանքը, այլ իրականություն, որը, հակառակ մի շարք ակարքսիստների, հնարավոր եղավ մի պետության սահմաններում և այժմ տարածվում է ավելի հեռունները:

Ընկեր Ստալինը, շարունակելով մեծ Լենինի անմահ գործը, դրեց և հանճարեղորեն լուծեց մեր Հայրենիքի համար կենսական նշանակություն ունեցող բազմաթիվ պրոբլեմներ:

Բավական է հիշել մեր երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման պրոբլեմները: Իր հաջող իրականացմամբ գյուղատնտեսության կոլեկտիվացումը, որի այժմ այդքան բնական ու սովորական է մեզ համար, և այդ հիման վրա կուլակության ոչնչացումը որպես դասակարգ, խոշորագույն ռևոլյուցիոն հեղաշրջում էր, մի հեղաշրջում, որն իր հետևանքներով Հոկտեմբերյան ռևոլյուցիային հավասար նշանակություն ունեցավ: Նման հեղաշրջումներ մեր առօրյայում, մեր հոգեբանության, մորալի, ըմբռնումներին և այլ կողմերի մեջ շատ-շատ են: Եվ այժմ թվում է, որ այդպես էլ միշտ եղել է. այնինչ այդ բոլորի մեջ մեծ դեր է կատարել մեծ Ստալինի անմիջական մասնակցությունը: Հիշենք միայն վերջին երկու տարվա նրա ստեղծարար մասնակցությունը լեզվաբանության և տնտեսական պրոբլեմների լուծմանը, հիշենք նրա դերը գրականության և արվեստի զարգացման բնագավառում:

Պատմության առջև, որպես ռեալ փաստ, ստեղծվեց սոցիալիզմը մեր երկրում: Դա ընկեր Ստալինի և Կոմունիստական պար-

տիայի անվիճելի հաղթանակն էր Դա ոչ միայն առօրյա իրականությունն է, այլև կենցաղ, մեր սովորական ու բնական կյանքը:

Այս բոլորի կենսարար ոգին մեծ Ստալինն էր, որը, հակառակ ամեն տեսակ դժվարությունների, կարողացավ իրեն արդարացնել:

պատմության առջև: Սրանով է նա ապրում մեր մեջ, որը մարդկության մեջ, գիտության մեջ, Մարմնագիտության մեջ, հեռագրավ մեզանից, բայց նրա ոգին, ստեղծագործական միտքը և գործը կայսրին ընդմիջում Ֆիդելիական մահը մտքի տիտանների համար մահ չէ:

ԱՂԱՎԱՆԻ ՄԵՍՐՈՊԵՍԱՆ

ՀԱՎԵՐԺ ՓԱՌՔ ՍՍԱԼԻՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մարտի 5-ին, երեկոյան ժամը 9-ը 50 րոպե անցած, ժանր հիվանդությունն էր բաբախելն դադարեցավ մարդկային մտքի պայծառության, սրտի ազնվության ու կամքի հզորության ամենափայլուն ներկայացուցիչի, ամբողջ մարդկության, և առանձնապես ճշմարիտ ու փոքր ժողովուրդներու ազատ ու երջանիկ կյանքի համար քրտնաշան մտածողի, սովետական ժողովուրդներու սիրելի առաջնորդի՝ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի մեծ սիրտը:

Մարդկային պատմության մեջ շատ են ծներ ու մահացեր խոշոր դեմքեր, սակայն անոնցմե և ոչ մեկուն մահը այնքան բազմամիլիոն մարդոց սիրտը չէ լեցուցած վշտով, որքան Ստալինի մահը: Նրանք նույն մահն են վշտահար մարդոց բազմությունը բաղկացած չէ եղեր այնքան բազմաթիվ ու ալլաղան ազգություններն, որքան Ստալինի մահվան պարագային:

Որքան որ տարածություն մը անսահման, բնութամբ՝ չեմք ու երախտազեղ, ժալկով՝ միջազգային ու բազմիմաստ էր՝ երեք տարի առաջ տեղի ունեցած Ստալինի ծննդյան 70-ամյակին նվիրված տոնակատարությունը, որպիսի որ այդ տոնակատարությունը առիթ մըն էր հարգանքի ու երախտագիտության անսխալեցող ցույցի՝ մարդկային երջանկությունն ու քաղաքակրթությունը ֆաշիստական ստրկացումն անապատագրող հզորագույն մարդասերի նկատմամբ, նույնքան և ավելի անսահման, չեմք ու երախտազեղ, միջազգային ու բազմիմաստ է հիմա այն վիճալը, որ պատեր է աշխարհի ամեն ազնիվ մարդոց սրտերը, նույն այդ մեծ մարդու, ժողովուրդներու իրավահավասար եղբայրակցության ու խաղաղության մեծագույն բարեկամի՝ սիրելի Ստալինի մահվան առիթով:

Այս հանգամանքները ունին իրենց խորունկ պատճառները: Առտոց գաղտնիքը կկայանա ամենն անաչ այն բանի մեջ, որ մտքի, սրտի ու կամքի արտասովոր հատկություններով օժտված էր Ստալինը, նաև այն բանի մեջ, որ աշխարհի ամեն ժողովուրդներու

և ազնիվ մարդոց ամենահատապ ու ամենակենսական հարցերն էին այն խնդիրները, որոնց կարգավորման և իրագործման համար նվիրաբերեց ան իր ամբողջ գեղեցիկ ու վեհ կյանքը:

Թեև մեզմե ֆիդելիական հեռացավ մեծ Ստալինը, սակայն անոր կերպարը հավիտյան կմնա ապագա սերունդներու սրտերու մեջ՝ որպես ոգեշնչող խորհրդանիշ ազատ ու երջանիկ կյանքի, ստեղծագործական ու խիզախ խոհերու, մարդկայնական ու վեհ բուրք ձգտումներու:

Սովետական Միության բազմահազարդ և կալվարի, ամբողջ աշխարհի առաջադեմ մարդկության ամենահարգատ բարեկամի՝ մեծ Ստալինի մահը սզացող բազմամիլիոն ժողովուրդներու մեջ առանձնապես խոր է ու անսահման հայ ժողովրդի վիշտը, թե՛ իր հարազատ Հայրենիքի և թե՛ Սփյուռքի մեջ:

Հանձնի Ստալինի՝ հայ ժողովուրդը կորսելուց իր ճշմարիտ ազատարարին, որ ոչ միայն փրկեց զայն իմպերիալիստական պետություններու աշակցությունից ֆիդելիական բարբարոս ձեռքերով կատարվող ֆիդելիական բնաջնջումն, որ ոչ միայն փրկեց զայն ու անոր Հայրենիքը՝ հայ ժողովրդի հիսնամյա թշնամիներու ու կեղծ բարեկամներու ձեռքերեն, այլ վերականգնելով անոր դարեր առաջ կորսնուցած պետականությունը, իր հայրական անմիջական հոգածությունից մեծացուց ու դարձացուց զայն, խեղճով ու աղքատ Հայաստանը վերածեց աշխարհի մեջ ամենաառաջավոր կարգերով օժտված հզոր պետության, որ Ստալինյան կոնստիտուցիայի (սահմանադրության) արեւի տակ, որպես իրավահավասար մեկ անդամ ՍՍՌՄ բազմազգ ընտանիքի, կանգնեց է աշխարհի քաղաքականության առաջնիստի վրա և ազատ, խաղաղ ու երջանիկ պայմաններու մեջ կկատուցե իր ավելի պայծառ ու շքեղ ապագան:

Ստալինը, որպես հայ ժողովրդի հարազատ հայրը, լսեց նաև հայրենակարոտ սփյուռքահայության ձայնը և սրտառու կո-

լուվ Սովետական Հայաստանի դռները բացավ տասնյակ հազարավոր բազմություններու առջև, որոնք հիմա ձեռք-ձեռքի տված, իրենց ի սպաս են դրեր իրենց հարազատ Հայրենիքի ա'լ ավելի ծաղկմանն ու հզորացմանը:

Հայ ժողովրդի ամեն մի զավակի մտքին ու սրտին մեջ Ստալինը ունի իր հարազատ ու ջերմ անկյունը:

Իր և իր Հայրենիքի ազատարարի ու մեծագույն բարեկամի նկատմամբ հայ ժողովուրդը ցուցաբերեց իր անհուն շնորհակալությունն ու երախտագիտությունը անով, որ Հայաստանի մեջ սովետական կարգերու հաստատման 30-րդ տարեդարձի առթիվ, Երևանի արևելյան զինաժոծիչ բարձունքին կանգնեցուց Ստալինի այնքան վեհ ու շքեղ քանդակը:

Իսկ անոր մահեն հետո հայ ժողովուրդը նույն այդ շնորհակալական ու երախտագի-

տական պարտքը կկատարե՝ կառուցելով ա'լ ավելի լուսավոր ու երբանիկ ապագան, որպես ավելի շքեղ ու խոսուն քանդակ՝ անմահ Ստալինին:

Հայ ժողովուրդի, անոր Հայրենիքի ազատարարի ու մեծագույն բարեկամի ֆիզիկական կորուստը անհուն վշտով է լեցուցել իմ սիրտը, որ մեկ կողմեն կհավատա, որ Ստալինի հիշատակը արժանավոր կերպով հարգած կըլլանք միայն այն ժամանակ, երբ այդ վիշտը կփոխարկենք ստեղծագործական ուժի և կնվիրաբերենք զայն հանուն մեր մեծ Հայրենիքի ու հերոս ժողովուրդի ա'լ ավելի բարգավաճման, իսկ մյուս կողմե՝ վշտահար այս սիրտս կուզա ահա իմ շրթներուս վրա՝ ազոթի ջերմությամբ ու խորությամբ մրմընելու:

Հավելե՛ք փա՛ռք Ստալինի հիշատակին:

ԴՈՎՏ. Լ. ԱԹՈՒՆՅԱՆ

ՍՏԱԼԻՆԸ ԱՆՄԱՆ Է

Բնության անողոր մի հարվածը ընդմիշտ կտրեց հանճարեղ և իմաստուն Ստալինի փառապանծ կյանքի թելը, կյանքի թելն այն մարդու, որ 35 տարիներ շարունակ ոգեշնչեց և առաջնորդեց սովետական ժողովուրդներին դեպի երջանիկ կյանք և խաղաղություն:

Այս վաղահաս կորուստը անշաղի մեծ է և վշտալի՝ ոչ միայն Սովետական Միության, այլև մարդոջ աշխարհի առաջադեմ ժողովուրդների համար, իսկ հայ ժողովրդի համար՝ է՛լ ավելի մեծ:

Սովետական Միության ընտանիքի մեջ մեր փոքր Հայաստանը այսօր դարձել է ծաղկած մի երկիր՝ իր հույսկալ շինարարությունով, առաջավոր արդյունաբերությամբ և սոցիալիստական գյուղատնտեսությամբ, կուլտուրայով ու գիտությամբ: Այս բոլորը պարտական ենք ռուս մեծ ժողովրդին, Սովետական Միության Կոմունիստական պարտիային և անձամբ անմահ զուլգին Լենինին և Ստալինին, որոնք հարություն տվեցին հայ ժողովրդին, որ մահվան դուռն էր հասել: Նրանց շնորհիվ ինձ նման հարյուր հազարավոր պանդուխտ հայեր հնարավորություն ստացան վերադառնալու իրենց նվիրական Հայրենիքը՝ նրա ծոցում վայելելու սովետական իրավակարգի բարիքները:

Երախտագետ հայ ժողովուրդը գիտակցում է այս բոլորը և մի արցունք ավելի ունի այժեռի մեջ՝ իր սիրելի հովանավորողի և հոգատար հոր մահվան առթիվ:

Ստալինի հիշատակը անմահ է: Մահը չի կարող մեր սրտերից հանել նրա անմահ կերպարը: Նրա գիտական ստեղծագործությունները, նրա վիթխարի գործերը հավերժ անմոռաց կմնան ներկա և գալիք սերունդների մոտ:

Մեր սիրելի առաջնորդի հիշատակի հանդեպ մեր սերն ու հարգանքը արտահայտելու լավագույն ձևը, եղանակը՝ կլինի իր իսկ սիրածը, նա չէր սիրում ոչ արցունք և ոչ ողբ, նա սիրում էր գործը, ռուսի աշխատենք նմանվել նրա անարատ կերպարին, յուրաքանչյուրս մեր վրա բաժին ընկած աշխատանքում ցուցաբերելով է՛լ ավելի նվիրվածություն և եռանդ, է՛լ ավելի սերտորեն համախմբվենք մեր հարազատ Լենինի—Ստալինի մեծ պարտիայի, մեր հարազատ պետության շուրջը:

Հանգի՛ստ լի հոգնատանջ և սուրբ աճյուռնին, ով սիրելի առաջնորդ:

Այս երկու խոսքը լինի փոխարենը մի բուռ ծաղիկ՝ դրված քո շիրմի վրա, ով անմահ Ստալին:

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԻՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՎՇՏԻ ԽՈՍՔ

Այսօր, տխուր, խռնարեկ էն դռները սավեռական,
Այսօր, տխուր, լաց է լինում սիրուն աշխարհի ողջ մարդկության.
Այսօր քալո՞ր հայացքները սուգով հառել են Կրեմլին,
Քո վշառլի մահվան առթիվ, մեր անմոռաց հեղինակ՝ ՍՍԱԼԻՆ:

Քո հայվածքը ասադերից էլ պայծառաշող լույս էր անմար,
Քո մեկ բառը հույս էր հաստատ ուղեկցություն մարդկանց համար.
Դու մեծ էիր հոգով, մտքով, ինչպես մեծ էր անմահ լենինը,
Մեր ուղեցույց անշեղ փառոս, անմե՛ռ հերոս, Հա՛յր ՍՍԱԼԻՆ:

Դու փրկեցիր կեղեքումից քանվորներին ակար, աղքատ,
Ազատություն պարզեցիր մարդկանց ստրուկ և անազատ,
Պատվար եղար արդարության, պաշտպան եղար փոքր ազգերին,
Մե՛ծ զորավար անմահանուն և իմաստուն, Հա՛յր ՍՍԱԼԻՆ:

Աշխարհավեր պատերազմի հրծիգներին դրամապաշտ՝
Դու՛ սանձեցիր ձեռքովդ ամուս և մղեցիր լայնֆար անհաշտ՝
Որ աշխարհում ամենուրեք, բեկուզ մի մայր, չողքա՞ որդին...
Խաղաղության անհա՛ղք վանան, հզո՞ր պաշտպան, Հա՛յր ՍՍԱԼԻՆ:

Հայ արևն էլ ընդմիջտ խավար, հայ երկիրն էլ ընդմիջտ ավեր՝
Կանգնել էին անդնդի մոտ: Դու ասացիր. «Պե՛տք է փրկե՛լ...»
Ու փրկեցիր և Հայրենիք պարզեցիր հայոց ազգին,
Հավերժորեն մեր սիրելի, մեր պաշտելի, Հա՛յր ՍՍԱԼԻՆ:

Ճանաչարձակ քո մեծ փառքի առջև դարե՛ր պիտ խռնարեկեն,
Համբուրելի հիշատակը՝ ժողովուրդներ պիտի հարգեն
Ու բարձրացնեն քո փառապանծ դրոշակը արփիածին,
Խաղաղաբար, ազատաբար, համանաաբար, Հա՛յր ՍՍԱԼԻՆ:

Քեհի՛ր հանգիստ, հարազա՛տ Հայր, հավետ մե՛րն է՝ լույս ապագան,
Դու գծել ես ու մեզ տվել միասնության ուղիդ համբան.
Այդ համբի մեջ եղար մեզ հետ, պիտի լինենք միշտ միասին,
Սպարապետ հոգով արի, սրտով բարի, Հա՛յր ՍՍԱԼԻՆ:

ՓԱՅԼԱԿ ԾԻԱԾԱՆ

ՀԱՆԳՉՈՂ ՍԻՐՏԸ

Դարերը մեզ տվել էին մի մեծ ծնունդ,
Որ դարերն էր հանգառո կշռում,
Եվ փառապանծ մեր օրերին տալիս էր հեֆ ու
նեղջերում:

Երբ Կրեմլի կամփր աստղի շողփերի հետ
Իր հառազող իմաստությունը
Պատգամներն էր տալիս երկրին,
Լույս էր իջնում անգամ անհույս նեգրի
խավար խրեթի մեջ,
Եվ երկիրը մի պառույտ էլ դեպի առաջ էր
շարժվում:

Երբ անհամբեր նրան էին նայում մարդիկ,
Նա երկիրը Սովետական
Ինչպես սլաֆ ուղղեց վաղվա արշալույսին,
Որպես նրանց գալիք կյանքի ուղենիշը
անդավաճան:
Սովետական բազմալեզու ժողովրդից
Նա փանդակեց մի բյուրեղյա միասնություն,
Որը երբեք չի՝ բեկանվի և չի՝ լուծվի:
Նա կառուցեց մի վեհիմաստ ու պայծառ
կյանք:

Նա իմ երկիրը փրկել է դաժան մահից,
Ինձ էլ հեռվից տուն է կանչել:

Երբ մեն-մենակ, հայրենագուրկ պանդուխտ
հայի

Անհատակ վիշտն իմ՝ արտի մեջ՝
Շրջում էի օտար ափեր...

Եկել էր նա ողջ աշխարհին
Որպես բարեֆ,


Որպես փրկիչ
Եվ որպես հայր:

Եանր է վիշտը մեր մեծ երկրի,
Եվ կորուստը՝ անվերադարձ—
Ո՛հ, մեռել է Ստալինը...

Ո՛չ, չի՝ մեռել և չի՝ մեռնի
Քանի շունչ կա երկրի վրա,
Եվ բանկազին նրա կյանքը
Կնորոգվի ամեն մի նոր ծնունդի հետ:

Լո՛ւ, նայեցե՛ք այս խոնարհված դրոշներին,
Եվ մարդկության երթը թող ձեզ վկա լինի:
...Ստալինը մեծ ծնվեց փոքր մի խրեթիթում,
Հասակ առավ պայֆաթի մեջ,
Իսկ այսօրհետ հավերժ կապրի
մեր սրտերում:





ՔԱՋԻԿ ՍԱՐԿԱՎԱՐ ԳԵՈՐԳԵԱՆ

(Մոսկվայի Հոգևոր Ճեմարանի ուսանող)

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԻՇԵՑ

Մեծ վիշտ է պատել Սովետական երկրի բազմազգ ժողովուրդներին։ Մարտի 5-ին, երեկոյան ժամը 9-ն անց 50 բուպեին վախճանվեց սովետական ժողովրդի հանճարեղ և մեծ առաջնորդը՝ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինը։

Դադարեց բարախելուց բոցավառ սիրտը այն մարդու, որն իր ամբողջ կյանքը նվիրեց մարդկության երջանկության գործին, հաղթեց ու շտկեց դեպի ապագայի լուսաշող գաղաթները տանող մարդկության ճանապարհը։ Զկա այլևս Ստալինը...

Այս բոլոր կայծակի արագությամբ տարածվեց համայն աշխարհով մեկ։

Խորը սգի մեջ մտավ Սովետական երկիրը։ Բայթիականի ափերից մինչև Կուրիյան կղզիները, Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ափերից մինչև արևոտ Հայաստանը, տարբեր սեռի, ցեղի, տարիքի և ազգության մարդկանց պատեց մի անլուր կսկիծ, որպիսին չի իմացել դեռ մարդկությունը իր ողջ պատմության ընթացքում։

Հանկարծակի վշտից ցնցված, լուսկյաց ու սզավոր դարձավ Մոսկվան՝ Սովետական հզոր երկրի այդ վիթխարի, միշտ կենսուրախ, միշտ կայտառ ու աղմկալի մայրաքաղաքը։

Այն վշտայի առավոտ հեքիաթային այդ քաղաքի բնակիչները արթնացան սովորականից շատ կանուխ։ Կարծեք նրանք ոչ թե քնել էին, այլ ողջ գիշերը հսկել իրենց հարազատ, սիրելի հոր մահի՞ճի մոտ։ Չյան փաթիլները դանդաղ իջնում էին քաղաքի վրա։ Հինավուրց կրեմլի ոսկեզօծ դարբնների վրա։

Փողոցներում, շենքերի ճակատներին՝ փողփողում էին սև ժապավեններով երիզված դրոշակները։

Քաղաքի բոլոր ծայրերից մարդկային անվերջ հոսանքը շարժվում էր այն օրը դեպի Գաղմի հրապարակը, դեպի Կրեմլը, Կրեմլի պատերի տակ հեծեծում էին մարդկային անլիքները։ Բոլորի հայացքները մեքենայորեն ուղղված էին դեպի Լենինի դամբարանը, որտեղից մեծ առաջնորդը սովորաբար հանդիպում էր ունենում ժողովրդի հետ՝ մեծ տոնակատարությունների օրերին։

Մակայն ժողովրդական այդ ալիքը հեղեղել էր ոչ միայն Կարմիր հրապարակը, Մարդկային շարժերը, ձգված մի քանի կիլոմետր երկարությամբ, անվերջ շարժվում էին դեպի Սիբիրյանների Տունը, ուր մահվան հաջորդ օրը դրվեց Ի. Վ. Ստալինի մարմինը, Գալիս Լին բոլորը՝ վերջին հրաժեշտը տալու մեծ առաջնորդին և ուսուցչին։

Երեք օր ու երեք գիշեր մեծ մարդու զազադի մոտով անցան հարյուր հազարավոր մարդիկ, շուրթերին՝ ամենքին հարազատ անունը, սրտերում՝ զառն կսկիծը, Իրենց առաջնորդին հրաժեշտ էին տալիս ոչ միայն Մոսկվացիները, այլև Սովետական երկրի տարբեր ծայրերից այդ օրերին, հատկապես այդ անպատակով Մոսկվա ժամանած տասնյակ հազարավոր տարբեր ազգության և զբաղմունքի մարդիկ։

Անցնում էին նրանց զազադի մոտով ծանկրտափայլ վշտահար, սակայն առանց ընկճվելու, առանց հուսահատության, նրանց դանդաղ և լուսկյաց երթում զգացվում էր ստեղծ-

ծագործող ժողովրդի մեծ և անկոտրում ոգին, զգացվում էր այն հանդարտությունը, ինքնավստահությունը և վճռականությունը, որը հատուկ էր իրեն՝ Ստալինին, նրանք իրենց սրտերում կարծեք կրում էին սրբազան մի երրորդ՝ մինչև վերջ մնալ հավատարիմ այն գործին, որի համար իր ամբողջ կյանքը տվեց մեծ մարդը և ուսուցիչը:

Սգո դգեստ էր հագել Միությունների Տան Սլունազարդ դահլիճը: Վիթխարի կամարները պատած էին սև ժապավեններով երիզված կարմիր կերպասներով, որոնց վրա ամրաց-

ղով պառկած է այն մարդը, որը Լենինի մահվանից հետո 30 տարի անդադրում ղեկավարեց Սովետական մեծ պետությունը: Նրա փոքր ինչ դանգուր մազերին իջել է աշնանային եղյամբ: Մահվան սառնությունից փակված կուպերը ծածկել են այն հայացքը, որն այնքան սուր կերպով թափանցում էր զալիք ժամանակների խորքերը:

Ներկա և ազազա սերունդների համար հավիտյան հարազատ այդ մարդը պառկած է իր համար խորթ անշարժությամբ, մարդ,



Աղջիկը ծաղկեփունջ է դնում Ի. Վ. Ստալինի զազաղի վրա

ված էին Սովետական Միության 16 ռեսպուբլիկաների պետական նշանները: Դահլիճի կենտրոնում, բարձր պատվանդանի վրա, սգո դրոշմների և թարմ ծաղկեպսակների մեջ դրված էր դազադը՝ ամբողջովին պատած կարմիր մետաքսով:

Դազաղի մեջ, Գեներալիսսիմոսի տարա-

որը միշտ անխոնջ էր աշխատանքում, հոգատար՝ ողջ մարդկության նկատմամբ: Որքան հոգս, սեր ու ցավ էր պարունակում այդ սիրտը աշխատավոր մարդու նկատմամբ, սիրտ, որի զարկին ուշի-ուշով հետևում էին հարյուր միլիոնավոր մարդիկ աշխարհում:

Անդադար հնչում է սգո մեղեդիներ։ Անվերջ շարքերով անցնում են դադադի մոտով մարդիկ՝ կանայք, տղամարդիկ, ծերեր, պատանիներ, մայրեր իրենց երեխաներով։

Իրենց վերջին հրաժեշտը տալով, դադադի մոտով անցնում են լին մեծ ժողովրդի և ժողովրդական դեմոկրատիայի մյուս երկրների պատգամավորությունները։

Հաճախակի փոխվում են դադադի մոտ կանգնած պատվո պահակները։ Պատվո պահակ են կանգնում բանվորներ, գյուղացիներ, երկրի տարբեր ծայրերից թաղմանը եկած պատգամավորությունների ներկայացուցիչները, հասարակական գործիչներ, զինվորականներ, գիտություն, արվեստի և դրականության աշխատողներ, պիոներ-դպրոցականներ, Սովետական պետության ղեկավարներ, հանգուցյալի մեքենավոր զինակիցները։

Դադադը թաղված է ժողիկների մեջ։ Պատկերներ են դրված Սովետական կառավարության և Կոմունիստական պարտիայի, սովետական բոլոր ռեսպուբլիկաների, հասարակական կազմակերպությունների, արտասահմանյան երկրների, նրանց հյուպատոսների, ժողովրդական դեմոկրատիայի երկրների ու նրանց ղեկավարների կողմից։ Պատկերներ այնքան շատ են, որ դահլիճը չի լավարարում, դրանք դրված են հսկայական շենքի մյուս սենյակներում, միջանցքներում, սրահներում, դուրսը՝ փողոցում, պատի տակ։

Դահլիճ են մտնում նորանոր պատգամավորություններ։ Մարդկային հեղեղը չի թուլանում ոչ մի րոպե։ Ի. Վ. Ստալինի դադադի մոտով անցնում են դպրոցականներ, օտարերկրյա զինվորներ, Ուկրաինայի ածխափորների, Ուրալի մետաղագործների ներկայացուցիչները, մարտնչող Կորեայի և հերոսական Չինաստանի որդիները, Սովետական անժայռածիր երկրի ամենատարբեր ժողովուրդների պատգամավորները, ռուսական մեծ ռեուլդիայի օրորում՝ լենինգրդի բանվորները։ Ահա անցնում են դադադի մոտով ստալինգրադցիները՝ այդ հերոսական քաղաքի աշխատավորների ներկայացուցիչները։

Մարտի 9-ին սովետական ժողովուրդը, ողջ առաջադեմ մարդկությունը իր վերջին հրաժեշտը տվեց անմահ լենինի մեծ գործի հանձնարել շարունակող, իմաստուն առաջնորդ և ուսուցիչ Իոսիֆ Վիսսարիոնովի Ստալինին։

Վրա են հասնում հրաժեշտի վերջին ժամերը։ Դադադեցվում է մարդկային հոսանքը։ Դահլիճում, Ի. Վ. Ստալինի դառառի մոտ ետևում են նրա հարառատները, Սովետական կառավարության և Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ղեկավարները։

ինչպես նաև Ի. Վ. Ստալինի թաղմանը ժամանած օտարերկրյա կառավարական պատգամավորությունները, ղեսպաններ և հյուպատոսներ, որոնք լիազորված էին թաղմանը ներկա լինել որպես իրենց կառավարությունների ներկայացուցիչներ։

Առավոտյան ժամը 10-ն է։ Վերջին անգամ պատվո պահակ են կանգնում մեծ Ստալինի հավատարիմ աշակերտներն ու զինակիցները՝ Սովետական պետության ղեկավարները։

Ժամը 10-ն անց 5 րոպեին Ի. Վ. Ստալինի մեքենավորագույն ղեկավարները՝ Սովետական կառավարության ղեկավարներ Գ. Մալենկովը, Լ. Բերիան, Վ. Մոլոտովը, Կ. Վորոշիլովը, Ն. Խրուշչևը, Ն. Բուլգանինը, Լ. Կազանովիչը, Ա. Միկոյանը զգուշորեն բարձրացնում են դադադը և դանդաղ դիմում դեպի դուրս։

Միությունների Տնից դուրս են քերում պահակները։ Սովետական Միության մարդայինը և զենեարայինը կարմիր բարձիկների վրա տանում են Իոսիֆ Վիսսարիոնովի Ստալինի շքանշանները և մեդալները։ Թաղում կատարվում է զինվորական կարգով։ Թափորի ամբողջ ձևանպարհի ներկայությամբ կարգված է զինվորական էքսկորտ։ Ի. Վ. Ստալինի դադադը դրվում է հրետանային սալայի վրա։ Փակ դադադի կափարիչին ամրացված է Գնեբրայիսիտիսի զինարկը։

Դադադի հետևից քայլում են հանգուցյալի ընտանիքի անդամները, նրա մեքենավոր զինակիցները, Սովետական կառավարության ղեկավարները, Սովետական Բանակի մարշալները և զենեարայինը, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչները և այլն։ Թաղման թափորը սգո երաժշտության հրչյունների տակ ղանդադորեն շարժվում է դեպի Կարմիր հրապարակը։

Կարմիր հրապարակը լեփ-լեցուն էր Մոսկվայի, Սովետական Միության մյուս մարզերի և ռեսպուբլիկաների աշխատավորների ներկայացուցիչներով։ Ներկա էին ժողովրդական դեմոկրատիայի երկրների պատգամավորությունները, դիվանագիտական ներկայացուցիչները։

Ժամը 10-ն անց 45 րոպեին թաղման թափորը կանգ է առնում լենինի դամբարանի մոտ։ Խոնարհվում են մարտական դրոշմները։ Դադադը վերափվում է հրետանային սալայի վրա լից և դրվում բարձր պատմադրանի վրա։

Սովետական կառավարության ղեկավարները, ինչպես նաև թաղմանը եկած օտարերկրյա պետությունների ու կառավարությունների ներկայացուցիչները բարձրանում են դամբարանի ամրոններ։

Ի. Վ. Ստալինի թաղման կառավարական հանձնաժողովի նախագահ Ն. Խրուշչևը կա-

ռավարության անունից բացում է հանգուց-
լալի հիշատակին նվիրված սգո միտինգը՝

Առաջին խոսքը տրվում է Սովետական
Միության Մինիստրների Սովետի նախագահ
Գ. Մալենկովին, որի ճառը ներկա եղողները
լսում են բացառիկ լարված հետաքրքրու-
թյամբ, Այնուհետև ճառերով հանգես են գա-
լիս Մինիստրների Սովետի նախագահի առա-
ջին տեղակալներ՝ Լ. Բերիան և Վ. Մուրոտո-
վը՝

Ժամը 11-ն անց է 54 րոպե Մոսկվայի Ժա-
մանակով, Ն. Խրուշչևը սգո միտինգը հայ-
տարարում է փակված, Բոլորը իջնում են
դամբարանի ամբիոնից, Սովետական Միու-
թյան կառավարության ներկայացուցիչները
բարձրացնում են դագաղը և տանում դամ-
բարան, որի մուտքի ճակատին ամրացված
են երկու անմահ մարդկանց անուններ՝

Լ Ե Ն Ի Ն Ս Ս Ա Լ Ի Ն

Որոտում են հրետանային համազարկերը
ի պատիվ մեծ առաջնորդի...

Կրեմլյան աշտարակի ժամացույցը զար-
կում է 12 անգամ, Ամբողջ Մոսկվայով, Սո-

վետական ողջ երկրով մեկ, երեք րոպե ան-
դադար հնչում են գործարանների, շոգեքար-
շների, շոգենավների շշակները... Սովետական
Ժողովուրդը հրաժեշտ էր տալիս իր առաջ-
նորդին և ուսուցչին

Այդ պահին Սովետական անժայռածիր եր-
կրով մեկ հինգ րոպեով դադարեց ամեն տե-
սակի երթևեկությունը, Սովետական ժողո-
վուրդը, խորին կսկիծը սրտում, հրաժեշտ էր
տալիս իր մեծ զավակին, առաջնորդին և ու-
սուցչին

Սգո մեղեդին փոխարինվում է Սովետա-
կան Միության պետական հիմնի հզոր հըն-
չյուններով

Կառավարության ղեկավարները կրկին
բարձրանում են ամբիոն, Դամբարանի մո-
տով անցնում են Մոսկվայի կայազորի զոր-
քերը՝ զինվորական վերջին հարգանքը մա-
տուցելու մեծ առաջնորդ և զորավար Իոսիֆ
Վիսսարիոնովիչ Ստալինին, որի պայծառ ա-
նունը հավերժ կապրի սովետական ժողովուր-
դի սրտում, նրա զորեծրամ:





ԹԻՌԻՅԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԵՅՐ ԱԹՈՒՆ ԱԳՈՒՄ Է

Ո՛ր մարտի, երկուշաբթի

Եթերում կայծակի արագությամբ թռչում է լուրը։ Ռադիոքարճախոսի թախծալի բառերը զուժում են բոլոր. ժամարտի 5-ին, երեկոյան ժամը 9-ն անց 50 րոպեին, ծանր հիվանդությունից հետո... վախճանվեց ժողովուրդների հանճարեղ առաջնորդ, Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինը։

Վշտաբեր լուրը շանթահարում է կարծես մարդկանց։ Ամենուրեք լուռ, քարացած, այլալված հայացքների Վշտահար, լուռ, անցնում են մարդիկ... Փողոցներում կախվում են ալ դրոշակներ՝ երիզված սևերով։ Ամենուրեք իջել է անսահման, ծանր, վշտալի լուռություն։ Վախճանվել է առաջնորդը։ Ազում է Մոսկվան, Ազում են Սովետական Միության բազմազգ ժողովուրդները։ Ազում են լինել ու հնդկեր, լեխն ու լեհեր, նեգրն ու մալայացիներ... Աշխարհի բոլոր, բոլոր ծալրերում, հեռու թե մոտիկ, ողբում են առաջնորդի մահը։ Զկա այլևս հանուրի համար բարախող մեծ սիրտը։

Մարդկության ծանր, անսահման կորուստը սզում է նաև Մալր Աթոռ Ս. Էլիմաթինը։ Այս վշտալի, ծանր օրերին նա իր վիշտը միացնում է ողջ աշխարհի աշխատավորների ծանր, տրտմազին վշտին։

Վեհաբառ Հայրապետի կարգադրությամբ հեռագրեր են ուղարկվում բոլոր հայ եկեղեցիներին, աշխարհի բոլոր ծալրերում ցրված հայ համայնքներին, հրահանգելով՝ մատուցել պատարագ և կատարել Հոգեմանգատյան կարգ Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինի մահվան կապակցությամբ։

Մեծ պատի ապաշխարության տխուր օրերն են։ Սև, գորշավուն ամպերով ծածկված է երկինքը։ Սուգում է քամին և իր հետ տանում զանգերի լալագին, տխուր զողանջը։

Ճաշու ժամն է։ Փակ են խորանների վա-

րագույրները։ Արարողության ժամերը սահում են հեզերթաց։ Լցվել են մարդիկ Տաճարը և հոգու ամենանվիրական զգացմունքներով աղոթում են վշտահար... Շատերը լաց են լինում, մինչև առյուծից լսվում են ապաշխարության տրտմազին հնչյունները։

Վերջանում է ճաշու ժամերգությունը, լուռ են արթաղան աղոթքների վերջին մրմունջները Մալր Տաճարի նվիրական կամարների տակ... Տաճարը մի պահ թաղվում է խորհրդավոր լուռության մեջ։ Մի ծանր վիշտ նստել է մարդկանց սրտերի վրա... Ապաստմ են նրանք մի մխիթարական խոսքի, ոչ ոք ոտքը դուրս չի դրել Տաճարից։ Մանր սպասողական դրություն է։ Առջևում՝ ատյանում, Ս. Իշման սեղանը բոլորել են վանքի միաբանները, կրտսերից մինչև ավագագույներ, լուռ ու թախծոտ։ Եվ ահա դեպի ժողովուրդն է դառնում լուսաբարապետ սրբազանը։

Շարքերը սեղմվում են, բազմությունը մի ակնթարթ լարվում է։ Լսվում է եպիսկոպոսի հուզված ձայնը. «Հավատացյալ եզրայրենի՛ր և քույրե՛ր, իմ վշտացյալ սիրելի ժողովուրդ, աշխարհը սուգ մտավ։ Զկա այլևս ժողովուրդների մեծ բարեկամն ու առաջնորդը, Զկա աշխարհի իմաստնազույն մարդը, Զկա Ստալինը։

Ժողովրդի բազմության միջից լսելի են լինում վշտալի հեկեկանքներ։ Այո՛, սզում են, հեկեկում ծանր վշտի այս դառնագին րոպեներին այն բոլոր մարդիկ, որոնց համար անսահման թանկ էր առաջնորդի կյանքը։

Սրբազանը շարունակում է.

«Եթովար է հաղովել իրողության հետ, մահը անհամատեղելի է առաջնորդի անվան հետ. նրա անուշը դրոշմված է միլիոնավոր սրտերում։

Նրախտապարտ մեր ժողովուրդը հավիտյան չի մոռանա նրան, նրա անմահ անունը, նրա հիշատակը միշտ անջինջ կմնան մեր սրտերում: Վերջում նա մխիթարական խոսքեր է ասում սգավոր ժողովրդին. «Աղոթե՛ք, սիրելի՛ք, զի նվիրական աղոթքը թե՛ թևացնում է վշտի անհուն ծանրությունը»:

Սրբազանի սրտահույզ խոսքերից հետո, սկսվում է հոգեհանգստյան կարգը:

«Անսկիզբն Աստուած շարականի տրտմանուց ելնէջները, վշտի, աղոթքի ու հուսի մրմունջների հետ հալվում, դադողում են օդում: Կա՛ արդյոք արարողության մի այլ կերպ, որ այնքան տիպականորեն խտացնի,


8 մարտի, կիրակի

Վեհափառ Հայրապետի հատուկ կարգադրությամբ, հանդուցյալ առաջնորդի անմահ հիշատակին, տաճարի ավագ սեղանի վարադույրը բացված է:

Մատուցվելու է սուրբ պատարագ և կատարվելու է հոգեհանգիստ:

Ջանգերի ընդհատ-ընդհատ, լացալիմա՜, վշտահար թրթռոցները սփռվում են հեռունքում: Սկսվում է հանդիսավոր սուրբ պատարագը: Բաղմունքումը խոնվել է Տաճարի ներսը, հազարավոր վշտահար դեմքեր քարացել են իրենց տեղերում:

Մի պահ, փակ սեղանի առաջ, երգում են



Ամենայն Հայոց Հայրապետը, հոգեհանգստյան արարողություններից հետո, ջրջապատված Մայր Աթոռի միաբանությամբ:

ցուլացնի իր մեջ մահվան դժգույն ու զալկահար պատկերը, որքան հայ Եկեղեցու հոգեհանգստյան արարողությունները. դրանք հուզիչ են, թախծոտ և արտասուք կորզող, դրանց մեջ կա կյանքի ու մահվան խորը փիլիսոփայությունը, որքան միաստիկ ու հոռետես են, այնքան էլ վերջում լավատես: Քրիստոնեական մորալը երբեք մահվան հետ չի հաշտվում: Եվ, իսկապես, մի՞թե մահը կարող է մտքի հանճարներին, մտքի խորհրադույն տիտաններին կորզել: Ո՛չ, նրանք անմահ են, նրանք հավերժին են պատկանում:

«Յորժամաբը, ինչպիսի՛ միաստիկ հոգեկան վերացումներ, որքա՛ն վիշտ ու խնդրվածք: «Յորժամ մտցես ի սուրբ խորանն, անդ յիշեսցես զմեր ննչեցեալսն»: Հառաչանքի, հեկեկանքի ձայներ մերթ ընդ մերթ ընդհատում են երգի հանդարտիկ, հուզիչ ելնէջները: Բացվում է վարագույրը, շարունակվում է պատարագը, Դպիրները, սարկավազները այսօր երգում են մեծագույն տխրությամբ. անասելի ծանր վիշտը կարծես իր կնիքն է դրել ամեն ինչի վրա:

«Եւ ընդ Սերովբէսն, և ընդ Քերովբէսն...»
 լսվում են պատարագի հնչյունները և հան-
 կարծ՝ Սոփրբ, Սոփրբ, Սոփրբ, Տէր զօրու-
 թեանց, լի են նրկինք և երկիր փառօք քո...»
 Աննման երգի հրաշալի հնչյուններով,
 կարծես անմարմին Սերովբեների և Քերով-
 բեների սրբազան հնքն է լսվում. «Ովսան-
 նա՛ ի բարձունսն»:

Տխուր է հայոց պատարագը: Դարերով
 աստանդակսն, բզկտված ու տանջված հայ
 ժողովուրդը իր տեսած ու կուտակած վիշտն
 է դրել իր երգերի, իր նվիրական, սրտաբուխ
 աղոթքների մեջ, դարերով նրանք խտացել,

բազմաշարժար մի ժողովրդի, որը խաղաղու-
 թյան մեջ է որոնում իր միակ հանգրվանը:

Ո՞վ կարող է չհուզվել, ո՞վ կարող է չար-
 տասվել ու շաղոթել, լսելով հայի դարավոր
 արքունքի այդ երգը, հայոց պատարագի հու-
 զիչ ու աննման «Տէ՛ր, ողորմեա՛ն»:

Տաճարում օրվա սգալից տխրության ազ-
 դեցության տակ ժողովուրդը ձայնակցում է
 դպիրներին:

Վերջին աղոթքներն են: Պատարագիչը վեր-
 ջին անգամ համոզվում է սուրբ սեղանը և
 իջնում աստիճաններով, հասնում Ս. Իշման



Ամենայն Հայոց Հայրապետը ճոգեհանգստյան արարողություններից հետո

հղկվել, դարձել են հայ հոգու բյուրեղացած
 տենչանքներ, աղոթքի, հույսի աննման վե-
 րապաշտումներ:

Փակվում է սեղանի վարագույրը: Երգում
 են «Տէ՛ր, ողորմեա՛ն» Հայ ժողովրդի դարա-
 վոր տառապանքներն են մարմնացել այդ եր-
 գի յուրաքանչյուր տողում: Դարերով վշտա-
 հար հայ ժողովուրդը, այգեբուր երկնքին հա-
 ուած, իր վերջին հուշան է դրել նրա մեջ, իր
 ապավենն է փնտրել՝ երգելով այդ երգը:
 Ո՞նձնասուրբ Երրորդութիւն, տո՛ւր աշխար-
 հիս խաղաղութիւն: Դա վերջին աղերսն է

սեղանի առաջ, Հոծ բազմությունը իսկույն
 շրջապատում է միարանությանը: Օրվա պա-
 տարագիչ Սահակ եպիսկոպոսը խոսում,
 մխիթարում է ժողովրդին:

Սկսվում է պաշտոնական հոգեհանգստյան
 արարողությունը: Մահվան տխուր, սրտա-
 ճըմլիկ շարականների մեղեդիների երգակ-
 ցությունից հետո, հնչում է «Հօրութիւն սուրբ
 խալի քո, Քրիստո՛ս» շարականը: Երգի բա-
 ռերը, երաժշտությունը այնքան հուսատու,
 ոգեպնդիչ ու լավատես են, որ սգավոր պատ-
 կերները տեղի են տալիս, փոխվում յուսա-

վոր մի նոր կյանքի, հուսալից փրկութեան լավատես պատկերների: Ոգեպնդված, ղինված հոգու անընկճելի կամքով, դուրս են գալիս հավատացյալները Տաճարի դռներից:

9 մարտի, երկուշաբթի

Մենք պատի ճաշու ժամերգութիւնից հետո, տխուր հանդիսավորութիւն մը Տաճար է իջնում ազգիս Վեհափառ Հայրապետը: Չնայած իր առաջացած տարիքին, նա այսօր հատկապես իջնում է Տաճար, ներկա լինելու կատարելիք հոգեհանգստյան արարողութիւններին: Քափորը համբընթաց շարժվում է դեպի տաճարը: Վեհը հուզված է, վիրաւ իր ծանր կնիքն է դրել նրա պատկառազոր ալեգարդ դեմքին, նրա արծվենի հայացքը ավելի սեւեռուն է դարձել:

Ժողովրդի հոծ բազմութիւնը պատկառանքով ճանապարհ է բաց անում: Քափորը ներս է մտնում, Կանգնած են Ս. Իշման սեղանի առաջ, Վեհը իր սովորական աղոթքն է մըրմընջում: Խոսում է Սահակ եպիսկոպոսը: «Այդ օրեր են, — ասում է նա, — արտասուքի շաբաթ: Այսօր Սովետական երկրի մայրաքաղաքում Մոսկվայում, կատարվում է աշխատավորների ամենասիրելի բարեկամ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի հուղարկավորութիւնը: Այսօր ողբում է այդ մեծ մարդու մահը, իր ազատարարի մահը, համայն հայ ժողովուրդը: Ողբում է Հայ Եկեղեցին: Ազակիր Հայրապետը, Ս. Էջմիածնի վշտակիր միաբանութիւնը իրենց արտի դառն ու խոր կակիճն ու ցավակցութիւնն են հայտնում հայ ժողովրդի ազնիվ բարեկամ Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինի մահվան առթիվ:»

Սկսվում է հոգեհանգիստը:

Ջսպված հեկեկանքներ են լսվում այս ու այն կողմից, արցունքներ են երեւում Վեհի աչքերին, հայրենասեր Հայրապետը սգում է հայ ժողովրդի, հայ ազգի իրավունքների լավագույն պաշտպանի մահը:

Կարդում են ավետարանը և հոգեհանգիստը վերջանում է:


Տեղական ժամանակով ժամը ցերեկվա 1-ն է: Մոսկվայում թաղում են աշխարհի մեծագույն մարդուն, դամբարան են իջցնում Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի մարմինը: Միութեան մեջ, այդ վեհ, նվիրակա՛ն թուպին կյանքը հինգ թուպ կանգ է առնում, անցորդները քարանձամ են տեղում, երթեկութիւնը կանգ է առնում, բանվորները, նավաստիները, ուղիները, աշխարհի բոլոր ծայրերում աշխատավորները իրենց վերջին հարգանքն են մատուցում, վերջին մնաս բարեն են ուղարկում առաջնորդին:

Ծուրաքանչյուրը զամվում է տեղում լուռ ու անշարժ: Խոնարհվել են գլուխները: Վեհ ու նվիրական է պահը: Մանր, մահասաքսուտ լուսնիւն: Քարացել են մարդիկ անհուն վշտի ծանրութեան տակ:

Ազավոր Քափորը դանդաղընթաց երթով շարժվում, դուրս է գալիս Տաճարից, իսկ դրսում զանգակատան զանգերը թաղման մեղեդիներ են երգում, նրանց տխուր թրթռոցները տարածվում են օդի անսահման տարածութիւններում:

Այսպես անցան սուգի վշտալի օրերը Մայր Աթոռում: Ս. Էջմիածինը խորը կակիճով սգաց իր բարեբարի, հայ ժողովրդի ազատարարի ծանր, վշտալի մահը:





Ս. ՄԵԼԻՔ-ԽԱԶԱՏՐԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՍԳՈ ՕՐԵՐԸ

Մեծ ուսուցիչ և առաջնորդ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի մահվան բոթը կայծակի արագությամբ տարածվեց Սովետական Հայաստանի քաղաքներում ու գյուղերում, անասելի վիշտ պատճառելով ամենքին։

Դժվար է քառեր գտնել նկարագրելու այն, ինչ զգաց ու ապրեց Հայ Ժողովուրդը Սովետական ողջ երկրին պատած ծանր վշտի օրերին։

...Անցյալում մեր ժողովուրդը շատ է վիշտ կրել։ Սակայն նրա սովետական շրջանի պատմությունը բնորոշ է նրանով, որ մեր ժողովուրդը մտնելով երջանիկ կյանքի ճանապարհը, իսպառ մոռացավ իր դարավոր վշտերը։

Ստալին...

Որքան թանկ է ու հարազատ այս անունը ամեն մի ազնիվ, իր Հայրենիքին ու ժողովրդին նվիրված Հայի սրտին։

Մարդկային պատմության մեջ հայտնի բոլոր այն անձինք, որոնց որեւէ առիթով առնչություն են ունեցել մեր երկրի հետ, եղել են թշնամիներ, ասպատակողներ, եղել են հարստահարողներ։

Նույնիսկ ձեռնարկական դիվանագիտության, հին գալիեր, որոնց տնօրինման էր հանձնված «Հայկական հարցը», մեր ժողովրդի ամենանենգ թշնամիները հանդիսացան նրանով, որ իրենց կեղտոտ նպատակների համար խաբեցին ու շարաշահեցին նրա նվիրական բաղձանքները, նրա վստահությունը և զրանով իսկ ընաչեցման սոսկալի աղետի մատնեցին այդ ժողովրդին։

Եվ միայն երկու հոգի, մարդկության նորագույն պատմության երկու ամենապայծառ անձինք, այն պահին, երբ մեր տառապյալ ժողովուրդը գտնվում էր կործանման անդունդի եզրին, բարեկամական ձեռք մեկնեցին նրան և ի լուր ամբողջ աշխարհի հայտարարեցին։

«Ինչ գնով էլ լինի՝ պե՛տք է փրկել Հայաստանը...»։

Այդ անձինք Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինն էին, մեր ժողովրդի ամենամեծ բարեկամները, նրա ազատարարները, Ստալին...

Այդ անունը հավետ կհիշվի մեր ժողովրդի պատմության մեջ այն էջերից ի վեր, որոնցով սկսվում է նրա ազատ, անկախ ու հրջանիկ կյանքի պատմությունը։

Այդ անունը խորին երախտագիտությամբ կարտասանի ամեն մի հայ, քանի հինավուրց Արարատի ստորոտներին կապի մեր ժողովուրդը։

Այդ անունը շուրթերին, մեր ժողովուրդը աննախընթաց չափերով շնանցրեց իր Մայր Երկիրը, հասավ իր տնտեսության և կուլտուրայի լուծնսկած ծաղկման ու բարգաւաճման։

Այդ անունը սրտում, հայ ժողովուրդը, սովետական մյուս ժողովուրդների եղբայրական ընտանիքում, վստահ ու համարձակ կընթանա դեպի ավելի լուսաշող բարձունքներ։

Մարտի 6-ին, 7-ին, 8-ին և 9-ին ոնսպորտիկայի բոլոր գյուղերում, գործարաններում, հիմնարկներում, ուսումնական հաստատություններում տեղի ունեցան աշխատավորների սգո ժողովներ։ Հանգստ գալով այդ ժողովներում, ամենատարբեր խավերի ներկայացուցիչներն արտահայտում էին իրենց անսահման կակիծը ծանր, անխոհադիմելի կորստի առթիվ և հույս հայտնում, որ Սովետական կառավարությունը, մեծ Ստալինի դինակիցներն ու աշակերտները, անսասան ու վստահ առաջ կտանեն երկրի ղեկավարման գործը և հայոցության կիրազորածն նրա բոլոր պատգամները։

Ժողովներում ընդունված բանաձևերում աշխատավորները հայտնում էին իրենց անսահման սերն ու նվիրվածությունը դեպի

հարազատ կառավարությունը և հավաստիացնում, որ իրենք պատրաստ են ամեն ջանք գործ դնել հայրենի երկրի հետագա զարգացման ու առաջադիմության համար:

Խորը սուգ էր պատել այդ օրերին հայոց աշխարհին: Դադարել էր ամեն երգ ու խընդուն, որն այնքան հատուկ է սովետական կենսության ժողովրդին: Մարդիկ դարձել էին մտազբաղ և ավելի կենսորոնացած: Բոլորի դեմքերին դրոշմված էր ծանր թախի-

նակներով: Կառավարական տան աշտարակի վրա խոնարհված էր Սովետական Հայաստանի պետական դրոշը:

Առանձապես ծանր էր ու ցնցող մարտի 9-ը՝ Ի. Վ. Ստալինի թաղման օրը:

Այդ օրը կեսօրվա պահին, երբ Մոսկվայում տեղի էր ունենում Ի. Վ. Ստալինի թաղման արարողությունը, Հայաստանի քաղաքներում ու գյուղերում մարդկանց հոծ բազմություններ հավաքվել էին ուղիորարձրա-



Երևանի աշխատավորությունը մարտի 9-ին, Ի. Վ. Ստալինի մոեմմեմ-հանդակի մուս:

ծի կնիքը: Ազո ժողովներում թե փողոցում, տանը թե աշխատանքի վայրում մարդիկ չէին կարողանում պատահած դժբախտության մասին խոսել առանց արցունքների:

Հիմնարկների, գործարանների, ուսումնական հաստատությունների և բնակելի տների ճակատներին ծածանվում էին դրոշակները՝ երիզված սգո ժապավեններով: Կարգավիճակ էին Ի. Վ. Ստալինի նկարները՝ սև շրջա-

խոսների մոտ՝ լսելու Կարմիր Հրապարակում տեղի ունեցող սգո միտինգի հաղորդումը:

Այդ պահին Երևանի կենտրոնի հրապարակում, ինչպես ասում են, ասեղ զցելու տեղ չկար: Վիթխարի հրապարակը և նրան կից փողոցները լեփ-լեցուն էին մարդկանցով: Տասնյակ հազարավոր մարդիկ՝ բանվորներ, ծառայողներ, մտավորականներ, ուսանողներ, դպրոցականներ ինքնաբերաբար, ներ-

քին մի ուժգին մղումով հավաքվել էին այս-տեղ, կարծեք ներկա լինելու թաղմանը, իրենց վերքին հրաժեշտը տալու այն մարդուն, որի անունը մոտ երեք տասնյակ տարի ոգեշնչել է բոլորին ամեն տեսակի սրբաբազումությունների, վերջին հրաժեշտը տալու հայ ժողովրդի մեծագույն բարեկամին, նրա ազատարարին:

Լուս է հրապարակը, Չկա ոչ մի շարժում, ոչ մի ձայն, ոչ մի աղմուկ: Ռադիոյով լսվում

ենք ի. Պ. Բերիայի և Վ. Մ. Մուրտուզի ճառերը, որոնք համակված էին մեծ վեհակա-նության մը և վստահության մը՝ անսասան յա-րունակիլ իրենց անմահ ուսուցչի և առաջ-նորդի սրբազան գործը, ներկա հղողներն ընդունեցին խորին գոհունակությամբ: Մեծ Ստալինի մերձավորագույն զինակիցների խոսքերը հնչում էին որպես սկիզբանք ժո-ղովրդի համար, որպես սպեղանի նրա վշտա-հար սրտին, խոսքեր, որոնք դուռնաբացում և



ում է Առաջնորդի բաղման առթիվ Կարմիր հրապարակից տրված ռադիոհաղորդումը:

է միայն սգո մեղեդին Մոսկվայի Կարմիր հրապարակից:

Ահա լոնց նաև մեղեդին: Լսվում է Սովետական Միության Մինիստրների Սովետի նախագահ Գ. Մ. Մալենկովի ճառը, նա հրաժեշտի խոսք է ասում մեծ Ստալինի դա-դադի մոտ:

Սովետական կառավարության նոր նախա-գահի, ինչպես նաև նրա առաջին տեղակա-

հավատ էին ներշնչում առ այն, որ լենինի ու Ստալինի գրողը գտնվում է վստահելի ձեռքերում:

Ցերեկվա ուղիղ ժամը 1-ն է տեղական ժամանակով: Ռադիոն ազդարարում է, որ Սովետական կառավարության և պարտիայի ղեկավարները Ի. Վ. Ստալինի դադադը բարձրացրած տանում են ղեկի դաժնարան: Հրապարակում գտնվող մարդիկ բոլորն

անխտիր հանում են գլխարկները և մնում քարացած, գլխիկոր, Անվերջ հնչում է սգո մեղեդին... Շատերի կրծքից պոռթկում է զուսպ հեկեկանքը...

Այդ պահին Քանաքեռի սարալանջից որոտում է հրանոթային համազարկը։ Որոտին խառնվում են զործարանների և շոգեքարշների աղեկտուր, բեկբեկուն սուլոցները։ Փաղաքում հինգ բուպեով դադարում է ամեն երթեհեկությունը։

Ոչ պակաս հուզիչ էր տեսարանն այդ օրը Քանաքեռի սարալանջի նոր, քնդարձակ զրոսայդում, ուր գտնվում է Ի. Վ. Ստալինի հուշակապ մոնումենտ-քանդակը։

Օրվա երկրորդ կեսին այստեղ էին եկել տասնյակ հազարավոր երեանցիկներ։ Մարդիկ անվերջ շարանով մոտենում էին մոնումենտի պատվանդանին, մի պահ կանգնում լուռ, գլխիկոր, նայում առաջնորդի բրոնզյա վիթխարի քանդակին ու հեռանում արցունքը ալքերին, վիշտը սրտներում։

Շատերը պատվանդանին դնում էին թարմ ծաղիկների փունջեր և պսակներ։ Ահա մոտենում են մի խումբ դպրոցականներ։ Նրանք բերում են թարմ ծաղիկներից իրենց ձեռքով հյուսած մի գեղեցիկ ծաղկեպսակ, որը

խնամքով տանում և դնում են պատվանդանին։

Դպրոցականների հաջորդում է զինվորական վաշտը։ Դրանք հայկական զորամասերից մեկի մարտիկներն են իրենց հրամանատարի գլխավորությամբ։ Զինվորական հատու քայլերով նրանք մոտենում են մոնումենտին և կանգ առնում։ Լսվում է հրամանը։ Բոլորը պատվի են առնում։ Շարքից դուրս են գալիս մի խումբ մարտիկներ և իրենց հետ բերած հսկայական ծաղկեպսակը տանում և դնում են պատվանդանին ու մնում մի պահ քարացած, գլխիկոր։ Լսվում է դարձյալ հրամանը։ Զինվորները հատու քայլերով ետ են դառնում, գրավում իրենց տեղերը և վաշտը նույն կարգով հեռանում է։

Մեծ առաջնորդի մոնումենտ-քանդակի պատվանդանին պսակներ են դնում երեանի զործարանների, հիմնարկների, ուսումնական հաստատությունների, դպրոցների տասնյակ կոլեկտիվներ։

Մինչև ուշ երեկո մոնումենտի շրջակա հրապարակը լի էր մարդկանցով։

Հալոց մայրաքաղաքը իր խորին հարգանքն էր մատուցում և վերջին հրաժեշտն էր տալիս իմաստուն առաջնորդին և ուսուցչին, մեծ Ստալինին...





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ւ Ո Ւ Ս

1953 թվականի Հունվարի 1-ին Մայր Տաճարում ամանորի առթիվ տեղի ունեցավ հանդիսավոր սուրբ պատարագ, ամբողջ միաբանության և ժողովրդի խուռն բազմության ներկայությամբ: Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը: Սուրբ պատարագի վերջում սրբազանը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ գեղեցիկ կերպով բնորոշելով հաջողություններով և նվաճումներով պսակված անցած տարին և չեքմորեն ողջունելով նոր տարվա մուտքը:



Հունվարի 6-ին՝ Ս. Մենդյան և Մկրտության օրը տոնվեց ամենայն հանդիսավորությամբ: Տաճարը լի էր խուռն բազմությամբ: Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը, որն իր հավուր պատշաճի քարոզում վեր հանեց Քրիստոսի մարդեղության համաժարողության նշանակությունը:



Հունվարի 5-ին և 6-ին տոնակատարությունների առթիվ Մայր Աթոռից Օշական մեկնեցին բարեշնորհ Նահապետ արքեպիսկոպոսը և Աթոռի կրտսեր միաբան շնորհուհակ Գուրգեն սարկավազը:

Տոներին անմիջապես հետո նրանք վերադարձան Մայր Աթոռ:



Սույն թվականի Հունվարի 3-ին գերաշնորհ Վահան արքեպիսկոպոսը, ուղեկցությամբ Մայր Աթոռի միաբան արժանապատիվ Տ. Նիկոլ ավագ քահանա Բավիյանի, մեկնեց Բաքվի թեմ՝ Բաքվում Ս. Մենդյան և Զորահյանյաց տոնակատարությունները ավելի հանդիսավորությամբ անց կացնելու համար:

Գերաշնորհ սրբազան հայրը Բաքվում Մենդյան և Զորահյանյաց տոնակատարությունները անց կացնելուց հետո մեկնեց Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի՝ թեմական զործերը վերստուգելու և համապատասխան կարգադրություններ անելու համար:



Հունվարի 5-ին Մայր Տաճարում տեղի ունեցավ Ս. Մենդյան ճրագալույցի երեկոյան հանդիսավոր սուրբ պատարագ, հավատացյալների մեծ բազմության ներկայությամբ: Պատարագիչն էր արժանապատիվ Տ. Խորեն ավագ քահանա Մուշանյանը:



Հունվարի 13-ին՝ Տիրու Անվանակոչության տոնի օրը, և հունվարի 15-ին՝ Ս. Հովհաննու Կարապետի տոնի օրը, մեծ շուքով տոնվեցին Մայր Աթոռում: Երկու դեպքում էլ պատարագիչն էր բարեշնորհ Կոստանդին արքեպիսկոպոսը:



Հունվարի 14-ին գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, ուղեկցությամբ շնորհունակ Սարգիս սարկավազի, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, մեկնեց Հյուսիսային Կովկասի հայաշատ թեմը, Արմավիր քաղաքը՝ թեմական գործերի հետ ծանոթանալու համար:



Հունվար ամսվա ընթացքում, էքսկուրսանտների բազմաթիվ խմբեր (թե՛ արտասահմանից և թե՛ Սովետական Միության այլևայլ քաղաքներից՝ Մոսկվայից, Բաքվից և այլ քաղաքներից), այցելել են Ս. էջմիածին՝ նրա դարավոր հուշությունները ուսումնասիրելու և տեսնելու համար:

Այցելող խմբերին տրվում էին բազմակողմանի բացատրություններ՝ Մայր Աթոռի միաբանության կողմից:



Փետրվարի 1-ին Մայր Տաճարում, հանդիսավոր պատարագից հետո, Մայր Աթոռի

հանգուցյալ ավագազույն միաբան Ռուբեն արքեպիսկոպոսի մահվան տարելիցի կապակցությամբ, պատարագիչ սրբազան հայրը իր մխիթարական խոսքերով վեր հանեց հանգուցյալի արժանավոր կյանքն ու գործունեությունը և սիրտին նրա հարազատների վիշտը:



Փետրվարի 5-ին, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, թեմական գործերով Հյուսիսային Կովկասի և Նոր-Նախիջևանի թեմից Մայր Աթոռ էր ժամանել արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Զորչոփյանը:



Փետրվարի 7-ին Մայր Աթոռի միաբանությունը ներքին կարգով նշեց գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի քահանայական և հասարակական գործունեության 50 տարին: Միաբանության կողմից հորելյարին մատուցվեցին նվերներ:






ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՄԱՐՏԻՈՍ ՏԵՐ-ԱՏԵՓԱՆՅԱՆ

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՎԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Սովետական Հայաստանի աշխատավորությունը արտադրական բոլոր վերելքով ու անաչման ոգևորությամբ դիմավորեց աշխատավորների դեպուտատների տեղական Սովետների ընտրությունները:

Մարտի 1-ին նրանք տոնական ցնծությամբ մեջ էր: Գեղեցկաշեն բաղձահարկ շենքերի վրա միութենական կարմիր դրոշակի կողքին ծածանվում էր Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի պետական դրոշակը: Ընտրական տեղամասերի և պաշտոնական շենքերի ճակատները զարդարվել էին մեծ առաջնորդի ու Սովետական պետության ղեկավարների մեծադիր նկարներով և պլանատներով: Կարմիր պաստառներից մեկի վրա կարդում ենք. «Ձայն տալով կոմունիստների և անպարտիկանների Ստալինյան բյուրի թեկնածուների օգտին, ընտրողները ծայն կտան այն բանի օգտին, որ մեր սոցիալիստական Հայրենիքը այսուհետև էլ լինի հզոր և ազատ, որ մեր Սովետական պետությունը լինի ուժեղ և անպարտելի»: Եվ իրոք, սովետական քաղաքացիները ձայն են տալիս մինչև վերջ ժողովրդին նվիրված մարդկանց օգտին, ընտրում են տեղական Սովետների դեպուտատներ, որոնք պետք է ծառայեն ժողովրդին, կատարեն նրա պահանջները, ջանան հարազատ երկրի էլ ավելի ծաղկման ու բարգավաճման համար: Եվ ահա այդ խորը դիտակցումը մղում է մարդկանց դեպի տոնականորեն զարդար-

ված փողոցները, դեպի ընտրական տեղամասերը: Մարդիկ շտապում են իրենց ազատ, անկաշկանդ ձայնը տալու իրենց սեփական պետության գործիչների օգտին:

Արդարև, Սովետական Հայրենիքում իշխանությունը պատկանում է աշխատավորներին՝ հանձինս պետական օրգանների, սկսած Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Գերագույն Սովետից, մինչև քաղաքային ու գյուղական Սովետները, որոնց ընտրության ակտիվորեն, հավասարապես և կատարյալ ազատությամբ մասնակցում են բոլոր քաղաքացիները:

Ստալինյան սահմանադրության 11-րդ գլխում որոշակիորեն սահմանված է.

«Որ, դեպուտատների ընտրություններն ընդհանուր են: ՍՍՄԽ-ի 18 տարին լրացրած բոլոր քաղաքացիները, անկախ ուսնայական և ազգային պատկանելիությունից, սեռից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու դեպուտատների ընտրություններին, քացառությամբ խնդալարների և այն անձերի, որոնք դատարանի կողմից դատապարտված են ընտրական իրավունքների զրկումով (հոդ. 135):

Որ, դեպուտատների ընտրությունները հավասար են. յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայն. բոլոր քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով (հոդ. 136):

Որ, կանայք ընտրելու և ընտրվելու իրավունքից օգտվում են տղամարդկանց հետ հավասարապես (հոդ. 137):

Որ, դեպուտատների ընտրության ժամանակ քվեարկությունը գաղտնի է (հոդ. 140):

Որ, յուրաքանչյուր դեպուտատ պարտավոր է ընտրողների առաջ հաշիվ տալ իր աշխատանքի և աշխատավորների դեպուտատների Սովետի աշխատանքի մասին և կարող է ամեն ժամանակ ետ կանչվել ընտրողների մեծամասնության որոշմամբ, օրենքով սահմանված կարգով (հոդ. 142):

Ես այդ իրավունքը առաջին անգամ կենսագործելու երջանկությունն ունեցա մարտի 1-ին (ես արտասահմանից Հայաստան եմ ժամանել 1951 թվականին և սովետական քաղաքացիության արժանացել 1952 թվականին— Մ. Հ.):

Այդ օրը ես ու կինս ներկայացանք Սպանիայանի ռալոնի № 10 ընտրական տեղամասը: Չնայած վաղ առավոտ էր, բայց տեղամասի մոտ հավաքվել էր խուռն քաղմություն. քվեարկելու մեծ իրավունքը կենսագործելու համար հավաքված երկսեռ ընտրողները զվարթորեն խոսակցում են իրար



Ընտրողները Բվեաբկում են

1953 թվականի մարտի 1-ին տեղի ունեցած՝ Հայաստանի աշխատավորների դեպուտատների տեղական Սովետների ընտրությունները մի անգամ ևս հաստատեցին այն հանրահայտ ճշմարտությունը, որ սովետական ընտրական սիստեմը ամենադեմոկրատականն է ամբողջ աշխարհում, որովհետև նա ապահովում է բոլոր քաղաքացիների համար ընդհանուր, հավասար, ազատ, ուղղակի և գաղտնի քվեարկության իրավունքը:

Հետ, մինչ ուրիշ շատեր, իրենց ձայնը տալով առաջադրված թեկնածուներին, դուրս են գալիս շենքից, գոհ ու կենսուրախ:

— Դիտենս ինչ, այս ընտրության օրերին իմ սիրտն անհուն հպարտությամբ է լցվում, մաաճելով, որ Հայաստանում, տղամարդկանց հավասար իրավունքով ընտրություններին մասնակցում են կանայք:— ասում է կինս, երբ թեանցով բարձրանում ենք տեղամասային շենքի աստիճաններից:— Իսկապես մեղքանում եմ արտասահմանի կա-

նանց, որոնք զուրկ են հասարակական աշխատանքի լայնորեն մասնակցելու իրավունքից:

Ես զգում եմ, որ իմ հոգին պարուրած նույն երջանկությունն է ապրում նաև կիսնս: Հիշում եմ արտասահմանում ապրած մեր ծանր օրերը...

Մտե՛լ էինք Ն 10 ընտրական տեղամասի շենքի նախասրահը: Ընտրողների անունները, մեքենագրված մաքուր թղթերի վրա, կախվել էին պատերից՝ շրջանակների մեջ: Մի բուպեի գործ եղավ մեր անունները գտնել այդ ցանկերում: Ներկայացնելով մեր ինքնությունը հաստատող փաստաթղթերը, ստացանք բյուլետենները: Ի՞նչպե՞ս չքվեարկեն այսպիսի ազատ ընտրություններում, ի՞նչպե՞ս ամբողջ հոգով քո ձայնը լսաս ժողովրդի մարդկանց օգտին: Մենք անմիջապես մոտենում ենք կնքված քվեատուփին և նրա մեջ դրում բյուլետենները: Մենք մեր ազատ ու անկաշկանդ ձայները տվեցինք պարտիականների և անպարտիականների ստալինյան անխախտ լուրի թեկնածուների օգտին, այն հաստատված տոմարով, որ ձայն տալով նրանց, մենք ձայն տված էինք սովետական ժողովրդի բարոյաքաղաքական միասնության ամրապնդման օգտին, մեր Հայրենիքի տնտեսապես, մշակութապես և քաղաքականապես հզորացման օգտին, աշխարհի ժողովուրդների միջև կայուն խաղաղության ընդլայնման և ամրապնդման օգտին, խաղաղություն, որի անհավասարելի արդյունքն է անկախության, անպարտելի դրոշմակիրն ու անխորտակելի պատվարն է Սովետական հղոր պետությունը:

Դրամատիրական երկրների բնորակա՛ն տեղամասերում շատ սովորական երևույթ է ընտրական խաղըությունները, ինչպես՝ անդրադոն ընտրողի հանձնված ընտրական բյուլետենը խեղաթյուրելը, նրբանցքներում ագիտացիա կատարելը, մի անգամ ձայն տված մարդուն ուրիշ մի տեղամասում նորից

ձայն տալը, ընդդիմադիր կողմի ընտրողների անունները, դեռևս ձայն չտված, ընտրական ցուցակից չնջելը, քվեատուփի մեջ մեկ քվեի փոխարեն 2—3 քվե ներմուծելը, ընտրական տեղամասի նրբանցքներում զինյալ ուժերի պահակ կանգնեցումը, ձախողության դեպքում՝ քվեատուփին առևանգելը, շարդին ու քվեաթղթերն անհետացնելը, կարգը պահպանելու նպատակով փողոցներում տանկերի, զրահապատ մեքենաների, զինվորական շոջանների շրջապանելը և այլն և այլն:

Այնտեղ աշխատավոր խավերը, այսինքն՝ ընտրողների խոշոր մեծամասնությունը փախուստ է տալիս քվեատուփերից, զոհ լղատնալու համար որոշ մարդկանց քահանայություն: Ումանք էլ սպասում են ամենաավերիվ բուպեին՝ իրենց ձայնը մի քանի ոսկիով թանկ ծախելու համար: Սրա հետևանքը լինում է այն, որ այդ երկրներում, ընտրությունների մասնակցողների ընդհանուր թիվը շատ ցածր է լինում:

Ի հակադրություն, մեր երկրում պետական օրգանների ընտրությունները կատարվում են Ստալինյան սահմանադրության վերոհիշյալ հոդվածների համապատասխան ձևով, ամբողջ աշխարհում ամենադեմոկրատականն եղող սովետական ընտրական սխեմանով: Մեր երկրում ընտրողները մեծ ուրախությամբ են մոտենում քվեատուփերին, անտեղ որևէ արդելքի ու ճնշման ընտրելու իրենց վստահությունը արժանապատմարդկանց: Դա մեծ իրավունք է ազատության մեծ երկրի բոլոր քաղաքացիների համար:

Ահա այդ մեծ իրավունքն է, որ կենսագործեց Հայաստանի ժողովուրդը մարտի 1-ին՝ անսահման խանդավառությամբ ու անխախտ միասնությամբ ընտրելով իր սիրելի իշխանությունը՝ հանձինս աշխատավորների դեպուտատների օկրուպային, շրջանային, քաղաքային, գյուղական և ավանդային Սովետների:





2. ԱՐԱՄՏԱՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԵՒՔԻ ԼՍՎԱԳՈՒՅՆ ՈՐԴԻՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՍՏԻՆԵՐԻ ՃԱՐՔՈՒՄ



յս տարվա մարտի 1-ին, Սովետական Հայաստանի բոլոր քաղաքներում, գյուղերում և ավաններում տեղի ունեցան աշխատավորների դեպուտատների տեղական Սովետների ընտրությունները։ Մայր Հայրենիքի հարյուր հազարավոր քաղաքացիների հետ, հայրենազարձ հայերը այս անգամ ևս մեծագույն խանդավառությամբ և հրճվանքով կենսագործեցին աշխարհի ամենադժոկրատական կոնստիտուցիայով՝ Ստալինյան կոնստիտուցիայով նախատեսված իրավունքը՝ ընտրել հարազատ իշխանության պետական գործիչներին, այս անգամ՝ տեղական Սովետների դեպուտատներին։

Սովետական Հայաստանի նոր քաղաքացիները՝ հայրենազարձ հայերը, ո՛չ միայն

օգտվում են ընտրելու իրավունքից, որից, մեծ մասամբ, գուրկ էին արտասահմանում, այլև բախտ ունեն ընտրվելու որպես հարազատ իշխանության պետական օրգանների դեպուտատներ։ Ինչպես դեպուտատական նախորդ ընտրություններին, այս վերջին ընտրություններին ժամանակ ևս մի քանի հայրենազարձ հայեր, մեր Հայրենիքի լավագույն որդիների ու դուստրների շարքում, իրենց աշխատավարի կոլեկտիվի կողմից առաջադրվեցին դեպուտատության թեկնածուներ և մարտի 1-ին, քվեարկության օրը, ընտրվեցին որպես քաղաքացի, ռալոնական, գյուղական և ավանային Սովետների դեպուտատներ։

Ովքե՛ր են այդ դեպուտատները, ժողովուրդը ո՞ւմ է տվել իր վստահությունը։ Մանոթանա՞նք նրանցից միայն մի քանիսի՝ Սրբվանի քաղաքային Սովետի հինգ դեպուտատների կյանքի և գործի հետ։

ԴԵՊՈՒՏԱՏ ՄԵԼԻՆ ՍԱՆՈՒՇՅԱՆԸ

Թշվառ մանկություն, կյանքի դառն հարվածներ, վիրտ, անզուսպ ու համարձակ պայքար և վերջապես՝ երջանիկ կյանք։ Մայր Հայրենիքի հողի վրա — այս է Մելինե Մանուչյանի կյանքի ուղին։

Մելինեն ծնվել է 1914 թվականին, Կոստանդնուպոլսում։ Վաղ մանկության տարիներին, Մելինեն կորցնում է ծնողներին, մնում անազնական որբուհի։ Որբանոցների հետ նա տեղափոխվում է քաղաքից քաղաք, երկրից երկիր՝ Կոստանդնուպոլիս, Ադաբազար, Հոնաստան, Ֆրանսիա։ Փարիզում նրան հաջողվում է ընդունվել Դպրոցասեր տիկնանց վարժարանը։ Ուշիմ և ընդունակ

աշակերտուհին 1929—1930 դպրոցական տարեընթացին ավարտում է դպրոցը ճաշակալիս («գերազանց») գնահատականներով։

Բարձրագույն կրթություն ստանալու տենչը մնում է չհազեցված՝ ինչպես տենչը շատ ու շատ նմանների, որոնք ապրում են դրամատիկական երկրներում, ուր, ինչպես հայտնի է, բարձրագույն կրթությունը սակավաթիվ մարդկանց մեծաշնորհն է...

Որբանոցների զրկանքներով և դառնություններով լի կյանքը, բարձրագույն ուսման ճանապարհի վրա անհաղթահարելի խոլընդոտները, մարդավայել ապրելու դժմ հարուցված լեռնակուտակ դժվարություններ։

ըը՝ վաղաժամորեն հասունացնում են պատանուհու գիտակցությունը, նա կարողանում է կողմնորոշվել և գտնել ճիշտ ճանապարհը։ Մեկնեն առանց տատանվելու ընտրում է Սովետական Հայաստանի բարեկամների շրջանը։ Պայքարի ու մարտական ճանապարհին էլ 1933 թվականին նա հանդիպում է Միսակ Մանուշյանին, որի հետ կապում է իր



կյանքը, գործը, իր խոհերն ու երազանքները։

Երկու երիտասարդների՝ որոնց հոգին համակված է համամարդկային նույն իդեալներով, որոնց էությունն ամբողջ թրթռում է հայրենասիրական նույն ջերմ կալծերով, կյանքի ուղին միակցվում է, նույնանում։ Կյանքն անբաժան ընկերներ և դործակիցներ են նրանք՝ մինչև այն աճավոր օրը, երբ գետապուլականների դաժան զնդարկները խլում են երիտասարդ Միսակի հանրանվիր կյանքը։

Միսակ Մանուշյանը մեծ դեր է խաղում Մեկնեի գաղափարական աճի և կոմիսն գործում, Մեկնեն նրանից և Ֆրանսիայի պայքարող մարտիկներից սովորում է արիականություն, վճռականություն, դժվարությունները հաղթահարելու մեծ ունակություն։ Մի-

սակ Մանուշյանը նվիրված, սիրված, հետըհետև ավելի լայն ժողովրդականություն վաճելով զեկավարներից մեկն է դառնում Հայաստանի բարեկամների ընկերություն, որը հայաշատ կենտրոններում, Մեկնեն այդ ընկերության կենտրոնական վարչության անդամ էր և կենտրոնական գրասենյակի գործերի կառավարիչ։ Նա վարում էր դադարուն մասնաճյուղների, շրջանի ղեկավար ընկերների հետ, կազմակերպում է դրադարան, քաշխում է աշխատավորական լայն մասսաներին Սովետական Հայաստանից տացվող զրեքերն ու պարբերական մամուլը, անձամբ կազմակերպում Երևանից ուղարկված կինոֆիլմերի ցուցադրումը Փարիզում, փարիզյան հայահոծ արվարձաններում, նահանգական քաղաքներում։ Բոցաշունչ հայրենասեր երիտասարդ աղջիկը, դավադիր դավաճ շրջելով, հայ աշխատավոր մասսաների բաղամամարդ միտինգներում ջերմ ելույթներ է ունենում, բանավոր, կենդանի խոսքը տանելով այն հեռավոր վայրերի հայ պանդուխտ աշխատավորությանը, որոնց հետ հրապարակախոս Միսակը կարողանում է խոսել «Հանգի» տոբրոսայից, չկարողանալով միշտ և ամենուրեք անձամբ հասնել, անձամբ կազմակերպել ու օգեշնչել։ Մեկնեն հանդիսանում է Ֆրանսահայ կանանց առաջադիմական միության հիմնադիրներից և ամենակատիվ ղեկավարներից մեկը։ Հայրենիքի սերը, Հայրենիքի օրավուր նվաճումները ոգեւորում էին նրան, և նա իր արտի ջերմ խոսքն էր տանում Ֆրանսիայում տեղ դտած հայրենաբաղձ, օտարական հայերին։

1938 թվականին լուծարքի է ենթարկվում Հայաստանի բարեկամների ընկերությունը, տեղը զիջելով Ֆրանսահայ ժողովրդական միությունը, որի կենտրոնական վարչության կազմի մեջ մտնում են Միսակն ու Մեկնեն՝ առաջինը որպես առաջին քարտուղար, երկրորդը՝ որպես կենտրոնական գրասենյակի գործերի կառավարիչ։

1939 թվականի սեպտեմբերի 1-ին պայթում է Համաշխարհային երկրորդ պատերազմը։

Միսակ Մանուշյանը 1942 թվականի աշնանը կազմակերպում է Փարիզում և շրջակայքում պարտիզանական ինտերնացիոնալ լորս ջոկատներ և նշանակվում է նրանց հրամանատար։ Այս լորս մարտական ջոկատները, որոնք կոչվում էին «Ստալինի դրազ», «Չապաև», «Վիկտոր Զուլգո» և «Ազատություն», մի ամբողջ տարի հսկայական աշխատանք են տանում։ Գնդացիներով, ձեռնառումներով և ատրճանակներով զինված, հարձակվում են գերմանական փո-

խաղրամիջոցների վրա, գծից հանում ռազմամթերք փոխադրող ամբողջ զենացքներ, խորտակում հիտլերյան բանակի բազմաթիվ բեռնատար և մարդատար ավտոմեքենաներ, պայթեցնում զինվորական օրեկտներ, ոչնչացնում նրանսիայի դավաճանների, դեստապոլական հրեշներին, այդ թվում փարիզի պարետ Ռիտտերին և զենեքալ նոն Շաուսբուրգին... Մեխինեն ամենաակտիվ մասնակցություն է ունենում այս բոլոր պարտիզանական սխրագործությունների կազմակերպման և ի կատար ածման մեջ, նա կատարում է զրաբորություններ, շարադրում և բազմադրում է թուրքիկները, կապ է պահպանում մարտիկների միջև, տեղ հասցնում հրամանատարի ցուցումներն ու կարգադրությունները, զենք փոխադրում, վիրավորված պարտիզանների գաղտնի բժշկական սպասարկությունը կազմակերպում, ձերբակալվող ընկերներին սննդամթերքի և այլ կարիքների մասին հոգում... Եվ այս բոլորի մեջ դեռ ժամանակ է գտնում «Աղաղություն» անունով հայրենի թուրքիկ-թերթը պատրաստելու, Շաուսբուրգի և նրա ընկերակիցների հետ պայքարելու, բայց միշտ էլ, շնորհիվ իր հիմնական զգալնության և պատրաստամտության, կարողանում է խույս տալ, կորցնել հետքերը նրան կոչում են «Անտեսանելի»:

Հասնում են ճակատագրական օրերը, իր հերոսությունը ու անհաշտ պայքարով աչքի ընկած խիզախ հրամանատարը՝ Միսակ Մանուչյանը, 23 մարտական ընկերների հետ, մի դավաճանի մատնությամբ ձերբակալվում է:

Բանտում և դատարանի առջև, չարարված, խոշտանգված պարտիզանները և նրանց հրամանատարը չեն կորցնում իրենց արիությունը, իրենց պահում են հերոսի պես: Դատարանը որոշում է զնգակահարել նրանց: Հաջորդ օրը՝ 1944 թվականի փետրվարի 24-ին դատավճիռն ի կատար է ածվում:

Մանուչյանի և նրա զինակիցների ձերբակալումից անմիջապես հետո, Գետապոն և զերմանական ֆաշիստներին ծախված ֆրանսիացի լրտեսներ սկսում են խիստ հետամուտ լինել բանտարկելու Մեխինենին: Բայց պարտիզանական կենտրոնի աջակցությամբ, կեղծ անձնագիր ստանալով, Մեխինեն կարողանում է ծաղկել: Ամուսնու և իր մարտական ընկերների հերոսական մահը խորագետնեցնում է երիտասարդ կնոջ մարդկային էությունը, վտանգում նրա ֆիզիկական առողջությունը: Բայց իր կանացի մարմնում կար պողպատակուռ կամք, ամուր հոգի. նա շուտով վերագտնում է իրեն և շարունակում

պայքարը մինչև հաղթանակ և մինչև Սովետական Հայաստան գալու օրը:

1945 թվականի աշնանը Մեխինեն Մանուչյանը գալիս է Հայրենիք՝ Սովետական Հայաստան: Գրկարաց, շերմ ընդունելություն է անում նրան մեր հայրենական ժողովուրդը: Նրա գալուտը ավետում էր տասնյակ հազարավոր պանդուխտ հայերի վերադարձը Հայրենիք, ավետում էր հետագա զանգվածային հայրենադարձությունը:

Պետությունը Ստալինյան պոզիտայի վրա, նորակառույց մի շենքում, օժտում է նրան հատուկ հարկաբաժնով, մշտական բնակության համար: Մեխինեն ստանում է 500 ռուբլի ամսական թոշակ, Արտասահմանի հետ կոպտորական կապի Հայկական ընկերությունում՝ հարմար և լավ վարձատրվող պաշտոն: Թվում է, թե ոչինչ այլևս հարկավոր չէ, կարելի է ապրել խաղաղ ու հանգիստ... Բայց Մեխինեն բնավորությանը հատուկ չէր հանգստությունը, նա մտնում է Երևանի Պետական համալսարանի ֆիզիոլոգիական ֆակուլտետը՝ բարձրագույն ուսում ստանալու իր վաղուցվա իղծը կենսագործելու: Առաջին կուրսից մինչև հինգերորդն անցնում է գերազանց զնահատականներով և ավարտում է առաջին կարգի դիպլոմով: Մեխինեն այնուհետև ընդունվում է համալսարանի ասպիրանտուրայի՝ ժուռնալիստիկայի գծով: Նա արդեն փայլուն հաջողությամբ հանձնել է ասպիրանտական միսիոներները և սկսել աշխատել իր դիսերտացիայի վրա, որի թեման է՝ «Հաղորդումը Սվաբյանի Վեդալսե և Երա ժամանակը»: Մի քանի ամսից կապալտպանի իր դիսերտացիան և կատանա գիտական կոչում:

Սովետական Հայաստանում, ուսումնական և գիտական աշխատանքի հետ միասին, Մեխինեն Մանուչյանը ունեցել է հասարակական ակտիվ գործունեություն՝ գրել է հոգվածներ, ունեցել է ելույթներ բազմամարդ հավաքություններում: Այժմ էլ համալսարանի օրգան «Սովետական ուսանողություն» թերթի խմբագրական կոլեգիայի անդամ է և գլխական ճանադատական բաժնի վարիչ: Արդեն երկու անգամ՝ 1947 և 1950 թվականներին, ընտրվել է Երևանի քաղաքային Սովետի դեպուտատ: 1953 թվականի մարտի 1-ին, նա երրորդ անգամ ընտրվեց մայրաքաղաքի Սովետի զեպուտատ:

Ժողովուրդը ճանաչում, սիրում և վստահում է Հայրենիքին նվիրված, խիզախ, համարձակ և ընդունակ մարդկանց:

ԴԵՊՈՒՏԱՏ ԲԱՐՍԵՂ ՏՈՆԻԿՅԱՆԸ

Ռուսիի ձեռնարկով վարպետությամբ Այսպես են կոչում Թեթև արդյունաբերության մինիստրության Մետաղյա իրերի դործարանի մեխանիկական զեկի ավագ վարպետ Բարսեղ Տոնիկյանին:

Բյուրեղայի Բրուսա նահանգի Մեծ Նոր-Գյուղ կոչված հայաբնակ գյուղում որանից 43 տարի առաջ ծնվեց Բարսեղը, չքավոր դուռնացու ընտանիքում, Երեխան հինգ տարեկան էր՝ երբ հասավ հայոց պատմության խոշորագույն աղետը— 1915 թվականի արեմատահանքի անդահանություններն ու ղանդվածային կոտորածները, Երեխան, յուրայիններին և գյուղի ամբողջ բնակչության հետ, թաղվեց ճանապարհ ընկավ դեպի տառապանք և մահ... Հասավ մինչև Գոնիա նահանգի մի գյուղը, իր համադրուղացիներին շատերի հետ, Բարսեղի հայրն ու մայրն էլ կորան համաարած աղետի մեջ... Ինքը հրաշքով փրկվեց, բայց սուլթանական Բյուրեղայի շտեմբանի բարբարոսությունը անբուժելի վերք բացեց նրա մատաղ հոգում: 1918 թվականի զինադադարից հետո, որբացած երեխան խառնվեց վերապրող խլիպաների կարավաններին և գալեց, անգիտակից ու մտամոլոր, Անցան շարաքներ, Մի օր էլ փոքրիկ Բարսեղը իրեն զտավ Կոստանդնուպոլսի փողոցներում, որպես անապատառ երեխա, մերկ ու սոված... Նրան տարան Կուլալիի հայոց որբանոցը: Այնուհետև նա ընկավ Հունաստան, ուր ժամանակավորապես պատսպարվեց ամերիկյան որբանոցների մեկում, բայց մի օր էլ ամերիկացիները հանկարծ ցրեցին որբանոցը, Հաղարավոր անչափահաս որբեր ու որբուհիներ նետվեցին փողոցները, անտեր ու անօգնական: Այն ժամանակ, Եգիպտոսի հայ գաղթից, որ, համեմատած մյուս հայ գաղթիների հետ, փոքր ինչ ավելի ունեւոր է, որոշեց այդ երեխաներին մի քանի հազարի բերել Եգիպտոս, տեղ կանգնել, աշխատանքի կամ արհեստի տալ: Եգիպտոս բերված որբերի և որբուհիների թվումն էր Բարսեղ Տոնիկյանը: Նա դեռ վաղ երեխայությունից, որբանոցներում, քաջադիկ սեր էր ցուցաբերել դեպի մեքենան և տեխնիկան, ու բազադիկ ընթու-նակություններ՝ մեխանիկի արհեստում: Եգիպտոսում նա մտավ Չաբլալյանների մետաղագործական ֆաբրիկան՝ արհեստ սովորելու: Կարճ ժամանակ հետո դարձավ այդի ընկնող վարպետ. միաժամանակ խառառ

եր, փականագործ, պլաստար-նորարար... Այնտեղ, ուր Եվրոպայում կամ Ամերիկայում մասնագիտակցեց բարձրագույն կրթություն ստացած ինժեներներն անճիղում էին, հաջողում էր այս ինքնուսուցող, սարքեր էր բերում անհուսալիորեն խանդավառ համարվող մեքենաները, իր ձեռքով նոր մասեր էր սարքում...:



Նա օրեր ու դիշերներ ելաղում էր սիրասուն Հայրենիքը, ուղում էր տեղափոխվել Սովետական Հայաստան և իր սեփական ժողովրդի օգտին ծառայեցնել իր մասնագիտությունն ու աշխատանքը: «Բախտավոր կլինեմ,— ասում էր նա,— երբ ապրեմ իմ հարազատ Հայրենիքում, երբ զավակներս ընդմիջտ փրկվեն իմ երեխայությունը ունենալու վտանգից, մի վտանգ, որ միշտ առկա է այս երկրներում»:

Երբ Սփյուռքից զանգվածային հայրենադարձության մեծ շարժումն սկսվեց, վերցնելով կնոջն ու երկու երեխաներին, Տոնիկյանը եկավ Հայաստան:

Հայրենիք հասնելուց մի քանի օր հետո նա աշխատանքի ընդունվեց Թեթև արդյունաբերության մինիստրության Մետաղյա ի-

րերի գործարանը, որը պատրաստում է կե-
րասինկաներ, էլեկտրական արդուկներ, նի-
կելապատ և կիսանիկել մահճակալներ, էմա-
լապատ ամաններ, Բարսեղը շոտով աչքի
ընկավ իր ազնիվ, բուրրանկիր աշխատան-
քով և վարպետությամբ, նշանակվեց մեխա-
նիկական ցեխի ավագ վարպետ։ Իր նկատ-
մամբ եղած այդ վստահությունը ոգևորեց
շնորհալի վարպետին։ Նա ոչ աշխատանք է
խնայում և ո՛չ էլ ժամանակ, որպեսզի գոր-
ծարանի բոլոր մեքենաները շարունակ սար-
քին լինեն։ Գործարանում աշխատանքի անց-
նելուց քիչ հետո, նա հնարեց նոր տիպի մի
կերասինկա, որ շուգայում վաճառող հին
տիպի կերասինկայից և՛ ավելի գեղեցիկ է,
և՛ ավելի խնայողական, շնի համեմատու-
թյամբ՝ խնայվում է ալյումին, պղինձ, խնայ-
վում է թվածնագողումի աշխատանքը։ Այդ-
պիսով, յուրաքանչյուր կերասինկայի վրա
խնայվում է 17 ռուբլի— այդքան շահ գնորդ
հասարակության համար։ Տոնիկյանը արժա-
նացավ մինիստրության գովասանագրքի և
ստացավ 12.000 ռուբլի պարգև։

Տոնիկյանը պտղատու և գեղազարդող ծա-
ռերով զարդարված սեփական բնակարան
ունի Զրաշտ փողոցում, Բաղրամյան պո-
ղոտայից քիչ հեռու։ 14 տարեկան որդին՝

Միհրանը գնում է դպրոց և լավ սովորող-
ներից է։ Աղջիկը՝ 9 տարեկան Մանիկը երա-
ժրտական կրթություն է ստանում Զայկով-
սկու անվան երաժշտական տասնամյա դպ-
րոցում։

Տոնիկյանը, որ ամսական ստանում է ոչ
պակաս քան 2.000 ռուբլի, ապրում է բարձր
և երջանիկ, աշխատում է իր երազած Հայրե-
նիքում, գործում է իր ժողովրդի, իր եղբայր-
ների և ցույրերի համար... Ահա թե ուտեղ
է գտել նա իր իսկական երջանկությունը,
ահա թե՛ երբ դարձավ նա բախտավոր մարդ։

Ծնեանի Մետաղյա իրերի գործարանի կո-
լեկտիվը, բարձր գնահատելով Տոնիկյանի
նվիրված աշխատանքը և հայրենասիրությունը,
առաջադրեց նրան Ծնեանի ցաղաքային
Սովետի ղեկավարության թեկնածու։ Ինչ-
պես սպասելի էր, Տոնիկյանը ընտրվեց։

Վերջերս նա աշխատում է ստեղծել նոր
տիպի կերասինկա, իր նախորդ ստեղծածից
ավելի գեղեցիկ և ավելի խնայողական։

— Եթե որոշել է, ուրեմն ա՛նպայման
գլուխ կհանի,— ասում է գործարանի դի-
րեկտոր Բենիկ Աբրահամյանը, ռուսի ձեռ-
ներով վարպետի նկատմամբ անսահման
վստահությամբ։

ԴԵՄՈՆՏՍՏ ՆԱԿՈՐ ԲԱԶԱՐՅԱՆԸ

Դեռևս 33 տարեկան մի երիտասարդ՝
բայց ի՛նչ փոթորկուտ կյանք, ի՛նչքան Թա-
փառուններ, վտանգներ, զրկանքներ ու տա-
ռապանք, մինչև այն օրը, երբ նա ոտք դրեց
Սովետական Հայաստան, և զուավ հանգիստ,
ապահովություն, երջանիկ աշխատանքային
առօրյա և ապագայի փայլուն հեռանկարներ։

1919 թվականին Թյուրքիայի Մարաշ քա-
ղաքում ծնված Հակոբ Բազարյանը ծնկեր
երեխա էր դեռ, երբ քեմալական թյուրքերի
յաթաղանը գործեց Մարաշում, կոտորելով
իթթիհատական թյուրքերի 1915—1918 թվա-
կանների համառարած կոտորածներից մի
կերպ ազատած և հազիվ մի տարուց ի վեր
իրենց ծննդավայրը վերադարձած Մարաշի
հայերին... Այս թյուրքական նոր սպանդից
փրկվեցին հազիվ մի քանի ընտանիք, այդ
թվում Հակոբի ընտանիքը։

Բազարյան ընտանիքը, մի նոր կոտորածի
մշտադո սպառնալիքից ազատվելու համար,
նորից դիմում է պանդխտության, անցնում է
Հայկա, որտեղ կրում է գործազրկության և
դրան ուղեկցող թշվառության սարսափները։
Հակոբի մայրը, թերասնումի հետևանքով

թոքախտի ճիրաններն է ընկնում և մահա-
նում։ Թշվառությունից հալածական ընտա-
նիքը Հայկայից գաղթում է Բելյուս, ուր ևս
հնարավոր չի լինում ապրուստ ապահովել։
Նորից գաղթ. այս անգամ ընտանիքը անց-
նում է Ֆրանսիա և հաստատվում Մարսե-
լում։ Հակոբի հայրը և երկու ավագ եղբայր-
ները բանվորություն են անում Մարսելում,
բայց նրանց շահը անբավարար է լինում ամ-
բողջ ընտանիքի ապրուստը ապահովելու,
ուստի զպրոցահասակ փոքրիկ Հակոբը և
նրանից փոքր ինչ մեծ եղբայրը հարկադրե-
վում են գիշերները մինչև ուշ ժամանակ թերթ
ծախել փողոցներում, սովամահ չլինելու
համար...

Այդպիսի էլ ապրուստի բավարար հնարա-
վորությունների չգտնելով, պանդխտ ընտա-
նիքը մեկ անգամ էլ ձեռք է վերցնում պան-
դխտության ցուպը և մեկնում օվկիանոսի
մյուս ափը, Բրազիլիա։ Այստեղ էլ, ընտանի-
քը տարիներ տևող զրկանքներից և ճիգերից
հետո, իր կտոր հացի տեղ է դառնում։ Հա-
կոբը չի բավարարվում միայն հացով, ուզում
է ամեն զնով ուսում ստանալ՝ միջնակարգ,

բարձրագույն, Ընտանիքը ընդդիմանում է. նա մի կերպ կարողանում է ավարտել լիցենզի, հետո՝ Սան-Պաուլոյի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետը: Դեռ ուսանողական նստարանից սկսում է հասարակական եռուն գործունեության և՛ հայ առաջադիմական շրջաններում և՛ բնիկ քաղաքական և առաջադիմական դեմոկրատական շրջաններում: Պորտուգալերեն լեզվով հրատարակում է «Արարատ» թերթը, նպատակ դնելով քաղաքականությանը ծանոթացնելու Սովետական Հայաստանի նվաճումների և հայ մշակույթի հետ: Ընդհանուրով է հիմնադրերներից մեկը Սան-Պաուլոյի Հայկական մշակութային ընկերության՝ դեմոկրատական և հայրենասիրական մի ընկերություն, որի վիցե-պրեզիդենտը Հակոբ Բաղարյանն էր: Նա մեծ աշխատանք է տարել քաղաքական և քաղաքացիական գործի կազմակերպման մեջ: 1947 թվականին եղել է հիմնադրերներից մեկը քաղաքային ազգային խորհրդի: Մասնակցել է քաղաքական դեմոկրատական թերթերի խմբագրության, աշխատակցել է զանազան քաղաքական թերթերի: Ակտիվ մասնակցություն է ունեցել խաղաղասերների համաշխարհային շարժման նվիրված քաղաքական մարմիններին... Իր առաջադիմական գործունեության համար ձեռքարկվել է, քանտարկվել: Քաղաքական ռեակցիոն մամուլը տպել է նրա լուսանկարը և պահանջել կառավարությունից՝ արտաքսել նրան Բրազիլիայից, որպես վտանգավոր ագիտատոր, տերրիորի կարգը խանգարող և այլն: Պատերազմի ամերիկյան հրձիգներին ծախու բրազիլական ռեակցիոն կառավարությունն այդպես էր գնահատում իր երկրի ազատության և խաղաղության համար պայքարող մարտիկին, սակայն քաղաքական ժողովուրդը մեծ սիրով է ընդունում նրան: 1949 թվականին, քաղաքական խաղաղասերները, գնահատելով նրա նվիրված աշխատանքը, ընտրել են նրան բրազիլական դեմագոգիայի անդամ՝ մասնակցելու Փարիզի խաղաղության Համաշխարհային կոնգրեսին:

1949 թվականի սեպտեմբերին Բաղարյանը մասնակցում է Դեմոկրատական երիտասարդության Համաշխարհային կոնգրեսին, Բուդապեշտում, որպես Ցրանսիայի, Արգենտինայի, Բրազիլիայի և Ուրուգվայի հայ երիտասարդության դեմագոգ:

1950 թվականին Հակոբը փոխադրվեց Մոսկվա, այնտեղից էլ ուղիղ երևան և ստացավ սովետական քաղաքացիության իրավունք: Հայրենիք հասնելուց թիչ հետո նա ընդունվեց Գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայական սեկտորի ասպիրանտ, 700 ուսուցիչ թոշակով, ապահովվեց բնակարանով և ամեն տեսակի ոչուրություններով, որպես-

զի երեք տարվա ուսումնառությունից և գիտական աշխատանքից հետո կարողանա դիտարկել աշխատանք և ստանալ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Գիտությունների ակադեմիան հրա համար հատուկ դասատուներ նշանակեց, կարճ ժամկետում մայրենի լեզու և ռուսերեն սովորելու համար: Արտակարգ համառությամբ և քրտնաջան աշխատանքի շնորհիվ Հակոբն այժմ խոսում և գրում է այդ երկու լեզուներով էլ:



Գիտությունների ակադեմիայի կուրեկտիվը 1953 թվականին նրան առաջադրեց Երևանի քաղաքային Սովետի դեպուտատության թեկնածու:

Ընտրություններից մի քանի օր առաջ, Ակադեմիայի նիստերի դահլիճում, դեպուտատության առաջադրված Հակոբ Բաղարյանը հանդիպում ունեցավ իր ընտրողների հետ: Ավելի քան 30 տարեկան հասակում հայրենի երկրում հայրենախոս դարձած երիտասարդ՝ առաջին հրապարակային ծնունդ էր մայրենի լեզվով: Հուլիս էր պահել և՛ Հակոբի և՛ ընտրող նրանց համար, ովքեր ծանոթ էին նրա անցյալին և կենսագրությանը:

— Կենքեք ինձ, հարգելի ընկերներ, որ դեռ ինչպես հարկն է չեմ տիրապետում հայոց լեզվին, — այսպես սկսեց նա իր ելույթը և շարունակեց. — Իս չեմ ունեցել այն

երջանիկ պայմանները, որ ունեն մեր սովետական մարդիկ: Մոտ երկու տարի է, ինչ էկել եմ Սովետական երկիր, և միայն այստեղ հնարավորություն ունեցա սովորելու իմ մայրենի լեզուն:

Ե՛մ կյանքի պատմությունը բնորոշ է միայն ինձ համար: Ես պատկանում էի հայ ժողովրդի այն հատվածին, որը բախտ չունեցավ օգտվելու ռուս մեծ ժողովրդի բարեկամության և Սովետական իշխանության անսահման բարեքննրից: Ես պատկանում էի հայ ժողովրդի արևմտյան հատվածին, որը իմպերիալիստների կողմից հրահրված թյուրքական շարժերի հետևանքով հայտնվեց, կոտորվեց ու ցրվեց աշխարհով մեկ: Ես պատկանում էի այն թափառական հայերի թվին, որոնք այսպես կոչված կապիտալիստական

գեմմոկրատիաներում ճանաչեցին գործազրկություն, սով, Հայրենիքի կարոտը և ամեն տեսակ դժվարություններ:

Դառնություններով ու զգվարություններով լի իր կյանքը պատմելուց հետո նա ասաց.

«Միմիայն սովետական վիզան փրկեց իմ կյանքը: Սովետական կառավարությունից ես ստացա ոչ միայն ապաստարանի իրավունք, այլև սովետական քաղաքացու բոլոր իրավունքները, որոնք ամենալայն են աշխարհում...»:

Արտասահմանում ընդամենը երկու տարի առաջ օտարաբարբառ, այսօր Հայրենիքում արդեն հայերենախոս, ընդամենը երկու տարի առաջ արտասահմանում «անբողոքալի» օտարականը, այսօր, Հայրենիքում, լիիրավ քաղաքացի և դեպուտատ — ահա՛ Հակոբի կյանքի ամփոփումը երկու տուրվով:

ԳԵՊՈՒՏԱՏ ԳԵՈՐԳ ՆԱԼԶԱԶՅԱՆԸ

Երևանի Կոշիկի առաջին գործարանի անվանի ստախանովական ձևարար-վարպետ Գեորգ Նալաչյանը ծնված է Ռոդոստոյում (Թյուրքիա): Իր սերնդից հարյուր հազարավոր արևմտահայերի նման, անցած է կյանքի դժգոհ ուղի: Իր պանդխտության և դառնալի կյանքին հրաժեշտ է տված և ողջունած է նոր արև, նոր կյանք, երբ Բուխարեստից իր հարազատ Հայրենիքն է եկած 1946 թվականին: Երևանում հաստատվելուց ընդամենը երեք օր հետո դիմել է Կոշիկի առաջին գործարանը և աշխատանքի ընդունվել: Հենց առաջին օրերից էլ աշխի է ընկել իր հոանդուն և բարեխիղճ աշխատանքով: Սխտեմատիկ կերպով պլանները գերակատարում է 250—300 տոկոսով: Գեորգն այժմ աշխատում է 1959 թվականի հաշվին, կատարելով մինչև այդ եղած բոլոր տարիների պլանները: Նալաչյանը մեծ աշխատանք է տանում նաև նյութեղենի խնայողության գործում: Հենց միայն վերջին տաս ամիսներում նա խնայել է 20.000 դեցիմետր բարձրորակ կաշի. այդ խնայված կաշվով կարելի է պատրաստել 1.300 զույգ կոշիկ:

Վարպետ Գեորգը 1950 թվականին արդեն ընտրվել էր Երևանի քաղաքային Սովետի դեպուտատ: Այժմ երկրորդ անգամ է, որ նա ընտրվեց:



Այս հասարակական բարձր գնահատանքն ու վստահությունը նոր հոանդ է տալիս վարպետին՝ աշխատանքային նորանոր սխրագործությունների համար:

ԳԵՊՈՒՏԱՏ ՆԱԿՈՐ ԴԵՍԻՐՋԱՆԸ

Երևանի Մեխանիկական գործարանի փականագործ վարպետ Հակոբ հալատրի Դեմիրջյանը ծնվել է 1908 թվականին Թուրքիայի Ալեթալ քաղաքում, դարբինի ընտանիքում։ 1913 թվականին Հակոբի ընտանիքը թողնելով ծննդավայրը, հաստատվում է Սիրիայի Հալեպ քաղաքում, որտեղ մնում է մինչև 1918 թվականը։ Համաշխարհային առաջին պատերազմի զինադադարից հետո, Հակոբը վերադառնում է իր ծննդավայրը, որտեղ մնում է մինչև Կիլիկիայի պարզումը՝ 1920 թվականը։ Այնուհետև նա տեղափոխվում է Հալեպ, իսկ այնտեղից՝ Բելրութ, միշտ զբաղվելով փականագործի իր արհեստով։ Բելրութում Հակոբը աչքի է ընկնում հայ հասարակական առաջադիմական շրջաններում իր կատարած հայրենասիրական աշխատանքներով։



Հակոբ Դեմիրջյանը Լիբանանից Հայրենիք է ներգաղթել 1946 թվականին, Հայրենիք գալու առաջին օրերից նա աշխատում է Երևանի Մեխանիկական գործարանում որպես փականագործ վարպետ։ Գործարանում իսկույն սիրեցին այդ աչքաբաց, ընդունակ ու շնորհալի վարպետին, որը օրվա առաջադրանքները կատարում է 150—200 տոկոսով։ Դեմիրջյանը երկու անգամ ընտրված է Մոսկովյան ռալոնի ռալոնական Սովետի դե-

պուտատ։ Մարտի 1-ի ընտրություններին, ավելի մեծ պատիվ տրվեց և ավելի մեծ վստահություն հայտնվեց ստախանովական վարպետին— նա ընտրվեց Երևանի քաղաքային Սովետի դեպուտատ։





Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Ս

ՍԻՐՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՆՈՒԿԱՆ

(Կարողեկոսական տառարանի
Հատվածի Ամերիկայի հայոց)

Ո Ղ Ջ Ո Ւ Յ Ն Ի Խ Ո Ս Ք

«Փանգոյի ի վերայ Այոյն և Էքմիածնի
ամենայն ազգի հայոց կապելա իսկ»:

ԱՌԱՔՆԻ ԳՈՎՐԻՔԵՐԻ



Իրեւի՝ ժողովուրդ հայոց.
Հանուն Աստուծոյ և մեր Վեհա-
փառ Հայրապետին, կողջունեմ
զձեզ սիրով: Կողջունեմ Հարա-
վային Ամերիկայի ամբողջ հայ ժողովուրդը
ընդհանրապէս և այսօր մասնավորապէս
Բուենոս-Այրեսի և շրջակայքի մեր սիրելի
ժողովուրդը:

Կողջունեմ Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր
Նկեղեցւոյ եկեղեցական դասը, մեր հոգեւոր
եղբայրները, վարդապետներ, պաշտօնե-
ւորներ և բոլոր ծառաներն ու սպասավորնե-
րը և այս եկեղեցւոյ բոլոր համայնքը: Ու
կամայեմ, որ այս օրը շնորհաբաշխութեան ար-
մը ըլլա, վերածնունդի նոր շրջան մը սկսի,
պաշարները ու համար Աստուծոյ շնորհքով և
մեր Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ:

Վստամ եմ, թե երկյուզածութեամբ ու հար-
գանքով ունկնդրեցիք ամենուս հոգեւոր Հոր՝
Վեհափառ Հայրապետին Ամենայն Հայոց
Իմաստալիք ու սրբատառ կոնդակը: Նորին
Վեհափառութիւնը նախ կողջունեմ զձեզ հայ-
րական սիրով ու զնահատանքով հիշելով,
թե Հարաւային Ամերիկայի հայ գաղութը,
օազգասեր, եկեղեցասեր և հայրենասեր ժո-
ղովուրդ մըն է, որ կհարգեմ իր նկեղեցին,
կրօնական ու ազգային ավանդութիւններն ու
սրբութիւնները, և կօրհնեմ զձեզ ամենքդ:
Ու ապա մեզի կպատկիրեմ հիշեցնելով, թե
Հարաւային Ամերիկայի գաղութը կբաղկա-
նա յորս հատվածներն կամ կնորոններն,
այսինքն՝ Բուենոս-Այրես, Գորդոն, Մոն-
տեվիդոն և Սան-Պաուլոն, ու կհրահանգեմ մե-

զի՝ յորս կնորոնները միացնել և վերածել
մեկ վիճակի, և պատրաստել մեկ ընդհանուր
կանոնադրութիւն՝ իր վաղեմացումն ստա-
նալն վերջ:

Երկրորդ պատմեմքը Վեհափառ Հայրապե-
տին՝ շատ ավելի ծանր պարտականութիւն
կընեմ մեր ուսերուն վրա: Վեհափառ Հայրա-
պետը ազգապահպանման, հայ մշակութի,
հայ լեզուի համբարձման համար մասնա-
վոր հրահանգներ ունի մեզի և ձեզի ուղղը-
ված: Նախ կհրահանգեմ մեզի՝ զարգացնել
հայրենասիրական ոգին՝ դասախոսութիւն-
ներով: Հայ լեզուն վառ պահել հայ ընտա-
նիքին մէջ: Հայ մշակութի ծաղկեցնել, ու
մասնավորաբար ձեզի՝ որ ձեր պարմանի
զավակները՝ ուստերն ու դուստրերը հե-
ռու մնան օտար ամուսնութիւններէ,
որպեսզի հայ ընտանիքը անաղարտ մնա:
Եվ ապա մեզի կհրահանգեմ կազմակերպել
այս վիճակը: Միութիւններ կազմել և աշ-
խատիլ այս գաղութի հոգեւոր և ազգային
բարգաւաճման, պայծառութեան և հասա-
ջման համար: Երբ միութիւններ կըսենք,
չենք հասկնար պարզ հանձնախումբեր: Կի-
տի ըլլան Տիկնանք և Երիտասարդաց եկե-
ղեցւոյ միութիւններ: Վեհափառ Հայրապե-
տը, ուրիշ խոսքով, կտեսնեք որ մեր նկեղեց-
ւոյ պատմական, նվիրական և սրբազան դերը
կշեշտուի:

Ծըմարտութիւն է, որ գաղութահայութեան
մէջ, մեր ազգային կյանքի կնորոնը, վա-
ռարանը Հայաստանայոց Սուրբ Նկեղեցին է:
Հոն է, որ մեր պանդուխտ հայ ժողովուրդը

կարողութեան հայրենիքին, Հայաստանին՝ չունի, որ լույս կստանա անհիշա խառնվորի լույսին, չունի, որ անհիշա իր երազներուն, իր ազատութեան ու իր հոգեւոր կյանքին ծրարներուն իրականացումը կտեսնեն։ Ու մեր կենդեցիկ, մեր հոգեւոր մայրը, վառարանն է ո՛չ միայն մեր հոգեւոր կյանքին, այլև մեր ազգային մշակույթին։ Անոր նվիրական կամարներուն տակ է, որ կ'հնչի Սահակի, Մեսրոպի մեծասքանչ ոսկեղեն լեզուն։ Անոր կամարներուն տակ է, որ կ'սննդ աղոթքները խոսովորին, Սահակին, Մեսրոպին, Նարեկացիին և Շնորհալիին չունի, անոր սրբազան կամարներուն տակ է, որ կ'հաղորդվին հոգիներուն մեր սրբազան հայրապետներուն, որովհետև Հայաստանյայց եկեղեցին գաղութներու մէջ առանցքն է մեր ազգային կյանքի հավերժացման։

Օրինակ մը տված ըլլալու համար, ինչպե՞ս որ մեզի ծանոթ է, տիեզերքի կեդրունն է արեգակը։ Մոլորակներն անոր շուրջ կ'ընդհանան, էթն անկէ փրթին՝ տեղուհը կիլնան և կ'որոճանին, միշտ իրենց ծիրին մէջ կ'ընդհանան և սակայն արեւ ունի թե՛ կեդրոնախոյս և թե՛ կեդրոնածիփ զօրութիւն։ Այդպէս նաև Հայաստանյայց եկեղեցին վառարանն է ու կեդրոնական առանցքն է մեր ազգային կյանքին։ Մեր բոլոր ազգային կազմակերպութիւնները, հայրենակցական միութիւնները և որեւէ կազմակերպութիւն, որ հայ անունը կ'ընդ, պետք է որ կապի ինչպէստեղայց Մայրենի եկեղեցիին։ Ուրիշ խոսքով՝ այդ մեծ արեւին, այդ արեգակին առանցքին մոլորակը կ'ընդհան՝ որպէսզի իր գոյութիւնը իրականացնեն և արդիւնավորեն։ Կամ ուրիշ օրինակով մը, ինչպէս որ շղթայի օղակները արժեք ունին երբ շղթային հետ կապված են, այնպէս նաև մեր ազգային կյանքի փոքր կազմակերպութիւնները հայ կյանքի ոսկեղեն շղթայի օղակներն են, այդ օղակները պետք է որ շղթային մաս կազմեն։ Որպէսզի շղթան զորավոր ըլլաւ։

Ուրեմն, Վեհափառ Հայրապետը մեզի կ'հրահանգեն մասնավորաբար մշակել հայ իգունը, կազմակերպել միութիւններ տիեզերանց և երիտասարդաց, հայ ավանդութիւններն ու սրբութիւնները հավատարմութեամբ պահելու։ Մենք այսօր կ'ուզենք ձեզի ըսել, սիրելի՛ ժողովուրդ, ընդառաջ երթալով Վեհափառ Հայրապետի բարձր հրահանքին, ունինք ծրագիրներ այս գաղութը կազմակերպելու համար։ Մեր առաջին գործերն են մեզի պիտի ըլլա՞նք բարձրանելու ուսման մակարդակը մեր ազգային դպրոցներուն, որուն համար պետք պիտի ըլլան նոր ծրագիրներ և դասագիրքեր։

Մեր աշխատանքը պիտի ըլլա կազմել Ե-

կեղեցիկ երկսեռ և կամ երկրորդական վարժարան մը հայ ուսման համար, որպէսզի ձեր զավակները, պատանիներն ու երիտասարդները հայ հոգիով, հայ մշակութով կրթվին և հայ ապրին։

Մեր աշխատանքը պիտի ըլլա կազմել Եկեղեցի՝ ընդհանուր երիտասարդաց միութիւն մը, մեր բոլոր երիտասարդներն ու պատանիներն կազմված, առանց որեւէ խտրութեան, նոր սերունդը հավաքելու համար եկեղեցի շուրջ, զանոնք դաստիարակելու մեր հայրերու հավատքով, ներշնչելով՝ Հայ եկեղեցի լույսով և հայ հոգիով։

Երրորդ՝ կազմել ընդհանուր եկեղեցական տիեզերանց միութիւններ, ո՛չ թե հանձնախումբեր, Բոլոր հայ անհիշներ պետք է անդամ ըլլան ո՛չ միայն եկեղեցիին, այլև եկեղեցական տիեզերանց միութեան, իրենց ժողովներուն ընթացքին հոգեւոր և բարոյական դաստիարակական բանախոսութիւններով հոգեւոր կյանքը պիտի մշակվի իրենց մէջ, եկեղեցին պայծառացնելու համար։

Չորրորդ՝ մեր փափագն է, ունենալ կիրակնօրյա վարժոց մը մանուկներու համար կամ նախնական դպրոցի ձևով, որպէսզի ձեր պատիկ զավակները, մանուկները փողոցները չթափառեն և կիրակի օրեր հալաքվին եկեղեցիի շենքին մէջ, ուղղվելու համար պատարագի սրբազան երգեցողութիւնը և ըլլալու հարազատ զավակներ Հայ եկեղեցիով։

Երրորդ պատվերը, ցոր Վեհափառ Հայրապետը մեզի կ'ըստա, այն է թե, պետք է շանք Զուհիներ, որպէսզի Մայր Աթոռի կամ Հայրապետական Աթոռի և հայրենի երկրի ու զուգորակաւ իրենց կապը զորավոր և ամուր դառնա։ Ուրիշ խոսքով՝ գաղութահայրութիւնը պետք է որ հոգեւոր, ազատիկ, իմացական կապի լույսով կապվի Մայր Աթոռին և Հայրենիքին։

Որեւէ ասոյ, ասոյ չէ՝ եթէ շունք Հայրենիք ու հայրենի հող։ Անոր համար է, որ վայկատուն ժողովուրդները ազգ չեն։ Ժողովուրդ մը որպէսզի ազգ ըլլա, պետք է ունենա իր Հայրենիքը, իր անփական Հայրենիքը։ Ինչպէս որ ծառ մը օղին մէջ արմատ չի նետեր, այլ պետք է քարերէ հող ունենա՞նք՝ որպէսզի ծառ արմատներ ընեն, աճի և ուճանա, նույնպէս և ժողովուրդ մը պետք է, որ իր ոտքին տակ հող ունենա, որպէսզի արմատ ընեն, օճի, ուճանա և հավերժանա։

Հայ ժողովուրդի ծառին արմատները հայրենի հողին վրա տնկված են։ Գաղութահայրութիւնը այդ հայկական ծառին ճյուղերն է. և ինչպէս որ երբ ծառին ճյուղերը կկտրվին իրենց րունեն և արմատներ, կտրուան, նույնպէս նաև գաղութահայրութիւնը եթէ

կտրվի իր հայրենի ծառեն՝ պիտի շորնա ու մեռնի:

Հայ ժողովուրդը դարերով իր թափառական ու գաղթական կյանքի մեջ միշտ կապված է Հայրենիքին և Ս. Էջմիածնին: Ինչպես մեր բնաբանին մեջ հիշեցինք, 17-րդ դարու մեր պատմիչներեն Առաքել վարդապետ Դավթիժեցի, երբ կպատմե Շահ Արասի արշավանքը Հայաստանի վրա, որ հայ ժողովուրդը գաղթեցուց ղեպի Պարսկաստան, բայց հայեր մինչև վերջ հիշեցին Էջմիածնին ու Հայաստանը ու լսողան գայն՝ և պատմիչը կրես. «Ռոմվհեստ հայ ժողովուրդը միշտ կապված մնաց Ս. Լուսավորչի Աջին և Ս. Էջմիածնին ու հայաթյունը ուր որ գացած է, իր առաջին գործը եղած է կառուցանել հայ եկեղեցի մը՝ Էջմիածնի ոճով, հայ ճարտարպետությամբ, որ ըլլա պատկերը և մանրանկարը Ս. Էջմիածնի, նվ երկրորդ՝ անոր հովանիին տակ րացած է հայ դպրոց մը, որպեսզի իր զավակները սորվին Ս. Մեսրոպի լեզուն և Լուսավորչի հավատքը և մեր հայ ազգային պատմությունը: Հայ ժողովուրդը, հրեա ժողովուրդին պես, ուր որ գացած է՝ ուխտած է՝ բնավ չմոռնալ իր Հայրենիքը և իր հոգեպարկերդունը, ինչպես որ հրեաները կրսան. «Եթե մոռացայց զքեզ Երուսաղէմ, մոռացի զիս աչ իմ: Իսրայել իր գերության օրերուն ուխտեց բնավ չմոռնալ Ս. Երուսաղէմը, նույնպես հայ ժողովուրդը իր դարավոր ետեղն և գաղթական կյանքին մեջ, միշտ ուխտեց՝ ըսելով, «Եթե մոռացայց զձեզ Էջմիածնի և Հայաստան, մոռացի զիս աչ իմ: Իմ աչ ձեռքս թող մոռանա զիս, ուրանա զիս՝ եթե մոռանամ զձեզ: Ու հայ ժողովուրդը հավատարիմ մնաց Մայր Աթոռին, Ս. Էջմիածնին և հայրենի երկրին:

Այսօր, սիրելի՛ ժողովուրդ հայոց, մեզի համար երջանկության և շնորհաբաշխության օր մըն է: Վեհափառ Հայրապետը ինժի և ձեպի մանավոր շնորհք կրաշխե. իր հայրական օրհնություններն ու հայրապետական մաղթանքները և իր իմաստուն հրահանգները և պատվերները կուտա. որով ձեզի կթելադրեմ, սիրելի՛ ժողովուրդ, որպեսզի ձեր ամբողջ սիրտով, ձեր բովանդակ հոգիով սիրեք Հայաստանայաց Մայրենի եկեղեցին: Սիրեցե՛ք հայ ազգը, սիրեցե՛ք Հայաստանը, սիրեցե՛ք Մայր Աթոռ Ս. Էջմիածնը, և բոլոր հայերը, աշխարհի մեջ ուր՝ որ ալ գտնվին անոնք,

այսինքն՝ ձեր եղբայրներն ու քույրերը. վանդի ուր ալ գտնվին անոնք, ինչ զաղափարի ալ որ ծառայեն, մեր եղբայրներն և քույրերն են անոնք: Ինչպես որ մարմնի անդամները շնն կրնար ապրիլ եթե բաժնվին մարմինն, կամ կտրվին անկե, նույնպես նաև ազգին զավակները կմեռնին՝ եթե կտրվին և բաժնվին ազգեն:


Այս մաղթանքներով, սիրելի՛ ժողովուրդ, ուխտենք այսօր մեր սրտի խորքն, նախ հնա. գանդի Վեհափառ Հայրապետին Ամենայն Հայոց, գործադրել իր պատվերները և իր իմաստուն հրահանգները. երկրորդ՝ հարգենք Հայաստանայաց եկեղեցին, սիրենք զայն: Սիրեցե՛ք և հարգեցե՛ք ձեզի համար ծառայող ձեր հոգեպարկ հայրերը, եկեղեցավոր պաշտոնյաները. հնազանդեցե՛ք ձեր առաջնորդներուն. աղոթեցե՛ք անոնց համար. անորդ պատվերներուն և հրահանգներուն հպատակ եղե՛ք և հետեցե՛ք անոնց, որպեսզի անոնք կարենան ձեր փրկության, ձեր երջանկության համար աշխատիլ՝ հրճվանքով և ուրախությամբ: Անոնց կաշխատին ձեզի համար: Որե՛կ եկեղեցական ծառա է Աստուծո՛ւ եկեղեցիին և ժողովուրդին: Անոնց հայր են ձեզի, եղե՛ք անոնց հարազատ զավակներ, որպեսզի անոնք ալ կարենան ձեզի իրական հայրեր ըլլալ, աշխատելու համար ձեր հոգիներու փրկության, ձեր երջանկության և ձեր զավակներու ապագային համար:

Այս հավատքով, սիրելի՛ ժողովուրդ իմ, կօրհնեմ զձեզ հանուն Աստուծո՛ւ և Վեհափառ Հայրապետին: Կօրհնեմ զձեզ հավատքովը և Լուսավորչին, Սահակին և Մեսրոպին: Կօրհնեմ զձեզ հայ եկեղեցավոր շնորհներովը, Հայ եկեղեցավոր հավատքովը, որպեսզի ըլլաք երջանիկ և ձեր երջանկությունը գտնեք եկեղեցւո մեջ, սիրելով զայն, հավատարիմ ըլլալով Ձեր եկեղեցիին և ձեր ազգին, ու իրեն. եղբայրներ, երբ այս եկեղեցիի շեմքն ենք՝ ոտք կկոխեք, մոռնաք զաղափարի տարրերություններ, քով-քովի նստեք իրեն եղբայրներ ու աղոթեք միասին և երջանիկ ըլլաք և քրիստոնեական սերը և խաղաղությունը տարածվի ամենուս վրա, ու դուք հոյաբար, ազատ ու երջանիկ ապրիք:

Շնորհք Տնառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եղիցի ընդ ձեզ. ամէն:

(Բուեհու-Այրես, ՀԱՅ ԿԵԳՐՈՆ ամսագիր)





ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՓԵՐԱՆՔՆԵՐ

ԳՐՈՑ.—ԴՈՎՏ. Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

ԴԱՎԻԹ ԱԼԱՎԿԱ ՈՐԴՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ¹

226բ

// ՁԴ. ՎԱՍՆ ԱՅՆՈՑԻԿ, ՈՐ ԶՔԱՀԱՆԱՅՍԱՆ ԱՆԱԿԻՆ

Այլ որ զքահանայ անարգէ, կամ թշնամանէ, կամ ապտակէ, այնպիսիքն
ընդ խաչահանունսն համարին, որ զքաւիչ մեղացն եւ զազատիչն ի դժոխոց,
1260 զճշմարիտ քահանայապետն զՔրիստոս, որ յանձն էառ փոխանակ վասն մեր
զխալն եւ չար հատուցին ընդ բարոյ նմաւ Արդ, քահանայն զամենայն առքի-
նակ բարեացն Քրիստոսի յանձն իւրում բերէ վասն փրկութեան ժողովրդեանն:
Զի նա՛ է, որ պսակէ ի խորհուրդ Քրիստոսի եւ եկեղեցւոյ, նա՛ մկրտէ եւ լու-
սաւորէ Հոգւովն Սրբով, նա՛ է, որ հաղորդեցուցանէ կենաց հացիւ, նա՛ է, որ
խաչիւ եւ անտարանական շնորհիւ նւ ձրգաւք հոգեւորաւք յուշարկեաց այս
1265 կենացս յաւիտենիցն: Եւ յանցաւոր կենացս յայսոսիկ մեզ ամենայն փրկու-
թեան առիթ եա է. բարեխառնութիւն աւուրց, եւ պողոց տառտութիւն եւ ամե-
նայն հիւանդաց ի պէսպէս ցաւոց առողջութիւն հայցի լկատուծոյ, եւ ի ձեռն
227ա աղաւթից նորա եւ փրկական խորհրդոցն, որ ի կատարի նովաւ ճանապարհոր-
դաց եւ նաւորդաց լինի խաղաղութիւն: Արդ, այս ամենայն բարեաց պարտուց
1270 վիսրդ չար հատուցանող լինեն ապերախութն: Արդ, մի՛ որ մտտեքիցէ ի
թշնամանս քահանային, քանզի Աստուած է վրէժխնդիր անպատուութեանն,
զի առէ՛ իմ է վրէժխնդրութիւն եւ եա խնդրեցից, նա խնդրեաց զվրէժս Մովսէ-
սի եւ Ահարոնի ի տանէն Կորխայ, եւ Դադանայ եւ Աբրիոնի, զի հուր վառե-
ցաւ ի ժողովս եւ բացաւ երկիր եւ եկուլ զնոսաւ: Քանզի որ անարգէ զքահա-
նայն, Աստուած անարգէ՛ Որպէս ասաց Տէր մեր աշխարհաւորացն. Որ ձեզ անար-
գէ, զիս անարգէ՛ Արդ, որ թշնամանէ զքահանայն, անարգող է Աստուծոյ, մի՛
1275 մնասցէ յիշատակ նորա յաւիտեանս:

Արդ, որպէս վասն քահանայից է պատուիրանն, նոյնպէս եւ վասն ծնաւ-
ղացն, քանզի եւ նոցա երկրորդ Աստուած է կոյնն, զի Աստուծոյ արարչութեան
1280 ի մերոյ զոյացութեան զործակից են, որպէս մշակ եւ երկիր: Քանզի մշակ սեր-
մանէ ի եւ երկիր լինքն ընդունի զսերմն, եւ ոռոգումն ջրոյն՝ ի մշակէն, որ

227բ

1263. A հացիւ

1273. A Դադանա

¹ Երաւանակ ված ամառըր 1858 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր, եոյեմբեր-դեկտեմ-
բեր ե 1853 թվականի հոկտեմբեր ե փետրվարի համարներէց:

- զարգացան տալ սերման զոյացողական եւ երկնէ եւ ծնանի զբոյսն, եւ աճեցուցանել եւ ի կատարումն ածել՝ Աստուծոյ էլ Այսպէս, հայր սերմանէ եւ մայր բնութի ինքեան, եւ ի նորին բնութենէ զարգութիւն զգայական տալ
- 1285 մանկան եւ զկենդանական շունչն ի նմա տպատրեւելու եւ տարեկան ժամանակաւ բնականի ինի ի նորա եւ ամենայն անդամոցն խորտակմամբ եւ դողութեամբ սրտիւ եւ ահաբեկեալ ի մահուանէ ցաւաւ, յերկնէ եւ ծնանի զմահովն, Բայց զոյացուցանել եւ աճեցուցանել Աստուծոյ միայն է, պորժակցութեամբ ծնաւորացն ի սնունդ եւ ի պահպանութիւն մանկանն, Եւ որպէս զԱստուած՝
- 1290 ամենայն կենաց մերոց պատճառ գոն Արդ, վասն այսորիկ իբրեւ զԱստուած պատուի եւ սիրոյ արժանի են ծնաւորքն, որպէս առ Աստուած՝ Պատուեալ պահար զո եւ զմայր, Զի թէ առ բնկերն զսէրն երկրորդ եղ իւրոյ սիրոյն, ապա յայտ է թէ ծնաւորսն զսէրն ի յինքեան եղբոր լառաշինս, վասն որոյ ցուցանի թէ՛ զուրդ Աստուծոյ են ծնաւորքն եւ պատուելի են իբրեւ զԱստուած:
- 228ա

1295

ՁԵ. ՎԱՍՆ ՈՐՔ ՍՈՒԳ ՈՒՆԻՆ ՄԵՌՆԵՐՆԵՐ

- Այսպէս իմացիր, զի սակաւ ժամանակեայ էր անտրտում կեանքն մեր ի դրախտին, եւ նախաստեղծիցն թուով եւ սակաւ աւտորք, ուստի լիտ լուծանելով պատուիրանին՝ դատապարտութիւն, եւ մահ, եւ ապականութիւն եւ դժոխս, որով եւ խառնեցաւ սուգ եւ տրտմութիւն ի բնութիւնս մերոյ Եւ որպէս
- 1300 ոչ մնաց միայն պատուիրանազանցութիւն պտղուն, այլ ի նմանէ, որպէս ի խմորէ աճեաց պէսպէս եւ ազգի ազգի յանցումն մեղաց, որ եւ բռնացաւ մահ եւ թաղաւորեաց ի վերայ մերոյ Ընդ նմին սուգ եւ տրտմութիւն եւ ամենայն աւրինակ տառապանաց տիրեցին մեզ, որպէս ասէր Նահապետն թէ՛ Նոգեհ
- 228բ 1305 զըլիստութիւն եւ նեխեցան եւ փտեցան, ի որպէս նախաստեղծն ի դրախտին, ուստի տառապեցայ եւ խոնարհ եղէ յոյժ Վասն որոյ ասէ՛ Եւ ազգաւ եւ տնանկ եւ Աստուած, ազգեալ ինձ, Եւ միւս Մարգարէն երեք վայել յաւելեալ զտառապանս, որքայ զաղքատութիւն բնութեանն Եւ զայն տեսնալ Եւ փորձել իմացեալ, անիծէ զայր ծնեղեան իւրոյ յմայն, Արդ, վասն այսորիկ ամենայն ծնունդք Ազամայ արտասուայից եւ սգապատ գոն Եւ պատճառս ծնունդեանն եւ մահու մինչեւ ցայն, որ այց արար մեզ արեգակն ի բարձանց՝ լուսաւոր առնել ի խաւար մտաց մերոց ծագել եւ բառնալ զամենայն արտաւար լամենայն երեսաց, Եւ ազատութեամբ լառաշին հայրենական յորդորութեանն պատին զմեզ վերստին բնութեւնով եւ անտրտում ուրախութեամբ հասուցանել ի հայրենի տունն, ա՛նդ, ուր ոչ եւս տիրէ մահ, եւ ցաւ, եւ տրտմութիւն, եւ հեծութիւն Եւ այսպիսի կենաց եւ անմահութեան խոստումն Աստուծոյ, հաւատարիմ է առ մեզ, քանզի առաջինքն անյուսաբար լային աւտուր լ (30) զմեռեալս՝ ըստ լ (30) ամի հասակի ստեղծման Ազամայ, ուստի կործանեցաւ ի մահ, եւ անց ի ներքոյ դժոխոց: Իսկ սէր մեր Յիսուս Քրիստոս, որ յարութիւն
- 1310 եւ կեանքէ ննջեցելոց եւ կենարար ձայնիւ կոչէ ի դժոխոց, զարկնակ ձայնէր ի Բեթանիայ զՂազարէ՛ Եւ արտաբար Եւ ել մեռեալն ամենայն զերեղմենական կազմաւորն Եւ անդ չափ եղ սգոյն, զի արտասուեաց միայն եւ սաստեաց մոնչելովն ի վերայ առաւելութեան եւ սահման եղ թէ ցայս վայր եկեցես եւ այլ մի՛ յաւելուցուաւ Արդ, որ քան զարտասուելն առաւելու զսուգն,

1284. A սգալական

1291. A ծնաւորքն շի՛

1313—1322. Անկյունապարկ փակագծերի մեջ առնված տեքստը լուծի մեր բնագիրը. մենք այն վերցրել ենք Ձ 839 ձեռագրից (թ. թ. 104բ—105բ):

- 229ա 1328 մանաւանդ որ զհերս խուզէ, կամ զճակատս // հարկանէ, կամ զաւստս պատռէ, այնպիսիքն անյուսք են ի կենեացն յաւիտեանից, Իսկ եթէ ոք անգէտ զոլով արար զայս մի անգամ եւ այնուհետեւ զղջացաւ, եւ (40) ար պահեսցէ Մ (50) ծնողաւ Ապա թէ անհոգացաւ՝ յերկու փամ յերիս, ոչ լսելով արար զայս, ամ մի պահեսցէ Ճ (100) ծնողաւ Իսկ եթէ հեթանոսաբար արհամարհէ, ունչ ընկեցեալ զպատուիրանան, ի սաստ եւ ի յանդիմանութիւն քահանային ճալատարկեալ, նախատանաց բան ձգէ ի նա, այնպիսիքն նզովին ի մահ եւ ի կենաւ Եթէ անբարձ գոլով՝ յետին թոշակէն, զրկեցին, եւ բաժին նոցա ընդ անհաւասան, ի նոցայն գործգման ընկեցին: Այլ թէ ի կենդանութեան զղջանայ՝ մինչեւ ի մահ ապաշխարէ եւ ի մահու հաղորդեսցի Իսկ եթէ անզեղջ մեռացէ, զամենայն ուխտ, զոր կատարեն քրիստոնեայք, մի՛ որ քահանայից ընդացի զնա յեկեղեցի, եւ մի՛ հաղորդեսցի առն այն, մի՛ ի մահ եւ ի կենաւ: // Ապա թէ ոչ, հեթանոսական անյուստութեան կցորդ է, ի սուրբ խորհրդոյն մի՛ զատցի:
- 229բ

ԶԶ. ՎԱՍՆ ԱՅՆՈՅԻԿ, ՈՐ ՎԱՇՆ ԵՒ ՏՈՒՈՍՍԻ ԱՌԵՆՈՒՆ

- 1340 Զոր արինակ յիշոցն յիշումն է ամենայն մեղաց, եւ յիշոցատուն կցորդ է ամենայն մեղատարաց, նոյնպէս եւ վաշխատուն եւ վաշխատուն կցորդ է ամենայն աւազակաց, որ ի լերինս կողոպտեն, եւ որմամոր զողոցն եւ կծծեսց, եւ որ տնականացուցանեն եւ ալքատացուցանեն զմարդիկ, զի բնութեամբ ինքեանք մարդիկ են, բայց շար սովորութեամբ զազանք են եւ ոչ մարդիկ:
- 1345 Զի հնարին տալ զոսկին, ածին բնութեամբ եւ վաշխին ծնունդ պահանջեն, որ շար է, քան բռնաբար պտուղ առնուլ. ուս ի սատանայէ շահասէր ուսոյց զմարդիկ եւ զրկող, կողոպտող եւ յախշտակող: Մի՛ արասցէ զայս ի քրիստոնէից, զի աստուածիցն է գործը: Այլ թէ ոք արար եւ զղջացի, զրկանս հատուցէ // չորսապատիկ եւ ապաշխարութիւն զգողցոց եւ աւազակաց կրեսցի:
- 230ա 1350 եւ ապա հաղորդեսցի:

ԶԷ. ՎԱՍՆ ԱՅՆՈՅԻԿ, ՈՐ ՈՒՆՏԵՆ ԵՒ ՈՉ ԿԱՏԱՐԵՆ

- Այլ որ ոք ուխտէ Աստուծոյ եւ եկեղեցւոյ եւ տուրս տալ ազատաց, եւ շահախրեալ ստէ, զԱստուած զլանալ այնպիսին: Եւ որ ուխտեացն եւ ոչ կատարեաց, կցորդ է ուրացողացն, զի գրեալ է՝ Ուխտս դիք եւ կատարեցէք: Արդ, ոք յանաւանոց ուխտեաց Աստուծոյ, մի՛ յապաղեսցէ եւ յալ ժամանակս թողցէ կատարել, զի մի՛ պատահումն եկեալ խափանեսցէ, ալ ընդ ուխտելն պարտ է վաղվադակի հատուցանել:
- 1355

ԶԸ. ՎԱՍՆ ԱՅՆՈՅԻԿ, ՈՐՔ ԳՊՏՈՒՂ ԵԿԵՆԵՅԻՈՅ ՈՉ ՏԱՆ

- Զպտուղն, զոր տայցեն, ոչ մարդոյ կրի, ալ Աստուծոյ, քանզի յաւելնս հրամայեաց Աստուած Մովսէսի թէ՝ Պատուիլ տուր ամենայն ցեղիցն Իսրայէլի՝ յամենայն յաւաթ, որ ընդիցեն յալազգեաց եւ յամենայն ստացուածոց եւ յամենայն գործոց ձեռին եւ յաշխատութենէ վաստակոց տասանորդս տալ ի տուն Տեառն: Եւ որ վասն // մեղաց ողջակէզքն եւ պատարագքն են եւ որ վասն գորութեան նուէրքն, այս ամենայն առատութեամբ ընծայեալ լինէր ի տուն Տեառն: Եւ որ հատանէր կամ [ոչ] ճշտիւ ընծայէր, պատուհաս մահու ընդունէր: Եւ Կայէն վասն այն խտեցեալ, զի զյոդին մատուցանէր Աստուծոյ:
- 230բ 1385

1370 Եւ զԱբէլ վասն այն պատուեցաւ, զի զառաջինն եւ զմեծն Աստուծոյ մատոյցս
 Եւ Եսաւ վասն այն ատեցաւ եւ Յակոբ սիրեցաւ Եւ ահա յանէծք ի տանէն
 Կայէնի եւ Եսաւայ ոչ պակասեաց յաւիտեան: Արդ, մի՛ ոք իշխէ զպտուղ
 Եկեղեցւոյ հատանն կամ ճշտի մատուցանել, զի մի՛ անիծիւք դատապար-
 տեսցի իբրեւ զԿայէն:

ՁԹ. ՎԱՍՆ ԱՅՆՈՑԻԿ, ՈՐ ՏԱԽՆԻ ԿԱՄ ԿԻՒՐԱԿԷԻ ՈՉ ԵՄԿԱՆ
 Ի ԴՈՒՌՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

231ա Այլ տաւնի կամ կիւրակէի, կամ յաւուր շաքաթու՝ որ ի քրիստոնէից է ի
 1396 դուռն եկեղեցւոյ ոչ երթայցէ եւ զձայն աւետարանի ոչ լսէ, ընդ խաչաճա-
 նունսն է՝ ըստ կանոնական սահմանի, քանզի ի տաւնին մեծի զձայն կենա-
 րարին, որ զաւել/տիս ունէր ի բերան իւր ի Հաւրէ առ մեզ եւ զթողութեան
 1380 նից զՈրդի Մարգոյ տեսանէր ընդ աջմէ Աստուծոյ, ուստի եւ զորդէգրութիւնն
 ընկալաւ, իսկ քարկոծաւորն ծառային իբրեւ զխաչաճանունքն Տեառն, խցին
 զականջս իւրեանց, զի մի՛ լուիցեն զձայն կենսաբեր յերկնից: Այսպէս եւ
 1385 են հասակաւ, եւ այնոքիկ, որ ի հարկաւոր ճանապարհի են: Նոյնպէս մի՛
 կերակրեսցին առողջ մարմնով եւ կատարեալ հասակաւ նախ քան զպատար-
 արագին արձակիլն, զնոյն պատուհաս կրեսցէ՝ խաչաճանուցն որ լուծանեն,
 եւ անպարտ եմ, ասացի ահա:

231բ

1380

// Դ. ՀԱՐՑՈՒՄՆ ԵՈՅՆ ՔԱԶԱՆԱՅԻ ՅԱՂԱԳՍ ԵՐԻՑՆ ԵԱՎԱԿԱՏԵԱՅ՝
 ՅՈՐՈՒՄ ՄՍԱԿԵՐ ՈՉ ԳՈՅ՝ ՊԱՏԱՍԽԱՆԻ

232ա

1400

1403

Նաւակատեաց տաւն, զոր կատարէ եկեղեցի, բարձրագոյն տեսանի, քան
 զամենայն տաւն, եւ աստուածատեալագոյն, քանզի ամենայն տէրունական
 տաւնից ատուրքն նաւակատիք կոչին, քանզի նաւակատիկքն թարգմանի Նո-
 րոգումն, կամ ուրախութեան տաւն: Քանզի հնութիւն ամենայն ծննդոց մարդ-
 1395 կան ի յանցանացն Ադամայ եղեն, ուստի մահ եմուտ յաշխարհս եւ ապա-
 կանութիւն, որով հնացաւ բնութիւնս: Վասն որոյ Արարիլն բնութեանս ոչ
 արար անտես ի սպառ զկործանեալ պատկեր իւր՝ զթաղեալն յաղբ, այլ եկն
 ի խնդիր հնացեալ պատկերին եւ կորուսեալ դրամին եւ նորոգեալ զնա յա-
 1400 նաջին փառսն՝ յորով ստեղծն: Եւ արդ, այսպէս տաւն եկեղեցի զնորո-
 գութեան իւրոյ զաւր եւ առնէ նաւակատիս իւրոյ փրկութեանն: Բայց յաղազս
 չճաշակելոյ ի մտոյ յայս Գ (3) // տաւնս, այս է՝ ճրագալուցին եւ վարդապա-
 1403 ռին եւ խաչին, որ ոչ հաղորդիմք ի մտոյ, բայց ի վաղիւն, որ է յատնութեան
 աւր, եւ յարութեան եւ վարդապառնի: Արդ, երեք տաւնք այս երեք յիսնեկապ
 ատուրքք պատուին նախատաւնակ մարդութեամբ եւ սրբութեամբ պահոց, որ-
 պէս Մովսէս հինգաբերայ պահաւք արժանացուցանէր զինքն ի Սինեայ լեռինն
 աստուածային տեսլանսն: Վասն որոյ եւ մեք, ըստ առաւելութեան Քրիս-
 տոսի քան զՄովսէս, Եժ (15) [ատուրքք] յառաջապատրաստ մարդութեամբ հա-

- դորդիմք տաւիցս: Ո՛չ միայն ձայնակցութեան աստեղծողի խորհրդոյն հա-
 1410 ղորդիմք, այլ աստուածային բնութեանն, որ ի Դարձէ միացաւ եւ ընտա-
 կարող է բանալ զմեզս աշխարհի: Եւ պարտ է երեք լիսնեակս մաքրի
 աղաւթիւք, ծոմապահաւք և գետնախշտութեամբ: Խոյնպէս եւ ոչ հաղակել հրա-
 232բ ման ընտաք ո՛չ միայն ի ճրագալուցին եւ ի շարաթն, այլ եւ բուն իսկ
 ի լիսնեբեակս, որ յառաջ քան զտաւնսն: Քանզի հրատարն է առաքելական
 1415 գառն զենուլ յայս երեք տաւնս ի խորհրդող անաթառ գառինն, որ ի վերայ
 մեղսաքաւի սեղանոյն պատարագի ի փրկութիւն աշխարհի: Արդ, որ ան-
 պատարատք լինին կենաւք, նախ ի խորհրդական եւ յաղինալան յանաթն
 զառնին: մտք կհրճեն: Եւ ապա ի մարմնական գառնալ կերակուր: Այլ եւ
 ոմանք ի տգէտ քահանայից, որ հրաման տան քառասնապահից ի մատողոյ
 1430 մտոյ ճաշակել եւ յայլմէ զառաքել, որ չէ հաճոյ իմաստոց, քանզի մի է
 մատաղամիս եւ ի խառնամիս, առ ի հեշտութիւն եւ ի փրկութիւն մարմնայ,
 վասն որոյ մի՛ որ կերիցէ յամենայն մտոյ, բայց ի հիանդութիւնէ, զոր թողա-
 233ա ցուցանեն պատուիրանքն, Արդ, մի՛ որ առողջ մարմնով եւ կատարեալ հասա-
 կաւ կերիցէ միս յայս երիս քա//ռասունս՝ յայտնութեանն, եւ ի զատկին եւ ի
 1425 վարդապետին, քանզի քառասունքս աղինակ է կենացն Աղամայ՝ որ ի դրախ-
 տին եւ քանզի այս՝ չափաւորս ասեն լինել նմա ի դրախտին, եւ ո՛չ էր անդ
 մսակերութիւն եւ ո՛չ դինքնպութիւն, եւ առ հրաման պտղոցն ճաշակել հա-
 մարակութիւն, բայց ի միոյ տնկոյն՝ յաղաղս փորձի:

ՂԱ. ՎԱՍՆ ՈՐ ԿՈՒՍՈՒԹԻՒՆ ԽՈՍՏԱՆԱՆ ԵՒ ՈՋ ՊԱՀԵՆ

- 1430 Այլ որ ոք խոստացաւ առաջի քահանայից եւ եկեղեցւոյն արեղայութիւնն
 կամ կուսութիւն եւ կին արար, ընդ ուրացողսն է՝ Ե (5) ամ ապաշխարեւցէլ
 մեծաջան վաստակաւք եւ ապա հաղորդեսցի:

ՂԲ. ԲԱՍՆ] ՈՐ ՎՓՈՔՐ ՎՄԱՆԿՈՒՄՆ ՊՍԱԿԵՆ

- 1435 Այլ դիտորդոյն մանկունս մի՛ որ ի քահանայից յանձն առցէ հարսանեաց
 պսակ զենլ նոցա մինչեւ յերկոտասան ամն, որ ճանային զաջն եւ զահեակն,
 233բ ապա պսակ զենլ արժան է յաղաղս ամաթոյ, կամ երկիւղի, կամ կաշառոյ
 ընկա՛մ վասն անփառախտ մոլութեան քահանայ տասամենիցն ի փոխար
 պսակ զենլ, նզովի եւ լուծցի ի կարգէն: Նա եւ առանց խոստովանութեան
 զփեսայ եւ զհարսն մի՛ իշխեսցէ պսակել: Ապա թէ յանդին. ոք, լուծցի:
 1440 Այլ մի մար կաթմարն սնեալ մանկունք՝ արու եւ կգ, մի՛ զուգեսցին ընդ
 միմեանս, քանզի յաղաղս կաթնասնութեանն ի մի ստինք՝ մի եղեն:

ՂԳ. ՎԱՍՆ ԱՅՆՈՅԻԿ, ՈՐ ԶԽԱՋ ԱՌ ԱՅԱԶԳԵԱՅ ՏԵՍԱՆԵՆ ԵՒ ԱՆՓՈՅԹ ԱՌՆԵՆ

- 1445 Այլ զիսալ առ այլազեաց մի՛ ոք անհոգացեալ ի ըաց թողցէ, այլ զենս-
 ցնն որպէս վաճառեն: Ապա թէ արհամարհելով անհոգանայ, զուրացողացն
 կրեսցէ պատիժ: Իսկ քրիստոնեայք մի՛ սովորեսցին ծախել եւ զենլ, զի ան-
 հատուկեանն նշան է այս՝ դիրազին առնել զանճառ խորհրդող իային:

1417. Ա յաղինակին

1435. Ա որ ճանային զաջն և զահեակն չիլ

1440. Ա միս

234ա

ՂԴ. ՎԱՍՆ ՆԱԳԱՍ//ՏԱԿԻ ՄՍՈՑ ԵՒ ՄԵՌԵԼՈՏՈՑ*

Վասն նապաստակի մտոյ եւ մեռելոտոյ երկպառակութեան պատասխանի
1450 այս է:

Մեռելոտոյ եւ նապաստակի մտոյ ոչ գոյ բաժանումն, վասն զի մի են
նոքա այնմ մարդութեամբ: Եւ թէ յանգէտս ուտէ ոք ի նոցանէ, Խ.ք (40) մի
պահեսցէ կարգածութեամբ, իսկ եթէ դիտութեամբ՝ Բ (2) ամ ապաշխարեսցէ:
Ապա թէ ի քահանայից ոք կերիցէ, Բ է (երկիցս երեսուն) ար արտաքոյ
1458 կացցէ, եւ ապա հաղորդեսցի: Ապա թէ դիտութեամբ կերիցէ՝ է (7) ամ
ապաշխարեսցէ եւ արտաքոյ կացցէ:

Իսկ այնոցիկ են երկպառակք, որ աւցտեն եւ բաժանեն զմիարանու-
թիւն եկեղեցոյ ի շար աղանդ հերձուածողացն եւ այլ ամենայն, որ քու-
թեան բան ի մէջ ընկնու ի միաբանութեան եղբարց, եւ բարեկամ սիրելեաց,
1460 եւ անհաշտ պատեհազմն եւ խռովութիւն ի միջի նոցա հաստատէ, քանզի
երկպառակութեան գոիչ նախ սատանայ եղև, որ է արկղ բանսարկութեան
234բ ի մէջ Ագամայ եւ Աստուծոյ: Եւ ի հատեալ բաժանեաց ի նմանէ զժնունդս
Ագամայ: Եւ այս ամենայն շարիք, զոր ի թիւ արկեալ ցուցանէ բանս, լիակ-
պառակութենէ հմուտ յաշխարհս, որով զերեցան մարդիկ ի ծառայութիւն
1465 ախտիս այսոցիկ, այսինքն՝ նենգութեան, բռնութեան, ազահութեան, շարակ-
նութեան, զրկողութեան, արուագիտութեան, բամբասանաց, անառակ ար-
քեցութեան, յափշտակութեան, պոռնկութեան, վրէժնորութեան, ստուքեան,
շնութեան, անողորմութեան, սուտ երդման, արիւհեղութեան, անասնադի-
տութեան: Եւ որ ոչ ունի յոյս յարութեան՝ անյուսութեամբ լան զմեռեալս: Եւ

1470 որ այլ այսպիսի անհուն արկածք են շարի, ի բանսարկութենէ հմուտ յաշ-
խարհս, որով երկպառակեալ բաժանեցան ծնունդք Ագամայ յայսպիսի
շարիս՝ զոր սերմանեաց սատանայ որոմնաբար ի վերայ դեղեցիկ սերմանցն:

235ա ի Վասն որոյ երկպառակն նման է սատանայի եւ կցորդ ամենայն շարեացն
նորա, որ եւ ընդ նմին ժառանգեսցէ զխոտացեալ պատիժն նորա սատանայ:

1475

ՂԵ. ՎԱՍՆ ԱԶԳԻ ԱԶԳԻ ՀՄԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԶԱՐ ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆ

է այլ շար սովորութիւն, զոր ուտոյց սատանայ, որովք ատարացուցանէ
զմարդիկ ի ճշմարիտ դիտութենէն: Եւ է սկիզբն կախարդութեան եւ հմա-
յութեան, որ են ազգայինք մանիքեցուցն եւ վաղէնտիանացուց եւ շար աղան-
գոց նոցա պաշտանեայք եւ աշակերտք: Եւ են նոքա սատանայախաւսք եւ
1480 դիւակոչք եւ ազգի ազգի անուանս եղեալ դիւաց: Ի ցոյց եւ ի տեսիլ գաւն նոցա,
նաեւ աւգնականութիւն խոստանան եւ զաւրութիւն Աստուծոյ կարծեցուցանեն
զանձինս թէ իցեն: Իսկ ի Հոգոյն շնորհաց մերկացեալ մարդիկ յուան ի
սատանայ, որպէս ի զաւրութիւն Աստուծոյ եւ յարանանակս նորա, որ են
դեւք, յուսան որպէս ի սուրբ Հրեշտակս Աստուծոյ: Քանզի եւ խաւարային
235բ 1485 ի դեւք կերպարանին ի Հրեշտակս եւ ցնորեցուցանեն զանմիտս: Այլ եւ
ատար եւ ազգի ազգի անուանս յաւդեն միմեանց եւ կոչեն յանուանէ իշխանք ին-
քեանց եւ պետք Գարբիէլի եւ Միքայէլի անուամբ, որպէս թէ պետք եւ իշ-
խանք ամենայն հրեշտակաց գոլով: Եւ տնոմիտ մարդիկ հաւանեալ հաստան
սատանայի իբրեւ Աստուծոյ եւ դիւացն որպէս Հրեշտակաց Աստուծոյ, եւ

* Բնագրի թերթը պատկած լինելու պատճառով, ՂԴ դրութիւն վերանված է Ք 839 և և
ազգից (Թ. Թ. 117ա—123բ):

- 1490 անուանց որ կոչին որպէս հր[ե]շտակաց անուանց: Եւ այսպէս շարմիտ մարդիկ ընդելութեամբ դիւաց ի նոսա յարեցան եւ դիտաւարային խորհուրդս նոցա ուսան՝ ի կորուստ անձանց: Եւ բազմացուցին զշար ուսումն, զոր ուսան ի սատանայէ, աշակերտեցան զնոսա: Եւ նոքա իբրեւ զնոսա, մերկացեալք ի մկրտութենէ շնորհացն, եղեն անմեկնելի բնականութեամբ: Դիւաց եւ վարդապետութեամբ դիւացն գրեն զանուանսն զայն եւ ի ներքս խառնեն զհրեշտակաց անուանս եւ զսրբոցն Անտուծոյ, զառաքելոցն Կ. զմարգարէից: || Եւ ալ րազումս աստարացուցիչ յԱնտուծոյ եւ ողբկորոյս բանս յաւրեն եւ գրեն ի մագաղաթի խառն ընդ անուանսն եւ բանաբազը լինին յաւտարանէն Քրիստոսի: Եւ ի ներքս խառնեն զորով, զի կենաց բանէն զմահացու բանն յաւտարանական խաշին, զի զայն յԱնտուծոյ կարծեցին, եւ առեալ դնեն ի թապօթի: Այլ եւ կապեն ի բազումս եւ ի պաշտօնոցս մանկանց իրեանց եւ անասնոց, ձիոց եւ եղանց եւ ոչխարաց եւ պահապանս կոչին զայս: Այլ եւ ձեռնածութիւն առնեն մանկանց տղայոց իրեանց, ասեմ՝ ոչ լինել ցաւ ի մարմինս նոցա: Այլ [եւ] թրով բժշակոյ իրեանց եւ ձեռամբ մերձեն զայնոսիկ, ասեն թէ՛ յաշակիտ է, հիւանդացեալ է եւ մի առցէ յաշակումն: Այլ եւ պառատեալ անարդէնք լաւութենն եւ զգուստն առնեն զհիւանդացեալ մանկամբն || ալլ եւ ընկնելուն կայծս կրակի ի ջուր եւ արքուցանեն մանկանց եւ ալլոց հիւանդաց, վասն զի թէ՛ ակն առած է կամ ոչ առնաւ: Այլ եւ հոլիւ կապար եւ արկանեն ի ջուր ամանաւ եւ դնեն ի վերայ կրծից մարդկան եւ ասեն թէ՛ դեղ է սրտաթափի եւ ատամնացալի: Ի բացուստ արժատս բուսոց հատանեն եւ լիցս կապեն ի ծառս տանձոյ եւ յաղ թուխն, որ լինի շուրջ անկեակն, եւ ասեն թէ՛ դեղ է ջերմութիւն: Այլ եւ ի ծննդեան բազում հմայութիւնս առնեն: Այլ եւ յորժամ զմեռեալն հանեն ի տանէն, նաեւ ի հարաանիւսն, բազում հմայք՝ վասն ճանապարհին: Այլ յորժամ առաջի աւազաց ելթիցեն, եւ ի հնձանս, եւ ի կարասս, ի վաճառել եւ ի գնել, եւ զհանդերձս ի կտրել, ի գնելուն, յուղարկաւորութիւն, ի հանել յամանէն եւ ի վերայ որոց, ալլ եւ ի նարատաներկութիւնս, ի յոստայնանկութիւնս, ալլ եւ յամենայն արկանակս արուեստից: Եւ ի խնդրել ումեր ջուր ի գիշերի || անցուցանեն ընդ նա դանակ Գ (3) բեւեռի եւ այնպէս տան ըմպելին: Այլ եւ արգելուն ընդ երեկս տալ մաղ խնդրողին եւ կրակն նոյնպէս: Եւ յաւտարանականացն ի Ե (5) տրն արգելուն տալ յան խնդրողացն: Այլ եւ ի գալ նորոյ տարոյն, ընկնելուն երկաթ ի կուտ եւ քարշեն ծիր զերդեանկովն եւ յառաւատուն առաքեն զաղչկունս շրջել քարինս եւ բացել եւ հայել ի ներքոյ նորա, թէ՛ գտանի մաղ սպիտակ, ասեն թէ՛ բախտի հասաւ, հարսնացուցանել զնա առն ալեւորի: Եւ եթէ գտանիցէ մաղ սեւաւ, ասեն թէ՛ բախտի հասաւ՝ տալ զգրիորդն երկտասարդի: Նաեւ առ ներկս թէ՛ աքաղաղն խաւի, հմային: Եւ թէ՛ ի մայրեաց ածիցէ ձայն աքաղաղի, հատանեն զգլուխս: Եւ ամենայն արուեստաւորք ի մուտս տարոյն յարուեստն իրեանց հմային: Դառնելն կուանաւ մի հարկանէ զսալ, ոստայնանկ թել մի քարէլ, կկոցէ եւ բիճան երիս հարկանէ, մանոցն թել մի ձգէ || եւ տայ զայն զիկլաւ: Նա եւ ի տարեկան տաւնս եւ յեկեղեցականս խառնեն բազում հմայութիւնս: Այլ եւ ի հարկանել ժամահարին, զժամանակն հմայեն եւ ի մտանելն եւ լեւանել իրեանց կամ աստարաց ընդ դուրս տանն հմային: Այլ եւ ի լուանալ զհանդերձս

1507. A յարանելն

1518. A յոստանալգութիւն

1520. A բմբկն

1523. A զաղճկունս

կամ գլուխս արանց կամ կանացն հմային խորդն ապականութեանն յապրիշ-
 1538 մաքարչ, Եւ որ գլուխ գիւթութեանցս աշտոցիկ է հատահմայութիւն, Արդ, այս
 ամենայն շարին խորհուրդք եւ սատանայական ապականագործութիւն զհոգիս
 մարդկան կորուսանեն ուրացութիւնք յաւանդութենէ աստուածութեանն եւ ի
 ճշմարիտ գիտութենէ նորա ատարութիւն, Արդ, եթէ ոք այսպիսի շար սովորու-
 թեան հաւանեցաւ, եւ ուսաւ, եւ ուսոյց, յայտնապէս հեռացաւ յԱստուծոյ եւ
 1540 ուրացաւ զճշմարիտ ատանդութիւնն եւ ընտանեցաւ սատանայի:

Եթէ քրիստոնեայ անուն յարանց կամ ի կանանց է, զայսպիսի շար սովոր-
 238ա ութիւնս մի՛ իշխեսցեն առնել եւ որ ի առնեն յայլազգեաց կամ ի քրիստո-
 նէից, մի՛ իշխեսցեն երթալ Եւ հարցանել ի նոցանէ ի դիմս կամ ի կախարդի,
 ի ջուրուփոյս, ի Գարբնիկէցսն եւ յայլ հմայսն վասն պիտոյից իրաց, որ կար-
 1548 ծեցուցանեն առ աշաւք թէ դոյ ի նոսա գիտութիւն, զոր ոչ ունին եւ ոչ ազնեն,
 բայց միայն այս զի հեռացուցանեն յԱստուծոյ, Արդ, եթէ ոք լերկարեալ իցէ
 յայս շար սովորութիւնս եւ զոչանայ, մինչեւ ի մահ ապաշխար[եսց]է եւ յետին
 թաշաղկին արժանի լիցի, Ապա թէ ոք մի անգամ արար տգիտութեամբ կամ
 եհարց ի նոցանէ, ամ մի ապաշխար[եսց]է, Իսկ եթէ երկիցս՝ երկու ամ, եւ թէ
 1550 երկիցս՝ Գ (3) ամ, մինչեւ ի եթնհրորդն, եւ այն այնհետեւ յարհամարհանս
 է պատուիրանին Աստուծոյ, ընդ անհաւատսն համարեսցի ամենայն տամբն
 իւրով: Ապա թէ ի զոչումն եկեսցէ, մինչեւ ցմահ ապաշխար[եսց]է, բայց զհա-
 սակն եւ զժամանակն տեսցեն գիտնականք, եւ այնպէս դատեսցեն ըստ ար-
 ժանեացն:

1555

ՂԶ. ԴԱՐՁԵԱԼ ՆՈՅՆ ԴԱԹԻ ՑԱՆԿԱԼԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ՝ ՎԱՍՆ Ի ՄԱՌՈՑ ԱՆԿԱՆԵԼՈՅ

238բ

|| Եթէ դէպ լինիցի՝ ծառոյ անկանել մարդոյ եւ մեռանել, կամ խեղդով
 կախել զծառէ, չկայ ինչ մեղանս տնկոյն, զի անշունչք եւ անզգայք են, ոչ ինչ
 եղեն պատահաւ մահու նոցա, որ այնպէս պատահեաց, Այլ թէ առնիցեն ըստ
 1560 աւրինացն Մովսէսի, յորում հրամայեաց Աստուած վասն անասնոցն, եթէ եղեւ
 ի նոցանէ յանաւթ պղծութեան հոգոյ եւ մարմնոյ անասնազգիտաց մարդոց,
 զկաթն նոցա մի՛ ուտիցեն եւ յայն ազգ կենդանեաց իցէ եւ զանասունն քարկոծ
 արասցեն եւ զմիս նորա շունք կերիցեն, Նոյնպէս թէ եղչիրաւորք հարկանիցեն
 զմարդիկ եւ մեռանիցի, սպանցեն եւ մի՛ կերիցեն: Ոչ թէ մեղականք են, այլ զի
 1565 անաւթք եղեն մեղականացն պղծութեան եւ սպանութեան: Ըստ այսմ աւրինակի
 թէ առնիցեն զայս, հատանեն զտունկն, զի մի՛ կերիցեն ի պտղոյ նորա, բայց
 թէ յարմատոյն այլ բուսանի եւ եկեսցէ ի հաս, կերիցեն անխտիր, որպէս
 ծնեալքն յանասնոյ անտի անխտիրք են: Այլ թէ յեկեղեցւոյ քար անկանի ի
 վերայ մարդոյ եւ մեռանիցի, անվնաս է կեկեցիցին, մատուցեն ի նմա պա-
 1570 տարագ, որպէս կամի Տէր անխափան:

ՂԷ. ՎԱՍՆ ԶԱՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ ԵՒ ՔՍԱՆԱՑԵՑ

Այսպիսի վէ պատիւ սրբութեանն՝ յերկնաւորաց եւ յերկրաւորաց: Եւ ի
 սանդարամետականաց իսկ վկայեալ, այն՝ որ գտիլք եւ արիլք են շարի եւ
 րարեացն սրբութեան խափանիչք:

1540. Ա ընդանեցաւ

1558. Ա տնդոթ

1566. Ա գտուովն

1568. Ա ամդի

- 1575 Բայց ահա տեսանեմ ի մերում ժամանակիս, աստ, զոմանս ի թարմա-
տարաց եւ ի յետնոց յայնցանէ, որ ընդ վիժածս համարեալ են եւ ոչ են ար-
ժանի յիշատակի, նոքա վարդապետութեամբ սատանայի աշակերտեալ, վար-
ժեցան յուսումն նոր եւ ալլանդակս նոր՝ ոչ զարինակ շարին ասեմ, թէ գտակ
420ր 1580 թողթս մագաղաթեայս, զի մնացէ յափտեանց յիշատակի || ամաթոյ իւ-
րեանց եւ ի նախատինս անձանց իւրեանց, որպէս այնոքիկ, [որք] կացին եւ
դեանցին, եւ զյիշատակ շարին ի յափտեանս թողին՝ ընէի Կոնստանդնուպոլս
անձանց եւ ի մոլորութիւն անմտաց, եւ այսոքիկ են արինակ շարին, որ աւ-
րինադրեցան ի նոցանէ՝ զխալիս պսակեալ Կոնստանդնուպոլս կատարեալ, զա-
մուսինքն առանց կանոնական հրամանի սատանայական բարորոս հնար ի-
մացեալ՝ ի վերայ ամէնից ազգի ազգի պատուհասեալ, քակտին ի միմեանց,
եւ ալլ ախտաւոր, եւ վաւաշ, եւ իզամոլ առն, որ ակն եղեալ այնր կնոջ,
քակտին յառնէ իւրմէ եւ տային այն, զոր մեծաւ կաշառաւ կուրացուցանէին
զայս նոցա:
- 1590 Եւ ալլ մեծագոյն շարիս, որով լցին զաշխարհս Աղուանից, քանզի զերեք
այրին, եւ շորորդդ այրին, նա եւ թէ հինգերորդ այրի փոխեալ անխորելի լի-
նէր նոցա: Գրով հաստատէին եւ կացուցանէին արինաբար առ միմեանս
մինչեւ ցվախճան կենաց իւրեանց, եւ զամենեւեան զայնոքիկ՝ որ էին ի քա-
ղաքս, եւ ի գեղս եւ յագարակս: Քանզի վառեցին զսոգոթական հուրն, որով
1595 վառեցաւ եւ տարածեցաւ ընդ ամենայն լեռնայինս, եւ զաշտայինս եւ ճա-
րակեաց զբազմաց հոգիս ի ծագումն ապականաբործ արտիցն պոռնկութեան:
Եւ թուով զիրաքանիւր զամենայն ի գիր հանէին, եւ որպէս պատշաճն էր,
մոլորութեանց նոցա յանձինս իւրեանց ընդունին: Զհարկ զանձին, զոր եղին
421ա ի վերայ՝ էր որ կտակ միոջ, եւ է՛ր որ || դահնկանի երկուց, կամ երկից: Եւ
1600 զայս ամենայն ամիս շրջագայութեան, որ անցեալ ընդ գաւառս՝ ի նամակէ
անտի՝ յորս շար գրով զշարագործսն նշանակեալ էին յանուանէ անտի: Եւ
զհարկ նորա, զոր հատեալ էին, պահանջէին ի նմանէ: Եւ ոչ որ կա-
րէր թագուն յերեսաց երցա, քանզի են նեռնագործք ոմանք, անուան-
եալք եկեղեցականք, եւ սիկարեանս աշխարհականաց, զոր եզրիտ եւ ժողո-
վեաց շար խորհրդոցն իւրեանց ձանձիւք եւ սպասաւորք, զոր ի վերայ կացու-
ցանէին մոլորիւցն եւ խտութեամբ պահանջէին: Բայց յաղագս արտաժո-
լութեան իւրեանց, առ ոչինչ համարեալ, յաւժարութեամբ հարկանէին զհարկն
եւ այնոքիկ իմն աղմուստր անունէ դնէին, եւ ուր երթային յիշեալսն սուրբ
նշանին, ժողովուրդ ձայնէին եւ արեւ զգուսնաւ կոչէին առ ինքեանս ի պա-
տի: Եւ ի մեծարանս ընդ նմա բաղմեալս, զոր ի համրոյր սուրբ նշանին եւ
աշոյն իւրոյ կոչէր: Այլ թէ յայնցանէ ի ժամանակն ծերութեան հասեալ զա-
նալր, անյուացուցանէին իւրկար ժամանակաւ մեղացն, եւ ծերութեան
հասական ոչ կարես, ասէին, արդարեանալ, եւ այսպէս վատահոգեանս տուեալ
տակաւին ի մեղս իւրեանց հաստատէին անխոստովանութիւն եւ անգարծ ի
գժօխս իշանէին: Իսկ եթէ յերիտասարդաց ոք ապաշաւէր եւ խորհէր զփրկու-
թիւն իւր, եւ կամ յալլ յաստուածաբանակ արանց յորդոր||եալ լինէր՝ յողա-
խոհութիւն, եւ զբաժանեալս սիրէին միմեանց, ալլ շար սպասաւորքն իւրեանց
421բ ի նոյն դարձուցանէին յորդորելով կամ սպանալով: Եւ եթէ անուր լինէր նո-
ցա եւ դատնայր ի շարեաց անտի, զհատեալ հարկն տակաւին պահանջէին:
1620 Եւ նոքա բողոք բառնային, կինն ասէր թէ՝ Զեմ սիզիւիսն, եւ այրն ասէր թէ՝
Զեմ ընդ հոմանայնս: Եւ այնոքիկ ոչ լւէին: Եւ նոքա քինացեալ, զխեղճն ի
նոսա կապեալ, ի նոյն շարն դառնային: Ուստի բազում շարիք լառաւ եկին՝

- չար խորհումն միմեանց, դառութիւն, խռովութիւն, ատելութիւն, նենգութիւն, հակառակութիւն, մատնութիւն, կողոպտութիւն, զրկողութիւն, յափշտակու-
- 1636 քիւն, կնոջ եւ առն բաժանումն, զաւակաց ցրումն, ընկից առնումն, տանց աւերումն, ի հարեմնաց ելումն, ի դատաւորս եւ յատենաս բազում քարշումն, Ուստի՝ բարկութիւն, ուստի՝ աղաղակ եւ տրտմութիւն, եւ հայհոյութիւն, եւ հարումն, եւ սպանութիւն, նաեւ՝ հաւատոյ պատառումն այլ եւ՝ լուով բճախեղորութիւն, Այս ամենայն, եւ լուով այլ շարութիւն, աստից բազմացան եւ
- 1630 լցին զերկիրս եւ պսակք, եւ արարողք շարեացս յսոցիկ, սուտանուն հովիւք եւ առաջնորդք մոլորեցուցիչք սուրբ ուխտին հաւատոյ, իբրեւ զգալլ ապականիչ հաւտի յարձակեալ խո[ղ]խողէին ի հաւտէ անտի Քրիստոսի եւ զահալէժ արարեալ՝ յապականադոժութիւն մեղաց մատնեալ, եւ այնպէս զանդամն Քրիստոսի, որ || եղեւ առաքելական քարոզութեամբ վերստին ծննդեամբ
- 422ա 1636 աւազանին, մարմին ի մարմնոյ նորա եւ ոսկր յոսկրաց նորա, աւցտեալ բաժանեցին եւ արարին ծառայս մեղաց եւ անգամս մեղաց պոռնկիւր եւ ո՛չ ոք է ի նոցանէ որ գիտէ, եւ ո՛չ՝ որ իմանայ զկորուստ անձին իւրոյ ի նոցանէ, զի Ամենեքեան խոտորեցան ի միասին, եւ անպիտանացան, Ահա հովիւք գալլացան, եւ հաւաքն անզգամաց իբրեւ զհովիւն ոչ ծանեան զտէր եւ ոչ
- 1640 խնդրեցին եթէ զոյ Աստուած ի մէջ Իսրայէլի, եւ արդ, այս ամենայն վերաքննութիւն տեսութիւն մտաւորաց միայն ժփանք են խորհրդոյ, եւ աշխատութիւն հոգոյ, եւ խորտակումն սրտի, եւ մաշումն մարմնոյ, եւ ոչ ընդէ աւգտութիւն, բայց եթէ զայս ամենայն նեղութիւն անձին:
- Արդ, Տէր այց արասցէ մոլորեալ հաւտին իւրոյ, եւ ժողովեաց զցրր-
- 1646 ուեալսն եւ վերստին թուեսցէ ընդ առաջինսն, որ կացին, մնացին հաստատուն ի վերայ ճշմարիտ վիժին հաւատոյ, եւ խնդրեաց զարին հաւտին իւրոյ ի վրժապարտաց, Ուստի եւ ընտրեացէ այլ կամակատար իւր հովիւ եւ առաջնորդ, եւ կացուցէ ի վերայ հաւտի իւրոյ, որ փոխանակ աւցտելոյ եւ բաժանելոյ, ժողովէ եւ միատրէ, որ ոչ գալլանայ հաւտին, եւ ո՛չ յորժամ տես-
- 1650 նու զգալսն՝ թողու զոյնարսն եւ փախի՛ ոչ ունելով փոյթ վասն ոչխարացն, Այլ այնպէս լինել քաշ հովիւ, որ ո՛չ միայն զգալսն փախուցանէ ի բաց, եւ գողոցն ընդդէմ զգաստութեամբ ա||խոյան ելանէ եւ վարձկանացն սաստէ, այլ ի վերայ այսր ամենայնի եւ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարացն, եւ այլ եւս ոչխարք, որ ոչ են յայսմ գաւթէ, եւս զայն ածել գիտէ, եւ կացուցանել յայսմ
- 422բ 1655 զաւթի, եւ առնել մի հաւտ եւ մի հովիւ՝ միանգամայն ընդ ճշմարիտ հովիւն իշխանութեամբ, եւ լինել ծառայ բարի եւ հաւատարիմ, եւ լսել զայս ձայն եթէ՛ Մո'ւտ յուրախութիւն Տեառն քոյ եւ կալիքի իշխանութիւն ունել ի վերայ Ժ (10) քաղաքաց, եւ այս տնտեսութիւն անյայտ է ի մէջ եւ յայտնի Տեառն Աստուծոյ միայն, եւ այնոցիկ՝ որ զՏեառն խորհին եւ քննեն զնորայն հոգե-
- 1660 պէս:

Արդ, զպարտութիւն խոստովանել զանգիտութեան անձին մերոյ՝ զամենայն զմերն ի նա անապաստան արասցուք, եւ ի նորին էականութեանն հայր եւ փառակից եւ ի գործակից նորին Հոգին, որ քննէ զսերս Աստուծոյ, որ են եռանձնեայք, եւ միակամ աստուածութիւն, որում եւ պատիւ յաւիտեանս,

Ց Ա Ն Կ Գ Ի Ո Ց Ս

- Նախադրութիւն կանոնգրոց
- Ա. Թէ արարածք ամենայն բարի են
- Բ. Վասն մկան յաղ անկանելոյ
- 1670 Գ. Վասն տաշտի կամ տափուրէի կամ մորթաշի
- Դ. Վասն պղծեալ կերակրոց
- Ե. Վասն կատուակերի
- Զ. Վասն մկան ի հնձան անգելոյ
- Է. Վասն մկան որ ի թոնիրն [անկցի]
- 1675 Ը. Վասն գայլառի, շնառի, նետով հարելոյ, ի փոս անկելոյ եւ այլն
- Թ. Վասն սուրբ անասնոյ, որ ի ծնունդն մեռանի
- ժ. Վասն ալլազգոյ զկերակուր մեր ըմբռնէ
- ժԱ. Վասն ալլազգեաց, որ զայգի քաղիցեն
- ժԲ. Վասն զաման նոցա ի պէտս [մեր ատել]
- 1680 ժԳ. Վասն ալլազգի թէ լեկեղեցի մտանիցէ
- ժԴ. Վասն մկան որ ի մեղուանոց անկանիցի
- ժԵ. Վասն կարասի ջուր մտելոյ
- ժԶ. Վասն հալ կնոջն, որ լինի առ քուրդի պատճառս քրիստոնէութեան
- ժԷ. Վասն կնոջ, որ առ քուրդի նստի
- 1685 ժԸ. Կին, որ շնալ ընդ քուրդի
- ժԹ. Վասն որք կամաւ զդատերս ալլազիսն տան
- Ի. Վասն որք զմանկունս ալլազգեաց ի ստեանց կերակրեն
- ԻԱ. Վասն որք զալլազգեաց ծնունդ ի մկրտութիւն անուն
- ԻԲ. Վասն կրանաւորաց, որ լինին սնդիկնոսք
- 1690 ԻԳ. Վասն մկրտութեան քրիստոնէից եւ լուսաւորութեան սուրբ աւագանին
- ԽԴ. Վասն սուրբ խորհրդոյն հարցման պատասխանի
- ԻԵ. Վասն հաղորդ տալոյ զգուշութեան
- ԻԶ. Վասն կանանց, որ ի ծնունդս մեռանին
- ԻԷ. Վասն կնքոյ զգուշութեան այս է
- 1695 ԻԸ. Այլ թէ անզգուշութեամբ իշացաւ ոք լեկեղեցուրն
- ԻԹ. Վասն վերաբերութեան քահանայի
- Լ. Վասն որք զանձինս իւրեանց մարդահանութեամբ թաքուցանեն ի ներքս
- ԼԱ. Վասն երազափորութեան
- ԼԲ. Վասն նուիրելոյ ի քահանայութիւն
- 1700 ԼԳ. Վասն որ գրաստ նստին եւ թացանան
- ԼԴ. Վասն քահանային, որ պատարագին հարկիւ ձայնեն առ նա վասն կնքոյ
եւ հաղորդելոյ հիւանդին
- ԼԵ. Որք զմանկունս վարձու կամ հիւանդի աւետարան [կարդան]
- ԼԶ. Վասն թէ ի պատարագին պարտ է քահանային անիծք հանել
- 1705 ԼԷ. Վասն անյուսից բռնաւորաց որ գայցեն, եւ ես առ հարկի շնորհուկս արարի
- ԼԸ. Վասն անսուրբ անասնոց զենմանց
- ԼԹ. Վասն հար մանկան, որ գնաց ի գինըմպութիւն
- Խ. Վասն մարտի թէ անվանի ի քունն ի վերայ մանկանն եւ մե[ռանի]
- ԽԱ. Վասն գողոց, որ ըմբռնին եւ ի փայտաքաշին այս է
- 1710 ԽԲ. Վասն մարդոյ, որ ունի անասուն խեռ կամ ձի կից[ընկեց]
- ԽԳ. Վասն մարդ ի ճանապարհ լուղարկելոյ ալլուս
- ԽԴ. Վասն [մանկան], որ անկնոնք մեռանի
- ԽԵ. Վասն փախուցեալ գերոյ

- 1715 ԽԶ. Վասն զանազան ողորմութեան առնելոյ
 ԽԷ. Վասն ամուսնացեալ քահանայի զգուշութեան
 ԽԸ. Վասն մատնողաց, սպանողաց, այրեցողաց, եւ կին, որ զտղայն ի փորին
 սպանանէ, այս է վախոսն
 ԽԹ. Վասն այնոցիկ, որ ընդ մերձադրին արկանեն զինզում
 Ս. Պէսպէս վերաքառութեան խոստովանական բան ի կանոնաց հրամանաց
 հարցումն
 1720 ՍԱ. Վասն կանաց, որ լղի իցեն, մի՛ մերձեցի առ այր իւր
 ՍԲ. Վասն այնոցիկ, որ երդնուն ի շնութեան
 ՍԳ. Վասն որ շնալ ի բողոսան
 ՍԴ. Վասն այնոցիկ, որ սերմ որդեծնութեան ապականեն
 1725 ՍԵ. Վասն այնոցիկ, որ ճմլն զմարմինս իւրեանց շաւաղմամբ
 ՍԶ. Արուսդիտ[ացն եւ անասնագիտացն]
 ՍԷ. Վասն պոռնիկ կանանց, որ զմանկունս սպանանեն
 ՍԸ. Վասն գողոց եւ սպանողաց, որ ըմբռնալ սպանանին
 ՍԹ. Վասն այլազգեաց, որ արշաւանս առնիցեն
 1730 Կ. Վասն այրեցողաց
 ԿԱ. Վասն, որ հակառակեն՝ յեկեղեցի շինեն
 ԿԲ. Վասն այնոցիկ, որ զկին վատազգն համարին
 ԿԳ. Վասն քահանայից, որ հրապարակեն զմեղս խոստովանութեան
 ԿԴ. Վասն եթէ էշ կովու վերալ կամ քաղ ոչխարի
 1735 ԿԵ. Վասն որք ի խառնակումն անասնոց հալին
 ԿԶ. Վասն շորեքշարաթի եւ ուրբաթի
 ԿԷ. Վասն ապահարիցն կանաց
 ԿԸ. Վասն քահանայից չարագիւր
 ԿԹ. Վասն կնոջ քահանայի
 1740 Զ. Խրատ կանոնականք
 ԶԱ. Վասն կնոջ որս առնելոյ շէ պարտ ամենեւին
 ԶԲ. Վասն մաւր, որ ընկղմեցուցանէ զմանկունս յանկողնի իւրում
 ԶԳ. Վասն երկաթաբարձ քահանայի, որ կինն մեռանի
 ԶԴ. Վասն կանանց, որք կապեն զարս իւրեանց քինու
 1745 ԶԵ. Վասն ամուկ կանանց
 ԶԶ. Վասն այնոցիկ, որ անկար դոն լուծանել զկուսութիւնն
 ԶԷ. [Վասն կանաց], որ ի ծնունդս մեռ[անին]
 ԶԸ. Վասն այնոցիկ, որ անասնոց ձեռն ածիցեն
 ԶԹ. Վասն գողոց հասարակաց՝ կարգ այս է
 1750 Զ. Վասն այնոցիկ, որ ի սրբութիւնս Աստուծոյ ձեռնարկեն
 ԶԱ. Վասն սիրելեաց, որ բանան զգերեզմանս մեռելոց
 ԶԲ. Վասն երգմանահարաց
 ԶԳ. Վասն յիշոցատուաց, որ զբարկութիւն Աստուծոյ շարժեն անձանց
 ԶԴ. Վասն այնոցիկ, որ զքահանայսն անարգեն
 1755 ԶԵ. Վասն որք սուգ ունին մեռելոյն
 ԶԶ. Վասն այնոցիկ, որ վաշխ եւ տոկոսի առնուն
 ԶԷ. Վասն այնոցիկ, որ ուխտեն եւ ոչ կատարեն
 ԶԸ. [Վասն այնոցիկ] որք զպտուղ եկեղեցւոյ ոչ տան
 ԶԹ. Վասն այնոցիկ, որ տաւնի կամ կերակրէի ոչ երթան ի դուռն եկեղեցւոյ
 1760 Զ. Հարցումն նոյն քահանայի յաղագս երիցն նաապատեաց՝ յորում մասկեր
 ոչ գոյ՝ պատասխանի

- ԴԱ. Վասն որ կոտորվին խոստանան եւ ոչ պահեն
 ԴԲ. [Վասն] որ զփոքր զմանկունան պսակեն
 ԴԳ. Վասն այնոցիկ, որ զխաշ առ այլազգեաց տեսանեն եւ անփոյթ առնեն
 ԴԴ. Վասն նապաստակի մսոյ եւ մեղելոտոյ
 1765 ԴԵ. Վասն ազգի ազգի հմայութեան եւ շար սովորութեան
 ԴԶ. Դարձեալ նոյն Դաւթի ցանկալի վարդապետի՝ վասն ի ծառոյ անկանելոյ
 ԴԷ. Վասն շար առաջնորդաց եւ ցահանայից

